



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1623-1626

17

U-94

465

p. 39

ԴՐՈՒԱԳՆԵՐ
Ս. ԳՐՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ԴՐՈՒԱԳՆԵՐ



Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
1904



~~Handwritten scribble~~

206-40



ԴՐՈՒԱԳՆԵՐ

Ս. ԳՐՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՆՆԷՆ



~~3159~~
9099

391.99

ԳՐՈՒՆԳՆԵՐ

Ա. ԳՐՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ



ԳՐԵՑ

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ



Կ. ՊՈԼԻՍ

ՑԳԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ

1904

9099

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսներլար Եօզուու, Կ. Պոլիս

206
40

«Եւ ամենուն տեսիլքները կնքուած գրքի մը խօսքերուն պէս պիտի ըլլան ձեզի, որ կարգալ գիտցողին կուտան, ու կ'ըսեն. Կ'աղաչենք, ասիկա կարգա. ու անիկա կ'ըսէ. Չեմ' կրնար, վասն զի կնքուած է: Եւ այն գիրքը կարգալ չգիտցողին կուտան, ու կ'ըսեն. Կ'աղաչենք ասիկա կարգա. և անիկա կ'ըսէ. Կարգալ չեմ' գիտեր»:

ԵՍԱ. ԻԹ. 11. 12

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۱۸ نیسان ۱۳۲۰ و ۱۵ سفر
۱۳۲۲ تاریخلی و ۳۴۱ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر

ԻՐ

ՀՕՐԸ

ՀԱՅՐԱՊԵՏ Մ. ՍԵՐՈՎԲԵԱՆԻ

ՈՐԴԻԱԿԱՆ

ՅԱՐԳԱՆՔՈՎ ՈՒ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆՈՎ

ԿԸ ԶՕՆԵ

ՀԵՂԻՆԱԿԸ



ԴՐՈՒԱԳՆԵՐը կը բաղկանայ երկու գրքերէ . առաջինը նուիրուած է Հին Ուխտի , եւ երկրորդը՝ Նոր Ուխտի պատմութեան մեծ պատահարներուն :

ԴՐՈՒԱԳՆԵՐը Ս. Գրոց մեկնութիւն մը չէ , եւ ո՛չ ալ ամբողջական պատմութիւնը Անոր : Խնայուած է Կրօնի պատմութեան մեզի աւանդած մեծ դեպքերուն : Մեր աշխատութիւնը եղած է իրարու մօտ բերել անոնց ցրտուն գիծերը , եւ անոնց սեղմ ու կուռ համադրութիւնովը կազմել ԴՐՈՒԱԳՆԵՐը , որ հակառակ իր միտքի ու բանաստեղծական յօրինուածութեան , զուրկ կը գտնուի Աղօթագիրք ըլլալու հանգամանքէն ալ :

ԴՐՈՒԱԳՆԵՐը շանացած է դուրս ցցուեցնել պատմութեան այն թելը , որ Ասուածաշունչական Յայտնութեան հանգոյցները կը յօրինէ , անով աւելի եւս շեշտելու համար այն խորհրդաւոր կապը , որ Հինի ու Նորի ազուցումը կ'ընէ Ուխտի պատմութեանը մեջ :

ԴՐՈՒԱԳՆՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՆԱԿԱՏԱԿ ՈՒՆԻ . Ա. — ԸՆ-
թԵՐԳՈՂՆԵՐՈՒՆ ՏԱՂ ՉՈՒՏ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԿՆԱԿԱՆ
ՈՂԻՈՎ ՈՒ ՆԻՒՔՈՎ ՉՐՈՒԱԾ ՉԻՐԲ ԱՐ . Բ. — ԻՐ ԸՆԹԵՐ-
ԳՈՂՆԵՐԸ ՏԱՆԻՂ՝ ԻՐ ԱՐՈՒՆԱԿԱԾ ՆԻՒՔԵՐՈՎԻՆ ՈՒ
ՔՆԱՉՐԱԿԱՆ ԳՈՒՅՈՒՄՆԵՐՈՎ (indication), ԲՈՒՆ ԻՍԿ
Ս. ԳՐՈՅ ԸՆԹԵՐԳՈՒՄԻՆ , ՈՐ ԱՆԵ ԺՈՂՈՎՈՒՂԻՆ ԿԱ-
ՄԱՐ ԱՄԿՆԵՆ ԱՆՏԵՍՈՒԱԾՔ ԵՂԱԾ Է :

ԱՌԱՆՅ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԿԻ ԸՆԹԵՐԳԱՆՈՒՔԵԱՆ
ՕԺԱՆՂԱԿՈՒՔԵԱՆ , ՆՈՅՆ ԻՍԿ ՉԻՏՆԱԿԱՆ ԸՆԹԵՐԳՈՂԻՆ
ԿԱՄԱՐ ԿՆՔՈՒԱԾ ԳԻՐԲԸ ԱԻՏԻ ԱՆԱՂ ԴՐՈՒԱԳ-
ՆՆԵՐ :

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԿԱՊԵՏ

Ա. ԳԻՐԲ

«ԱՆՈՐ ՉԲԵՐԷՆ ԱՄԿՆԵՆ ՂՐԺ-
ՈՒԱՐԻՆՔ ԵՒ ԱՄԿՆԵՆ ԱՔԻՆՔ ,
ԾՆՆՈՂՈՅՐ , ԻՐ ԲԱՆԵՐՈՒՆ ՆԱԿ
ՉԱՊՏՆԻՔ ԿՐ ԱՐՈՒՆԱԿԷ :

ՀԵՐՈՆԻՄՈՍ



ԳՐՈՒԱԳՆԵՐ



Ա.

ՊԻՂԾ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ



ՆՏԱՌՆԵՐՈՒ ծոցը կը վազեն յոգնած մարդիկ :

Ստուերներ կը տարուբերին ոստախիտ ծառերուն տակը , ուր հինօրեայ՝ ինկած կոճեր մէկ մէկու վրայ կը քնանան , և որոնց մէջէն տխուր նուագներ՝ գիշերի ալելուն կ'երգեն : Այդ բաղեղներու սարփինայովը շաղապատուած անտառներու խորը , ուրախ ժպիտներ՝ հոգիներու սեւովը ծրագրուած ,

երկրի վրայ մնացորդները կը թուին ըլլալ դե-
ժոխքի մը որ իր աշխարհայնութեան մէջ ,
տխտէր , շատ տխտէր սաւառնում մը կուտայ սըր-
տերու : Մութին մէջ անտաւը խորհրդաւոր բա-
ռեր կը թոթովէ ականջին անոնց՝ որոնք աստուած-
ներու ձայնը կ'ուզեն լսել գիսախուիւ ճիւղերով իրա-
րու պլլուած ծառերուն սարսափեցնող սօսափներէն :

Հոս ու հոն հրէշային քրքիչներ կը վազեն
դուրս ժողատ բերաններէ , որոնք լաւա ժաթքող
հրաբուխները կը մանրանկարեն : Աստուածներու
բազիններուն ոտքին տակ տուայտանքով կը հօըն-
դան գինի փսխող ժողովուրդները , և շուայտ ցայ-
գատօներուն կափկափումները սարսուռներու պէս
կը չչեն անտառի խորերէն : Սեղաններ՝ հաճոյքի
ու մեղկութեան արձանացում , գալարուող օձե-
րու պէս կ'արտաչէկին : Արբշիւ ու պագշտ երա-
ժշտութեան վայրենի գանգիւնը ոստաքանց ծա-
ռերէն գուժող բուերուն արհաւիրտ վայրենը կը
կրկնորդէ : Ծարժուն քաղաքը կը տարուբերուի իր
հսկայ , տիտան կամարներուն ներքեւ , և ոսկեշուք
աղբիանդներէն հեռու , գայլերու և վագրերու
այս կայքին ծոցը ուր ամբողջ ժողովուրդներ կը
սաքրին : Կմախք ժայռերը կը սարսուռն վերեւը
ջրերու վազքին , ուր գիշերի դիցուհիներ , իրենց
մտածին՝ հեղգ մարմինները կը լուան . քարաբնակ
թռչուններ՝ իրենց խաղաղ քունը կորսնցուցած ,
գիշերին լուսթիւնը կը ծեծեն մաշկեայ թեւերով :

Հեռուէն , անտառին սրտէն բարձրացող հուր
ցնցուղներով փետուրներու ցրցքնումը կը դիտուի,
ցնորակոծ խուճապներու սաւառնումին պէս , ու
զօհի կրակներուն տակ մարմարը կը լուծուի , կը

հեղեղի հրացայտ հոսումով : Հետաքրքիր , ան-
համբեր մարդեր խորհուրդ կը հարցնեն կուռքե-
րուն , կախարդներուն , վհուկներուն և նշանա-
գէտներուն , և անոնք պատասխան մը չեն հաներ
իրենց բերնէն : Հիմա քուրմերն են , աստուածնե-
րու այդ յիմար պաշտօնեաները , որոնք իրենց
ապարօշին տակ չքլած գլուխին մէջ ժողովուրդին
ցաւը կը ծնցնեն , լուսափետուր երանութիւններու
գոյնով , հիմա քուրմերն են որ խելակորոյս ժո-
ղովուրդին կեանքը պատուանդան ըրած , թովիչի
կախարդանքն ու հմայքը կը խառնեն սեղանա-
պիղծ մարդազոհներուն : Ծնծղաներ կը շաչեն կրակ-
ներու շուրջ , և Աստարովդներ՝ իրենց չքնաղ անդ-
րիններով՝ մայրենի վիշտը կը ծաղրեն այրուած որ-
դիներու կսկածանքէն արբշիւ : Հովերէն ծեծուած
ծառերուն խղուրդիւնը խորհրդաւոր ծիծաղը կը
հիւսէ մարդերու ապուշ պաշտամունքին հանդէպ ,
որուն զոհի ձեններումը գայլերու և շնագայլերու
ախորժակը կը սրէ : Ծամբուշ կագաւներու ոտնա-
ձայնը և ծափերու աղմուկը կը ճեղքեն համատա-
րած մութին վարագոյրը , որ տեղ տեղ այրուած
և ծակծկուած է սեղաններու բոցերէն : Նուիրա-
կանութեան կեղծ քօղով մծղնեայ արարողութիւն-
ներ , անտառներուն շահապետող կին-Աստարովդ-
ներու մարմարէ լանջքերէն լպիրշ պոռնկութիւն-
ներ կը հոսեցնեն :

— « Ո՛ր մոռցուած պոռնիկ , քնար ա՛ն ու
քաղաքին մէջը պտտէ , աղէկ դարկ , շատ խաղ
կանչէ , որ քեզ յիշեն » . (Ես. ԻԳ. 16) :

Այս խորհրդաւոր ձայնն է որ կը սուբայ Յա-
ւրտեանականութեան ծոցէն խորշակահար հովերուն

գրկով : Տակաւ կը մարին աստուածներուն ճրագները , անտառներն հրդեհող զոհի մնացորդներուն հետ : Մարդազոհի ճենճերումները խունկերու և բեւեկնիի այրումին խառնուած , տակաւ կը նսարանան , կը շոգիանան կաղամախներու , թմբենիներու և սօսիներու անտառին մէջ : Երգերը կը դադրին ցուրտ հեւքով , դադրող պաշտամունքներու և կեանքերու հոնդիւնին պէս : Ո՛ւր է ժողովուրդը , ո՛ւր են շամբուշ երգերը , զոհերը , սեղանները ցայգատօներուն , ո՛ւր են կազաւները մերկ ոտքերուն և բարձերուն , որոնք ամբարիշտ գաղտնախորհուրդով մը կը թափառուկոտէին քաղքէ քաղաք , անտառէ անտառ , մեղմեխ նուիրականութեան սնտոի բարբառջանքներով : Ո՛ւր են քաղաքները որոնք օր մը առաջ բակկոսատօներով կը խնկուէին : Հիմա անպիտան թուփերու և բարձր ոստերու կը նմանին անոնք , և անոնց մէջէն ցաւագար հիւծուած կեանքն է որ կը պուայ . « Երիկամունքս ցաւով լեցուեցաւ ու ծննդական կնով ցաւերուն պէս ցաւեր բռնեցին զիս . անանկ կծկուած եմ որ չեմ կրնար լսել . անանկ խռոված եմ , որ չեմ կրնար տեսնել : Սիրտս շփոթեցաւ , արհաւիրքը զիս դողացուց , իմ ուրախութեանս գիշերը ինձի սրտադողի գիշեր ըրաւ » . (Ես . ԻԱ . 3—4) :

Աստուծոյ պատուհասը կրակէ լեզուով մը լափած էր ամէն ինչ այդ լպիրշ պաշտամունքներէն , որոնք կրօնքի մաքուր ոգին անբարոյացուցած էին :

Եւ հիմա անիծապարտ յիշատակ մը միայն կը խօսի իրենց մոխիրներէն :

Բ.

ԵՐԿՆՔԻ ԿՐԱԿԸ

ԾՆՆԴ. ԺԴ. — ԺԹ.

202
40

ԱՂԱԽԱՐՆԵՐ հովիտները կը գեղերփնեն : (Տե՛ս Եսայի ԼԵ. 1—2) :

Հովիւ կեանքերու անցուդարձը ջղուտ ոգեւորութիւն մը կը սփռէ անապատի թուլցնող արեւներուն տակ : Յերեկի տօթը՝ մեղկ լուսթեան ծոցէն գաղջ բզզիւն մը կը մաղէ հօտերուն ու հօտաղներուն վրայ , որոնք տաք աւազէն խոյս կուտան , հովանիի մը տակ պահուըտելու համար : Յանկարծ ժողովուրդներու իրերընդդէմ ախոյենութիւնը սուր սուրի կը զարնէ , նիզակ նիզակի : Նահապետներու կեանքը վահաններու աղմուկէն կը ձեծուի . և ոչխարներն ու մանուկները ապաւէն կը փնտռեն յոգնած , յոգնած՝ տաղտուկով (ԺԴ. 1—12) : Կեանքը նիստ չունի : Արեւին տակ , գիշերին մէջ , անջուր ու չոր անապատներուն անցորդն է անի ,

ոտքին տակ աւազ , գլխուն վրայ արեւ , որոնք կ'այրեն զինքը ամէն դէ :

Տիրոջ մով զօրացած մարդը պատերազմէն կը դառնայ (ԺԴ. 16) : Արիւնէն, քրտինքէն ու փոշիէն ազտտուած իր պատկառելի դէմքը յանկարծ կը դողայ Անհունին ձայնէն : Պատարագ մը կեանքին, յալթանակին ու աղագային համար (ԺԵ. 9) : Զո՞ն մըն էր արդեօք , թէ փորձու թեան նուէր մը , որուն կը նայէին անապատի ամայութիւնն ու խաղաղութիւնը : Գիշատիչ թռչուններ հաւառի մթնոլորտը կը ձեղքեն . անգղեր , ուրուրներ կը կը դառնան շարունակ դէմ դիմաց շարուած շաղիխին վրայ , ուրկէ յոգնած ձեռք մը՝ ցուպի տատանքով հեռու կը քշէր մսակեր թռչուններուն թեւաբախ խուզարկութիւնները (ԺԵ. 10—11) :

Բայց ինչո՞ւ արեւը շուտ կը փախչի իր զենիթէն , ու կ'երթայ իր հանգրուանները փնտուել անշարժ տարածութեան , անապատի հեռաւոր հորիզոններուն խորը (ԺԵ. 17) : Մամբրէի կաղնին կը սեւոտի պարտասած մարդուն վերեւ , որ իր թոյլ մարմինը կը փռէր սաւառուն ոստերուն ներքեւ (ԺԵ. 12) : Այլ դադրած էին լոյսի ցնցուղները . աւազը իր ուլասիսներուն մորձ դալարիքին մէջ լուծած էր ցերեկի վառ կարմրութիւնները , որոնք արեւով ու արիւնով հիւստուած էին Սողոմի սահմաններէն մինչեւ Սառայի վրանը , որուն մէջ ամուրք կը մտատանջէր (ԺԶ. 4—5) : Ծերունին անապատներու նահապետը , աչքերուն վրայ զգաց մութին հիւսած սեւ ժանեակը , որուն ծակտիքներէն կը լողային երկնակամարին ոսկի գամերը և իր արտեւանունքը կապարներ կը կախէր թար-

թիչներուն ծայրէն : Պէտք էր մոռնալ պահ մը օրուան խոնջէնքը :

Անդաւակ հօր տառապանքը կսկծուտ զգուանքն եղած էր իրեն , նոյն իսկ քամահրելու համար վահանը , զոր Եհովան իր կուրծքէն կախած էր (ԺԵ. 1) : Մոռնալու , մոռցուելու պէտք կ'զգար հոգին : Բայց ինչո՞ւ հանգիստը խոյս կուտայ իրմէն , ինչո՞ւ սիրտը կը տրոփէ նոյն իսկ անքուն խաղաղութեան մէջ (ԺԵ. — 12) :

* * *

Սիգդիմի դաշտը իր դրախտներուն մէջ անօրէնութեան խանձարուրը կը պատրաստէ : Մծղնեան , շնացողը , պոռնիկը , արուագէտը , իգացողը զիրար կը գերազանցեն : Նախատինքն ու մեղքը՝ ցոփութիւններով զինուած՝ ամբռութեան գաւիթները կը պղծեն , ազտոտ կեանքն է որ կը ժժայ Սողոմէն մինչեւ Ադամայ , ու անկէ մինչեւ Սեբոյիմ : Ո՛ւր է պարկեշտութիւնը , ո՛ւր են առաքինութեան հետքերը . . . Բարոյքի տաճարին շքեղութիւնը ջնջուած է սրտէն այն քաղքենիներուն , որոնք իրենց կեանքը կը սահմանափակեն կենսատու հաճոյքին և նմանները զիտնալու հրէշութիւններուն մէջ : Լպիրշ տօներու ասպարէզ մը դարձած են անոնք : Ծրագներն ու ջահերը կը վառին մինչեւ լուս , շոգիացող սէրերու և խանձող համբոյրներու հեշտանքէն գինովցած : Աստուածները մարդերուն և մարդերը աստուածունիներուն հետ կը պարեն զիրկընդխառն , և անոնց քնատ աչքերը մշտաբաղձ սէրերու և պոռնիկ մտածումներու հայելին կը ցոլացնեն : Աշտարակներու դիտանոց-

ները կը տօնախմբեն յաւիտեան՝ հաճոյքներու նախատօները, անհուն լուսավառութիւններու մէջ խելդելու համար. օհ, խիղճը, արթնցող գիտակցութիւնը: Բողոք չկայ ալ. յաւիտենական պատիժը օրհնութեան մը պէս կը խմեն: Ո՞վ են գիշերի ցփութիւնները ոսկեդրուագող այդ շամբուշ պարողները . . . :

Յանկարծ լոյսերը կը բռնկին. և դրախտներու դաշտը կը հրդեհի երկնուստ իջնող հրեղէն լեզուակներով: Ծծումբը կ'եռայ քաղաքներուն վրայ. լացերու գետաջորդումը կը խելդուի լավայացած բիւրերու մէջ: Տաճարները կ'իյնան մարդուն և աստուածներուն հետ: Կրակը կը պատժէ, կը պատուհասէ մարդերը անխնայ, առանց տարիքին ու սեռին մէջ տարբերութիւն մը դնելու: Մագերն ու մօրուքները իբրև խոիւ կը ծառայեն քարերը լուծելու: Խուճապ ամէն գի . . . :

Ամբոխը մէկզմէկ կը կոխկրտէ, ամէն մէկ քայլափոխի հրեղէն ջրվէժներու նոր հալք մը, ծծումբէ յորդահոս տարափի մը սահանքը կը բացուի փախչողներու գլխուն: Ի զո՞ւր ժողովուրդը՝ քուրմերէն առաջնորդուած, մեհեանները կը վազէ աղօթելու: Օգուտ չկայ. իրենց աստուածներն ալ կ'հաճիւնանան ժողովուրդին պէս: Աղէտքը աղէտքին, կրակը կրակին կը յաջորդէ անընդհատ Գիշերը կսկծանքով կուլայ, երբ ամէն կողմէ կրակը կը ճարճատէ, Մեռեալ Ծովուն ընդերքը պատուելով: Ո՞ւր են ժպիտները, ո՞ւր՝ ցփութեան արբաշոտ ցայգատօները:


Ալ հետք մը չկայ անոնցմէ:
Հեռուէն աչքեր ապուշ ապուշ կը դիտեն

քաղաքները: Պտղաբեր արտերէն ուրախութիւնն ու ցնծութիւնը վերցած է այլեւս. այգիներու մէջէն երգերու արձագանգը մարած է ու չկայ կենդանի ոտք մը, որ գինի կոխէ հնձաններու մէջ (Ես. ԻԲ. 10): Քաղաքները մարած են հիմա. . . ափ մը մոխիր, բուռ մը ծծումբ թողլով Մեռեալ Ծովին, որ շիջած քաղաքներուն աճիւնները կը թաղէ իր սև՝ մռայլ ջուրերուն տակ: Յուսահատներու արցճնքն է արդեօք այդ ծովը, թէ վրէժի, խղճի անթարթ աչքը, որ պատուհասին ահաւորութեան կը նայի շարունակ: Իր փախչող քայլերուն վրայ տատամտտ կինը, յետսադարձ ակնարկէն կը քարանայ աղի արձանով (ԺԹ. 26): Լպիրշ աղջիկներ, ամբարշտութեան խանձարուբէն զերծած, զանի կը կերպարանեն Սեզովրի մօտիկ քարայրին մէջ (ԺԹ. 31): Գինին, խելայեղող գինին, Նոյի մերկութեան արհաւիրքը, շամբուշ աղջիկներու ձեռքով ձերունի հօր մը կը մատուակուի, աշխարհի մեծ պղծութիւնը, սերնդագործութեան մձղնէութիւնը չէնքելու համար (ԺԹ. 32—36): Ու հիմա գիշերի պէս սեռութիւն մը կը մթազնէ Մովաբին և Ամմոնացիին դիմագծերը, քարայրի սարսուեցնող անբարոյութեան իբրև դատախիւքը աղուէսագրոյժ խարանուած (ԺԹ. 37, 38): Քարայրը կը հեծէ լոյսի կարօտ ծարաւով և անգիտօրէն մեղանչող Ղովտի տառապանքը անվերջ կը մանուի գիշերներու յաջորդականութիւնով:



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՈՂՐ

ԾՆՆԴ. ԻԷ. — ԼԲ.



ԵՌՆԷ լեռ որսորդները թեթեւ
այծեամներու ետեւէն կը վազեն ,
ծերունի հօր մը վերջին տարինե-
րու ցաւը մեղմելու համար (ԾՆՆԴ.
ԻԷ. 1-4) : Աղեղները կը ձգտին նետերու երկայնքէն,
որոնք կը չչեն օդերուն մէջ , քարերուն կը զարնուին
և աւազին մէջ կը խրին : Մարդկային դէմքերը
կը խանձին արեւէն : Ու արեւէն զգուած այծեամ-
ներ աւազին հետ կը շփոթեն իրենց մութ կարմիր
թիկունքը , արեւին անհաղորդ սպիտակ փորեր-
նին տալով դէպ ի վեր : Յանկարծ իրենց կայտառ՝
առոյգ մարմինը երկչոտի վազք մը կ'առնէ . որ-
սորդներու առթած խուճապէն , անոնց լերկ
ականջները կը ցցուին : Լեռներն ու անտառները
նոր շարժունութիւն մը կ'երկնեն իրենց ծոցը ,
վախկոտ անասուններու խշրտոցներէն : Երբեմն
կանգ կ'առնէ խումբը խեղճ կենդանիներուն ,
որոնց գեղեցիկ աչուրները կը յետսաղարձին վը-
տանգին մեծութիւնը չափելու համար : Եղջերու-

ները , թեթե ու բարձրագիր , կը տատամստախն իրենց կայքերուն մէջ , ու եղջիւրնին ցցած դէպ ի վեր , կամ հակած դէպ ի թիկունքը , կը խուսեն հետապնդողներու յոգնած զուարթութենէն :

Եսաւ կը քալէ անտառէ անտառ , կապարճը իր ուսէն կախ , նետերով լեցուն . տէգն ու նիւզակը երբեմն իբր յենացուպ կը ծառայեն վերելքի միջոցին , երբ պասուքը իրենց կոկորդները կը մազկոնճէ : Քարերը կը թնդան պարապ գոգուած քներու պէս :

* * *

Զուարթ յետադարձ իրիկուան զովին . . . :

Եսաւի սիրտը կը խնդայ իր թաւ՝ մազոտ մարմինին մէջ . երգը կը մուտայ անապատի խաղաղութիւնը , որուն մէջ Անհունը , Սեմակահնեբու Աստուածը կը թագաւորէ : Հօրը հոգին զինքը պիտի օրհնէր մեռնելէ առաջ (Ի՛. 4) : Իր որսական յոգնածութիւնը պիտի փոխարինուէր ընտանեկան օրհնութեան մը փայփայանքով : Եւ օրուան մը տառապանքը դարերու կեանքովը պիտի վարձատրուէր :

* * *

— « Հիմա մօտեցիր , ու զիս համբուրէ , Որդեակ իմ . . . անա իմ որդւոյս հօտը Տիրոջը օրհնած արտին հօտին պէս է : Ուստի Աստուած տայ քեզի երկնքի ցօղէն , երկրի պարարտութենէն , ու ցորենի և գինիի առատութիւնը » . (Ի՛. 26. 27) :

Ծերունի հօր սա բառերը կ'արձագանգէին մութին մէջ խաբերայ ծպտումով Եսաւին վրայ , մինչ Եսաւ օճախին հանդէպ կը մրկէր ցերեկի

արեւին խածուածներէն վերջ : Բայց ինչո՞ւ մութը աչքերուն լոյսը կորսնցուցած հօր մը բարեմըտութիւնը : Վրէժխնդրութեան դժուար մը կը պոռթկայ օրհնութեան դողին դէմ : Մութը կը հեծէ նենգութեան հանդէպ ծնած Եսաւի սարսափէն , և խաւարը կուլայ , լացի «խիստ մեծ ու դառն աղաղակով» (Ի՛. 34) : Ու հիմա ջախջախուած օրհնութեան մը մնացորդները միայն կը սարսուացնեն զիշերներու ամայքը (Ի՛. 38) :

— Իմ հօրս սուգի օրերը մօտեցան , կը պոռայ Եսաւ (Ի՛. 41) :

Քալէ՛ , քալէ՛ , ո՛վ անցորդ . քալէ՛ այդ անապատներէն , որոնք օր մը քեզի տրուած օրհնութիւնները պիտի բուսցնեն : Մի՛ նայիր ետիդ , ուր խորհուրդներու սեւութիւնը ընտանեկան երջանկութիւնը կը պղտորէ : Որսորդը այժեմնեբէն զգուած , քեզի կը տնչայ : Քալէ՛ , դէպ ի Սառանու երկիրը , քու ապաստանարանդ :

Եւ անցորդը կը քալէ , ճամբու մախաղը ուսին , երկչոտի այժեմնական անուշ աչքը նետելով իր շուրջ , ուր լուսութիւնը կը խօսէր միայն : Յուսահատ նայուածքը , որուն մէջ կէս զղջացող սիրտ մը կը ծրագրուէր , անընդհատ կը չափէր շրջակայ պարապութիւնը , ուր զինքը կը տատանէին իր ոտքերը (Ի՛. 10) : Յոգնած՝ իր փախստական վշտէն , յոգնած արեւէն ու աւազներէն , ալ չէր կրնար իր մտքին մէջ կենդանի պահել իր ընդունած օրհնութեան կենսունակութիւնը : Խեղճ տղայ , հազիւ պատանի , պանդխտութեան սրբամաշուքը կը զգար իր մէջ , հօրմէն ու մօրմէն զրկուած : Ինչե՛ր պահուած կային իրեն համար ,

ապագային մէջ : Ո՞վ պիտի պաշտպանէր զինքը այդ ամառութիւններուն գիրկը , օտար երկրի վրայ ու օտար երկնքի տակ — որուն ճամբարիքը անձանօթ էին իրեն , և որուն վրայ Ռեբեկայի հոգին կ'արտասուէր : Անձանօթ գիւղերու երդիքները ինչե՛ր կ'արթնցնէին իր մտքին մէջ , ուր փախստականի մը վշտին եռուզեռը վրդովանքի պէս դառնութիւնով մը կը մաղուէր , կը խորունկնար : Անհանդարտ ու անհանգիստ , գիշերը ցերեկին կը խառնէր , վայրկեան մը առաջ հեռանալու իր հայրենի տան սահմաններէն , ուր վրէժխնդիր աչքեր սարսուեցուցած էին զինքը : Յանցաւորի մը խղճի խայթը կը քալէր իրեն հետ ա՛յն վայրկեանէն , երբ իր մտքին մէջ արթնցող սա համոզումը շարունակ կը խօսէր իրեն . « գոցէ՛ հայրս զիս շօշափէ , և ես իր աչքին խաբողի մը պէս երեւամ , և իմ վրաս անէծք բերեմ և ոչ թէ օրհնութիւն » (ԻԷ. 12) : Ինչո՞ւ չի մարի խղճի այդ ձայնը , նոյն իսկ մօր մը կողմէ տրուած ապահովութենէն , ու օրհնութեան մը ընդունելութենէն վերջ : Ու զղջումի ապաշաւը կը փոթորկէ գանկը պատանի հոգիներուն , որոնք ապականութիւն չեն տեսած տակաւին : Ներքին կեանքը կ'ալեծփի . տարորոշ վայրկեաններու տարտամութիւնները վարանումի ցանցեր կը լարեն իր ոտքերուն առջև . խորհուրդներ զիրար կը մկրատեն . որոշումներ զիրար կը փոխնիփոխեն . գաղափարներ զիրար կը խաչատեն անոր մէջ , որ իր ծոցը ամէն բանի բազմանկիւնաւոր կողմերը կը տեսնէ :

— « Երթամ , երթամ , կ'ըսէր , ներսւմ խնդրել եղբորմէս , և ամբաստանել մայրս . . . : Ախ ,

իմ անուշիկ մայրս , որ իր սիրոյ չափազանցութենէն խաբէութեան ոճիրին առաջնորդեց զիս : Մայրս . . . բայց , ո՛չ , պէտք է տառապիլ անոր սիրուն փոխարէն , գերագոյն սէրը գերագոյն զո՛հ կը պահանջէ միշտ . ու ես թո՛ղ այրիմ արեւին տակը իրր գերագոյն զո՛հ մը , որ իր քաւութիւնը կը փնտռէ օտարներու գրկին մէջ » :

Երազը կը շարունակուի իր մտքին մէջ , երբ « արեւը մայրը մտած էր » (ԻԸ. 11) : Գիտաւոր խուճապներ կը կախուին արդարութեան անթարթ աչքերէն , որոնք երկնքի յախճապակին կը լուսազարդէին : Հառաչանքը ընութեան լուին խարշափը կը հծծէր հոն , ուր հիմա խաղաղութիւնը տեղի կուտար սրտի ու աչքի կարմրութիւններուն : Քունը՝ մխիթարութեան հրեշտակը կը փակէ ակամայ յանցապարտին աչքերը , որոնք ընութեան համար կը դադրին « լուսոյ լիճեր » ըլլալէ , երբ անիկա ան տեղի քարերէն մէկը « իր գլխուն տակը դրաւ , ու անտեղը պառկեցաւ » (ԻԸ. 11) : Այդ գիշերին մէջ , ուր քարէ բարձի մը կը դարնուին գլխուն փոթորիկները , մութը կը կերպարանափոխի . քաւութեան ընծան հաշտարար արեւով կ'ոռոգուի , խորհրդաւոր սանդուխի մը ոտքերը երկնքի համբոյրները կը բերեն մեզի , համբոյրներ՝ ուրկէ ապագան կը ծնի և որով գօլունի համբոյր մը կը քաղուի : Հրեշտակներ՝ երկնքի պատգամաւորներ՝ կը լուծեն պատրանքը , սրտմաշուք դողերը յուսահատ հոգիին որ քարէ բարձ մը շնորհով կը նուիրագործէ (ԻԸ. 12—15) : Յուստես միտքը տեղի կուտայ ներսւմի քաղցրութեան որ օրհնութիւններով լեցուն պաշարը կը բերէ իրեն : Ծնունդները

արջառններու զուարթ թիւերը նոր եռուզեռով կը խնկեն հիմա այն ճամբաները, ուրկէ երբեմն ինք մինակ անցած էր, յուսահատի արցունքով (ԼԱ. 17 — ԼԲ. 23) :


Ո՞վ են այդ անցորդները, որոնք փախստականներու պէս գիշերի լուսաւորներուն հետ կը ճամբորդեն, Լաբանի աստուածները գողցած : Կշտամբանքի ձայնը ինչո՞ւ կ'արձագանգէ այսպէս. — «Ինչո՞ւ փախչիլդ գաղտուկ պահեցիր. ինչո՞ւ չիմացուցիր որ ես քեզ ուրախութեամբ և երգերով, թմբուկներով և քնարներով զրկէի : Եւ չթողուցիր զիս, որ իմ որդիներս ու աղջիկներս համբուրէի» (ԼԱ. 27, 28) :

Նայուածքներ, որոնց մէջ բարկութեան սաստմը կայ, շարունակ կը հետապնդեն զինքը Բերսաբէէն մինչև Բեթէլ, Խառանէն մինչև Գաղաադ, ուր նոր հաշտութիւններ տեղի կ'ունենան զոհի սեղաններով (ԼԱ. 54) : Պէտք էր մաքառիլ, սակայն, ապագայ դժուարութիւններուն դէմ, որոնք Եսաւը կը ձեւացնէին, ու դեռ կռիւի ժամը այնքան տխուր յիշատակներ կ'արթնցնէր իր մէջը երբ Յակոբ գիշերին ծածկոյթը կը գործածէր փախստեայ կեանքի մը իբրև ապաւէն : Լաբանի վրէժխնդրութիւնը հազիւ մարած, Եսաւին ատելութեան վախը կ'արթննար իր մէջ : Տանջուող հոգին կը քրոնի մինչև լուս, անձանոթին գօտեմարտը (ԼԲ. 24) իր սրտին, իր հոգիին, իր մարմինին մէջ, — Արշալոյսը կը մօտի (ԼԹ. 26), ամոլաջիլէն խախտուած Յակոբ Իսրայէլը կը ծնի «Փանուէլ»ի բարձունքին վրայ, ուր «դէմ առ դէմ տեսայ զԱստուած և իմ անձս ողջ մնաց» (ԼԲ. 28 — 30) :

Գ.

ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷ Կ'ՐԼԼԱՅ

(ԵԼԲ. Բ. 15 — Գ. 23)



ՌԱՍԷՐԸ, որ կը կակազէ կամ բաներ փնտռելու և կա՛մ իր խորհուրդը սքողելու համար (Գ. 10) Իսիսի և Ոսիրիսի մեհենին գաւիթը կը չափէ : Մեմփիսի Սերապիսոսը ներշնչումի հանդիսագիրը կ'ըլլայ անոր : Իր ցցուած ճակտին վրայէն դուրս նետուող սեւ աչքերը մութը փորող երկու ճառագայթներ կ'երկարեն գիշերին ծոցը : Իր կարճ մարմինին քալուածքը երկչոտ երեւոյթով մը կը վարագուրէր զինքը, երբ յանկարծ գաղափարէն ու թագուն խորհուրդներէն ծնած հառաչանքի հեկեկանքը փայլակի պէս կ'ակօսէր մութ կամարները : Աչքերը՝ մութ ու դաժան՝ գերեզմաններու չափ տոյն, անչափելի կը պատկերէին իր անշարժ դիմագծութեան վրայ, ուր մեհեններու կրանիթը կ'երանգաւորէր : Ի՞նչ են այդ լուսնիստ մեհենները, որոնք մահաբոյր ստուերներ կ'արձակեն անապատին խորը, խորհուրդներու փորձութիւններով :

* *

Մայր ու որդի դէմ առ դէմ եկած էին :

— Դուռն Իսիսի և Ոսիրիսի խորհուրդներուն մէջ պիտի մտնես : Երկար ատեն զքեզ չպիտի կրնամ տեսնել այլ եւս : Մի' մոռնար թէ Փարաւոններու արիւն կը կրես , շուրջդ նայէ . . . եթէ ուզես , օր մը . . . քեզի պիտի պատկանին այս ամէնը » :

— « Ուրեմն կ'ուզես որ հրամայե՞մ այս ժոժովուրդին , որ դայլի , քաջահաւի և բորենիի գլխով աստուածներ կը պաշտէ . բոլոր այս կուռքերէն քանի մը դար վերջ ի՞նչ պիտի մնայ . . . :

— « Ուրեմն դուռն կ'անարգե՞ս մեր հայրերուն կրօնքը , և մեր քուրմերուն գիտութիւնը :

— « Ընդհակառակն անոր կը տենջամ : Բայց անշարժ է Բիրամիտը , պէտք է քալէ ու շարժի անիկա : Ես Փարաւոն մը չպիտի ըլլամ , իմ քնաւայրս հեռո՞ւն է , հո՞ն , վա՛րը անապատին մէջ . . . :

— « Հոգարսիֆ , ինչո՞ւ կը հայհոյես : Կրակէ հով մը զքեզ իմ արգանդս փոխադրեց , և հիմա կը տեսնեմ որ փոթորիկը զքեզ պիտի տանի : Ե՛ս քեզ ծնայ , ու ե՛ս զքեզ չեմ ճանչնար : Յանուն Ոսիրիսի , դուռն ո՞վ ես ուրեմն և ի՞նչ պիտի ընես . . . :

— « Ես գիտե՞մ , Ոսիրիս միայն գիտէ : Թե՛րեւս անիկա պիտի ըսէ ինձի այդ ամէնը : Բայց օրհնէ զիս մայր , օրպէս զի Իսիս զիս պաշտպանէ և Եգիպտոս նպաստաւորէ ինձի : (*)

Մովսէսի « պողպատ հոգին , երկաթ կամքը »՝ կուրծքին վրայ , ձեռքերուն մէջ կը խաչաձեւէր

(*) Քաղուած Եգուարդ Շուրեի « Moïsen »էն :

մօրը օրհնութեան ծաղիկը հոտուրտալու համար , երբ աներեւոյթ՝ անդիմադրելի ձեռք մը անապատը ցոյց կուտար իրեն , և երբ Խորհրդաւոր Գիրքը կը նիրհէր Ամմոն-Ուսի տապանակին մէջ :

— Ա՛յ մնաք բարով Եգիպտոս , մնաք բարով մեհաններ , խորհուրդներ , գիտութիւններ . . . Մադիամու երկիրը , յաւիտենական թափառականներու այդ հիւրընկալը իր դռները կը բանայ իմ առջիս (Ելք. Բ. 15) :

* * *

Բայց Մովսէս՝ անապատի լուսնիստը՝ արեան հեաքեր կը տեսնէ իր ձեռքերուն վրայ (Բ. 12) : Հիմա Եգիպտացի ընծայացուն տեղի կուտայ Մադիամու հովիւին (Գ. 1) : Փարաւոնի ազգականը իրմէն պանդուխտը կը ծնի : Կրօնի խորհուրդներուն մշտաբեզուն թուարկութիւնները կը կածկըլտային իր ալեծուփ գանկին խորը , ուր հիմա քաւութեան և վերածնութեան պէտքը կը ստեղծուէր : Անապատը կը ցնծայ Սեպիորայի հիմերով (Բ. 21) : Գերսամ մեծութեան գիծը կը կազմէ Տելդայի ու Մադիամին (Բ. 22) որոցմէ մին Սիփինքսը կը ցցէ , և միւսը Սինան : Ո՞վ պիտի ընու Սիփինքսի և Սինայի միջեւ երկնցած պարապը . . . :

Քորեփի կը խօսի Էլոհիմի , Եհովայի կայծակներով , Յաւիտենականին ժողովուրդը պատրաստելու համար , երբ Ոսիրիս իր խաբիսխին շարժկտիւրը կը զգայ իր յաղթ կամարներուն տակ : Եգիպտոսի և Արաբիոյ սահմանները գծող Քորեփը , իր ամպածրար գագաթով , ուր իբր խորհուրդներու կեդրոն հրաբուխի բերան մը կը մխար ,

միութիւնը կը խորհրդանշէ՝ անապատին պէս, իր շուրջ վժացող ու հետզհետէ տապալող բազմաստուածութիւններուն հանդէպ: Մովսէս դէպ ի այն կողմը նայեցաւ, երբ ոչխարները անապատին ետին կը հեւային (Գ. 1): — Մէկ անդամով յիշեց այն բոլոր պատմութիւնները, որոնք հովիւ ժողովուրդներէ կը պատմուէին, վրաններու տակ, երբ մութը կամ սոթը զիրենք իրարու մօտ կը բերէր: Ինքն ալ իր հովուութեան օրերուն, լուռ ականատեսը եղած էր այն ուխտաւոր բազմութիւններուն, որոնք կայծակներէ ակօսուած քարէ կողերէն կ'ելլէին Սինայի բարձունքը, կրանիթէ մեծղի ձուլածոյին, որուն ընդերքէն պղինձը կը շողար արեւին հանդէպ, և որուն քարայրները խաւար աչքերու պէս կը նայէին «Սերբալի վայրենի ապառաժներուն»: Անհուն, մշտաբեղուն ըլձանք մը Մովսէսը կը հրահրէր ելլելու Ննովային աթոռը, որուն շուրջ լուսաւոր առասպելներու պսակ մը կը բոլորուէր: Երկչոտ հովիւը բիրամիտներու խորհուրդներուն անդունդէն ելած, աւելի սառ, աւելի խոհուն կը վերելակէր Սինայի կողերէն, Աստուածատես ուխտաւորի մը խանդով: Լեռնամիջուով՝ հովիտը սեւ երիզի մը պէս կ'երկարի, երբ մանաւանդ ամպը կը սաղաւարտէ լեռները, ուրկէ Ռեֆայիլներ՝ խորհրդաւոր ոգիներ, ժայռեր կը տապալեն ամբարիշտ ոտքերով մօտեցողներուն վրայ: Յոգնած մարդը խաւար միայն կը տեսնէ, հովիտի սեւերուն կրկնբերեոյթով. անաւորին սաստը պակուցումով կը վարագուրէ բարձունքի մարգարէն, երբ ինքը քարայրի մը առջեւ՝ բուսականութեան մը հոտաւէտութե-

նէն արբշխո՝ Յաւիտենականին պատգամները կ'երկնէր: Ինչե՛ր կ'արտակիտուին քարայրներու այդ խաւարչուտէն . . . :

— «Որոտումներ ու կայծակներ կ'ըլլային, թանձր ամպ մը կար լեռանը վրայ ու խիստ սամտիկ փողի ձայն մը (ԺԹ. 16): Սինա լեռը բոլորովին կը մխար, անոր մուխը հնոցի մուխի պէս կ'ելլէր, և բոլոր լեռը կը դողար» (ԺԹ. 18):

Մորենին բոցեղէն ցնցուղով կը շանթահարէ մարդը (Գ. 2). ամբարտաւանը կը խուճապի, ոտքերը կօշիկներէն պրծած (Գ. 5): Փախու՛ստ, փախու՛ստ . . . յայց ապառաժները անանցանելի կը դառնան. կեանքը կը փշրի անդունդներուն վրայ, ուրկէ վար ոչխարներն ու մարդկութիւնը մըջիւններու պէս կը սողան աւազներուն գիրկը:

— «Մովսէս, մի պղծեր սրբութիւնը» (Գ. 5):

Մտքի հետաքրքրութիւնը կը փշրի ու Մովսէս իր երեսը կը պահէ վախէն զարհուրած (Գ. 6): Մորենին բոցեղէն Մեղուսան կը յօրինէ, շարժումներուն, որոտումներուն և հովերուն մէջտեղ, որոնք կը դուռն ժայռերու ընդերքէն, երբ մըթութեան խաւարչուտներով լեցուն հովիտը Անաւորին ձայնը կ'արձագանդէր:

— «Գնա Փարաւոնին և իմ ժողովուրդս, Իսրայէլի որդիքը հանէ՛ Եգիպտոսէն, և զանկա կաթ ու մեղր բլխող երկիրը առաջնորդէ» (Գ. 7-11):

— «Ես ո՛վ եմ որ Փարաւոնին երթամ, ու Իսրայէլի որդիքը հանեմ Եգիպտոսէն, ես ծանրախօս ու ծանրախեղու եմ (Գ. 11 և Գ. 10): Այս պատգամը ինձմէ՛ զատ որու ձեռքով կ'ուզես զրկել, զրկէ՛ (Գ. 13):

Բոցը հրահրեցաւ և մրրիկներու ձայնով ու որոտումի բույրերով ըսաւ մորենիին մէջէն :

— « Դեւտացի Ահարոնը քու եղբայրդ չէ՞ . անիկա քեզի բերնի տեղ թող ըլլայ և դուն անոր Աստուծոյ տեղ եղիր » (Դ. 14, 16) :

* * *

Ո՞վ էր որ կը խօսէր աստուածացող Մուսէսին , որուն մէջ կը փայլատակէր հիմա խորհուրդներու և պատգամներու հրեղինութիւնը : Փայլակը կը խօսի իր վառվառ ակօսումներէն . մորենին բոցեղէն բառեր դուրս կու տայ իր կրակէ շըրթներէն , որոտումը կ'երգէ քարերու կողերէն և քարայրներու անձաւներէն : Խնչ են այդ բառերը , կրակէ թելերով հիւսուած . լնչ են այդ խորհուրդները որոնք կ'ստեղծագործուին :

Աստուածատես մարգարէն կը կարմրի իր մտածումներու շտապող ամբոխումէն . ՈՐէն կը սաւառնի անապատի բարձունքը (Դ. 14) : Ներշնչումներու կենդանութիւնը իր մազկուինճ գալարումներով օձաձեւ պրկուած (Դ. 3—4) հովուական ցուպի հրաշալիքը կ'արտափայլէ : Հին մարդը կը բորտի (Դ. 6) , Սինայի կենդանութիւնը նշուելու համար :

Աստուծոյ ժողովուրդին ծրագիրը գծուած էր ալ , հրեղէն տառերով , որոնք փարոսներու պէս պիտի պլպլային դարերու խորէն , անապատին ահաւորութեան գիրկը , ու Սինայի բարձունքէն :



Ե.

Պ Ա Տ Ի Ժ Ն Ե Ր Ը

ԵԼԲ. Ա — ԺԲ. 30



ԳԻՊՏՈՍ, խորհուրդներու Երրորդութեան ծնուցիչը , որուն մէջ ընծայութեան գաղանիքները կը ծփային , Եգիպտոս՝ լուռ հանդիսատեսը աւաղէ ծովերուն , որոնց կը հովանաւորէին բուրգերը , Եգիպտոս՝ Սփինքսի առեղծուածը , իր դարաւոր գոյութեան մէջ , վաճառական նաւերու ժամանումը կ'ողջունէ : Փարաւոններու կեանքը Ոսիրիսի պաշտամունքէն ըմբռնուած , աշխարհներու շուքը կ'աւելցնէ , իր բարձր վարդապետութիւնները զուգորդելով իր կամարակապ աշտարակներուն : Լուռ մեհեաններէն՝ ուրկէ մահուան խորհուրդը կը բուրէ , և հսկայ չերիմներէն , ուր կեանքերու յաւիտեանկանութիւնը կը գծուի , համբերատարներու սուրբ ներշնչումներուն իբր արիտուր , խունկերու բու-

բուժը կը սաւառնի Նեղոսի ափերէն մինչև Սահարա : Եգիպտոս , կրօններու մայրը , գիտութիւններու բանալին , նուիրապետութեան անձնաւորութիւնը , ինչո՞ւ Եգիպտոս կը խռովի այն բոլոր մարդերէն , որոնք գերիներու կեանքը կ'ապրին Փիթոմն ու Ռամսէսը շինելու աղիւսներ թրծելով (Ա. 11) : Հառաչանքի ձայներ կը լսուին Գիստիւն , որոնք կը տարտղնուին աշխարհիս ծայրերը : Ծննդական կիներ իրենց երկունքի վիշտը կուլան Նեղոսի եզերքներուն վրայ , երբ կոկորդիլոսներն ու ձկները նորածիններու խնջոյքով կը հեշտանային (Ա. 22) :

Ծիրանիներով ծածկուած ու ապարանջաններով պողպաղուն ձեռք մը կ'երկնայ յանկարծ , վերցնելու համար նորածին զոհերէն մին (Բ. 5. 6). երբ անապատի հովերը աւազը կը փորէին ապագայ ոճիրի մը իբրև գերեզման (Բ. 12) : Այդ մանչոյ հովերուն ծոցէն Եգիպտոսի սուզը կ'երգէր Հերմէս . « Ով Եգիպտոս , Եգիպտոս , քեզմէ ուրիշ բան չպիտի մնայ ապագայ սերունդներուն , բայց միայն անհաւատալի առասպելներ , և քարերուդ վրայ փորագրուած բառերէդ զատ բան մը տեւականութիւն պիտի չունենայ » :

* * *

Արդարութիւնը խորհրդանշող օթեւաններուն մէջ խստասրտութիւնը կ'աթոռակալէ : Տառապանքի ցաւերը յուզման ժամեր կը ծնցնէին ապագայի երկնումներով : Ցեղաջինջ մարտիրոսութիւնը նուիրասեղաններու կարօտով , բարձունքին ծարաւին կը դառնայ Եգիպտոսի հարթ հաւասար

բութեան գիրկը (Ե. 1, 3) : Սովալուկ աշխատանքը ծեծով կը պատուհասուի և « ծոյլ » անունով կը մկրտուին անոնք , որոնց տատանքը հոգի կը քաշէր (Ե. 15—17) :

Բոցալաւ մորենին կը թխպանայ ամպերով , համաջինջ խաւարը՝ շօշափելի կերպարանք հագած , արեւը կը դիմագրաւէ (Ժ. 22) : Ի՞նչ է այն , որ սեւ վիշապներու պէս կը սաւառնի հեռուի հորիզոններէն , ու կը ծածանի Եգիպտոսի գլխուն վերև : Սաւար Բիրամիտներուն , խաւար մեհեաններուն ու տաճարներուն , խաւար քաղաքներուն ու գիւղերուն վրայ , խաւար , անէծքի պէս ծանրացող խաւար , որ տուներուն դուռները կը փակէ և պողոտաներն ու հրապարակները կ'ամայացնէ հեշտասէր ժողովուրդներէն : Սեւ՝ մութ խաւար մը կը ծածկէ ամէն դի ոսկի գամբերով ու արծաթ ճարմանդներով կէտկիտուած դազաղի ծածկոյթի մը պէս , որուն տակ հսկայ մեռելներու պէս փռուած քաղաքները կը մրափեն (Ժ. 22) :

* * *

Արիւնի հեղեղատ մըն է Նեղոս , որուն ջրերը ծանրաբոյր հոտով կը նեխին (Է. 20) : Սոսկումի ճիչեր կը լսուին , ծարաւի մարմաջներ կը խոնդան պասքած բերաններէ (Է. 24) : Պուտ մը ջուր , կաթիլ մը միայն , այրուած կոկորդիներու հրդեհը մարելու համար : Հողն ու օդը կ'երայտանան , բրիչները աւազուտին կը զարնուին , հողի անջուր ընդերքին մէջ , և արիւնի ու նեխումի եօթնօրեայ տառապանքը վիշտերու նոր ու սեւ շրջանակը կը գծէ ոսկեշող Եգիպտոսին շուրջ : Միւսայի մար-

դուն ձեռքը օդը կը ծեծէ օձաձեւ դաւաղանով : սոսկութիւնը կը սաւառնի ճախճախուտ շամբերէն : ու նեխած ջրերէն : Կոշկոռոտ գորտեր ու լերկագլուխ դողոշներ քաղաքներու բնակչութիւնը կ'ահարեկեն (Ը. 2—6) : Ո՛վ Տէր, ի՞նչ են այդ ողորմագին ճիչերը : Հացի տաշտերէն հեռու կը փախչին կիներ, իրենց թեզանիքները հանգրիճած : Գորտերու անթարթ աչքերը, պա՛ղ իրենց նայուածքին, ու մերկ իրենց լերկութեան մէջ, կը խռովեն հանդարտ քունը դիցանուշներուն, որոնք անդուսէ անկողիններու հեշտանքը կը վայելէին : Բամբիչները իրենց առագաստի սենեակները կը լքեն . մեղրալուսիններու ցայգերգը կը լռէ ֆլննորներու և կիթթիճներու թելերէն, զազիր գորտերու սեւերես ներկայութիւնով (Ը. 1—7) :

Մութը կը խռովի գորտերու կռուողէն, որ ահարեկած հոգիները կը ծաղրէ, կարծես, դժոխսայն ծիծաղով : Մարդիկ և անասուններ կը նեղարտին՝ արեւին տակ, անհատնում, անլերջ մուներէն (Ը. 17), որոնք գոռեխներու, մթեղներու և շանճանճներու կը խառնուին (Ը. 21) : Կի՞ծ ու խայթոց կը սրուին ամէն դի, ու տիգաւոր ճանճեր ապականութեան արիւնը կը ծծեն իրենց պատիճներով : Զերմատենդ կսկածանքներ նոր պաշարներ կ'աւելցնեն մարմիններու վրայ, որոնք խաղաւարտներ կը ծլէին վառ վառ բշտիկներով (Թ. 10), և որոնք դժոխքի կայծերու պէս կ'երէին : Դէպի երկինք ցանուած մոխիրը ամպերէն վար կը կախէր համաջինջ կարկուտը (Թ. 18) որ հօտերն ու նախիրները կը զարնէ : Սառած բիւրեղը կրակի պէս կը տեղայ գոնջացած դաշտերու վրայ (Թ.

24) ուր խոտի հետք չտեսնուիր ալ, և ուր պաճարախան ու ժանտախտը ընդարձակ գերեզմանի մը տեսքը տուած էին Եգիպտոսի (Թ. 15, 6) :

Գիշերի ծոցէն արեւելեան հովը կը սուրայ, պատուհանները թեւ առած կը մղեղեն հեռուէն (Թ. 13) : Իրենց որսաբաժինները փնտռող ու նեխած դիակներու կարօտէն բորբոքած անգույներ ե՛ն արդեօք, թէ տարմահաւերու գունդ մը, որ դաշտերու ապականութեան մէջ քայքայուած կեանքերու սերմերը կը փնտռեն . . . : Մարախներու գունդը կը բանակի Եգիպտոսի միջով, ցատկուուն, ոստոսող երամներու բաժնուած, որոնք բուսականութեան մնացորդ մորճութիւնը կը լիզեն ժողովուրդին աչքին առջեւ (Թ. 14) : Իմայեղած մարդկութիւնը խելացոր շուարքին մէջ լքումի կոծերով կ'ողբայ կեանքերու թափթափումները : Շարժուն կենդանութենէն անփոյթ խաղաղութիւնը վրդոված, հոգիներու տուայտանքն է որ կը հեծէ անապատի միօրինակութեան հանդէպ, ուր Կիզէի մեծ Բիրամիտը կը խոկայ մութը ձեղքելով : Սփինքս, իր կրանիթէ բլուրին վրայ բահուանդուած, անհուն դարերու խորհրդաւոր վկան բնութենական համրոյր՝ հանդարտ տեսարանին, ահաւոր իր խորհուրդին մէջ, ուր մարդուն և Սաստուճոյ տիեզերքը կը խտանայ, Սփինքս, Լիբէական լեռներու այդ լուռ հանդիսատեսը, կարծես սոսկումով կը դիտէր պատուհաններու շարքերը, որոնք ինքնաբոյս և տարօրէն բան մը կը թուէին իրեն : Իր ապուշ նայուածքը, յոգնատխուր, Քանանու երկիրը կը դիտէր իր մարդու կերպարանքին, ցուլի մարմինին, առիւծի ճիրան-

ներուն և արծուի թեւերուն տակ, Եղեկիէի տե-
սիւնները բեղմնաւորելով (Եղեկ. Ա. 1—13), երկ-
նելով Քրիստոնէութեան աւետարանիչները և ծնունդ
տալով Աւետեաց երկրի ժողովուրդին: Անփարատ
ամպը կը պարուրուի խստասիրտ հոգիներու վրայ:
Գետինը կարմիր կը շողայ և չաղիխն ու դիակ-
ները բարդ բարդ կը դիզուին շամբերու ետին,
ուր ոսկորներու ճարճատը կը լսուի տիտուան սուր
ակումներուն տակ: Վրէժխնդրութիւնը արթուն
կը հսկէ ամէն կողմ, խաւարը շարունակ արհաւիրք
կը նիւթէ Աստուածամարտ ժողովուրդներուն հա-
մար: Ու միւս կողմէն, Տիրոջ ժողովուրդը տրեխ-
ներ հագած իր ցուպին կը յենու: Խողխողուած
գառներու արիւնէն Զատկի կարմրութիւնները կը
պոռթկան, ու յանդուգն ձեռքեր «զուպայի փուն-
ջեր» բռնած, դրանդիներ կը նախշեն, զուարթ
օրհներգով:


Երգերու զուարթութիւնը կը հեռուընայ տա-
կաւ, ու հոն, Եգիպտոսի մէջ սուգ ու ողբեր օգը
կը թնդացնեն: Լալկաններու ճիչը ջայլեր կը հիւսէ
հառաչանքի քուքերով, որովհետեւ Տէրը «երկրին
մէջ ամէն առջինեկ զարկաւ, և տուն չկար որուն
մէջ մեռել մը չգտնուէր» (ԺԲ. 29, 30):



Զ.

ԱՆՑՔԷՆ ԱՌԱՋ ՈՒ ԵՏՔԸ

(ԵՒՔ. ԺԲ. 31 — ԺԷ)



ՆԱՊԱՏԻ մարգարէն՝ իր կեան-
քի ալեղարդ օրերուն, գիշեր-
ուան աստղի մը պէս կը փայլէ
Փարաւոններու երկրին աւե-
րակներուն վրայ, ուրկէ գաղ-
թական ժողովուրդ մը դուրս
կուգայ մութը ձեղքելով: Գե-
սեմէն ու Ռամսէսէն մինչեւ
Սոկրովդ ճամբաները կը ցնծան
վէտվէտող ժպիտներէ (ԺԲ. 37), որոնք փախստա-
կան ժողովուրդի մը մնացորդ կեանքովը կը փո-
խարինուին: Նահապետին աճիւնացած ոսկորները,
սուրբ տապանակի մը պէս, ամէնուն զօրավիզը
կ'ըլլան փախուստի ճամբան հարթելու համար

(ԺԳ. 19) : Ոթոմի անապատը կը գոռայ երգերու ձայնէն (ԺԳ. 20) , և զուարթ աղալակներու գանգիւնը գիշերի թիրուծիւնը կը մտրակէ : Արծաթը կը շողայ ոսկեղէն փայլով , ուրկէ կանացի բազուկներն ու ականջները բեռնաւորուած են (ԺԲ. 35) : Յեղական նկարագրի անհուն տարորշութիւնը «խառնիճազանճ բազմութիւնով» պիտակաւորուած (ԺԲ. 38) , սրտի նոյն տրոփումները կ'ստեղծէր զգացումի հանգիստութիւններով : Մարգարէին Աստուածը բոցեղէն սուր մը դրած էր ամէնուն սրտին մէջ : Բանանացին , Սեմականն ու Եգիպտացին , ամէնքն ալ տարբեր դաշտերէ քաղուած հասկեր , միացած էին կարծես Իսրայիլի գաւաակներուն խմորը զանգելու , զատկի շօթերով : «Այդ մարդկային փոշիներէն յաղթականները ժողովուրդներ ձուլեցին , իսկ մարգարէները կրօններ» : Ահարոնի բերնէն Ղեւտացին կը ծնի , ու պաշտամունքի սէրը ամէնէն եռացող ու տաք բազմանքը կ'ըլլայ սրտերուն : Բայց ամպը կը վարագորէ տակաւին Եգիպտոսի դռները , մինչ արեւ կը շողայ անապատին մէջ ու մինչ մերկ ոտքեր՝ Մագդոլի մօտերը ծովուն պողպատը կը կոտորեն :

Եգիպտոս ամայացած է անդրանիկներու կոտորածէն ու փախստականներէն : Պատուհասներու սարսուռը տեղի տուած էր հոն պատիժներու արհաւիրքին , որ գաղթականներուն հանդէպ կը քստմնէր : Կառքերը կը թաւալին ու ձիերուն խրխինջը կ'աղամոզէ արջառներու հանգիստը : Կարմիր ծովը կը սարսի գիշերի բանդագուշանքէն , ու ալիքը ափը կը ծեծէ իրր տխուր կրկնորդը

յուսահատ սրտերու լացին , որոնք անապատին մէջ բացուած գերեզմաններ միայն կը տեսնեն (ԺԴ. 11—12) : Իսրայէլացեոց գիշերը լոյս կուտար (ԺԴ. 20) , երբ հովը՝ արեւելեան դռներէն փրթած , ծիրանի ծովը կը ծածանէր իր անկողինն մէջ , ուր ալիքները՝ մէկ մէկու փարած Յաւիտեանականին սաստը կը մուտային , երկաթ վանդակէն մոնչող առիւծին գոռ ձայնով (ԺԴ. 23) : Կառքերուն անիւները ի զուր կը դառնան ջուրերու պարապութեան ծոցը , ուր խորափիտ վիհեր կը փորուին : Ձիերն ի զո՛ւր կը հռնդան լոյծ անդունդներուն մէջ (ԺԴ. 28) , ուր ջուրերը մահուան պաղ քրտինքը կը սրսկեն խուճապէն սասանած կենդանական ջերմութիւններու շուրջ : Եւ ահա՛ .

— « Առտուան դէմ ծովը իր տեղը դարձաւ »
ամբարշտութեան հետքերը ծածկելու համար . . .
(ԺԴ. 27) :

* * *

Անապատի մերկութիւնը հանգրուաններ կ'ըստեղծէ խաժամուժ ամբոխին : Լուռ պարապութիւնը՝ իր երկար դարերու խոկումներէն վերջ՝ վրաններու պակիլը կ'զգայ իր ծոցը , երբ ծովուն անդունդէն քալող մարդկութիւնը զուարթ օրհներգութեան համադրութիւնը կը կազմէ հոն , ուր ոտքերուն տակ շաշող աւազը թաւ երաժշտութիւնը կը յօրինէր մայրող գառներուն և զուարթ զանգիկներուն հետ : Եղիմէն մինչեւ Սինա , Սինի անապատը կը թնդայ Իսրայէլի ժողովուրդին առթած ծիծաղէն , երբ Փարաւոնի խորատկումը՝

Կարմիր ծովու ջրերէն դուրս կը թրթռար՝ նօսրացած ձայնի վէտովէտու մնեցողով, որոնցմէ Ենովային փառքը կ'երգուէր (ԺԵ. 1—19)։ Սուգի մոխիրները իրենց վրայէն թօթուած մայրերուն սիրտ կուտայ մարգարէութիւն, որուն թմբուկը պարերու շարի շար շղթան կը հիւսէ աղջիկ-օղակներով (ԺԷ. 20)։ Ոգեւորուած անապատին մէջ, ուր դառնութիւնը կը վժայ Մեռայի ջրերով, գաւազանիկներ կը ծածանին (ԺԷ. 23—25)։ Եղիմայարմաւենիները իրենց դայարուտներուն պարզուտը կը սփռեն աղբիւրներու գլխին, ուր յողնած ժողովուրդը կը նիրհէ (ԳԵ. 27)։

Անպաշար ժողովուրդներու արտօնջն է արդեօք, թէ սուլամահ գայլերու ոռնածայնը, որ կը բզքտէ գիշերին խաղաղ, թուլահիւս վարագոյրը ..

Սմէն կողմ հաց կ'անձրեւէ, ահա, թեփածեցողով (ԺԶ. 14), և հովերուն մռնչող հեւքէն լորամարգիներ կը ծնին (ԺԶ. 13)։ Գիշերին յղութիւնը կը բեղմնաւորի երկնատեղեաց մանանայէն, և սափորը կ'ոսկեղինի իր գինձի ճերմակ սերմերով (ԺԶ. 33)։ Անապատին մէջ կը խորդայ ժայռը, որուն վրայ կը թնդայ ծերունիին զաւաղանը (ԺԷ. 6), երբ խաժամուծին արտունջն ու կռիւները Մասսան ու Մերիպան կ'ստեղծագործէին (ԺԷ. 7)։

Ժողովուրդը կը շարժի, իր անկողնէն խուսափող ալիքի մը պէս և Ամաղէկ կը տժգունի յառաջխաղացութենէն անապատի այդ հրոսակներուն, որոնք բիւրաւոր մարախներու պէս քաղաքները կ'աւրչակէին։ Ճակատ ճակատի կը բաղխի, անդէն, անվահան, քաղաքներու հրդեհումը

ցնծութեան աղաղակներով կը շուրջպարի։ Դիմադրութեան պատահականութիւնը յաղթութեան ոսկի ապարանջանները կ'օղակէր Մովսիսի ձեռքերուն, որոնք Ուրի բարձունքին վրայ տարածուն, քարերուն կ'ապաւինէին յաղթանակ մը ամբողջացնելու համար, մինչև արեւին մարը մտնելը (ԺԷ. 12)։






Է.

ՈՍԿԻ ՇՈՐԹԸ

(ԵԼՔ. Ի—ԼԴ.)



ԱՐԳԱՐԷՆ ծնած էր անկէ, որ
իր կիրքերուն իշխելով, ժողովուրդի մը իշխելու իրաւունքն
էր ստացած, անկէ՛, որուն հա-
մար «Իսրայէլ միջոց մըն էր, և
տիեզերական կրօնքը՝ նպա-
տակ», անկէ՛, որուն կենդանի,
հոգեկան Աստուծոյն համար
պէտք էր ժողովուրդ ձուլել :

Ո՞վ պիտի ձուլէր այդ ժողովուրդը՝ Թափառ-
կոտ՝ անապատներու մէջ, ուր մարդերու պէսպի-
սութիւնը, իր տարբեր միտումներով ու ախոր-
ժակներով մարդարէին ու ժողովրդեան միջև կա-
տարուած մենամարտին յաւիտենական պատմու-
թիւնը կը հիւսէ :

Պէտքը ստիպողական էր, սակայն. և անա Մովսէս լերան ամայութեան ծոցը կը թխտէ, Ենովայի սահմաններուն մէջ, իր խորհուրդներուն, իր գաղտփարներուն վրայ: Օրէնքը թեւ կ'առնէ (ԺԸ. 17—26) և քարը կ'ողբեր Տասնարանեայի բոցերով (Ի. 1—16): Եւ անա, յեզը, Աստուծոյ ժողովուրդը հինուած էր արեւի ճառագայթներէն:

Ա՛լ ժողովուրդին ցնծութիւնը կը խտանայ չափուած, կշռուած հնազանդութեան մը մէջ (ԻԵ. 3—7), երկիրը կ'երկնքի չափիւղայի պայծառութիւնով, սրուն վրայ Տիրոջը ոտքերը կը կոխեն (ԻԴ. 10): Քարերը կը խօսին (ԻԴ. 12), երբ վկայութեան խորանին ոսկի չրջանակները, տապանակին օղակներն ու ձողերը և քառութեան ամբողջութիւնը քերովբէներու թեւերով կ'երփնազարդուին (ԻԷ. 1—30): Ոսկի աշտանակը կը ծաղկի իր ճիւղերուն, իր սկանակներուն և իր գնտակներուն յորինուածքով (ԻԷ. 31—40): Սեղանը կը ծխայ իր ցանդակերպ կասկարաններուն վրայ (ԻԷ. 4), որոնց բոլորտիքը արծաթն ու պղինձը իրենց պսպղուն փայլունութիւնները կը միացնեն վարագոյրներու կապոյտին, ծիրանիին ու կարմիրներուն (ԻԷ. 16): Եփուտը կ'ասեղնագործի ոսկեճամուկ, և Յովսէփ կը վերընծիւղի իր ծաղկեայ պատմութեանով (ԻԸ. 4): Իսրայէլ կը շարիշարի զմրուխտին ու չափիւղային, կարկեհանին ու ադամանդին, ոսկեքարին ու յասպիսին մէջ (ԻԸ. 15—29), ուր Ուրիմն ու Թուրիմը Եգիպտոսը կը պատմեն Ռաի և Մաի խորհրդապատկերներով (ԻԸ. 30):

* *

Բանակին մէջ գուպարի ձայն կայ: Յաղթողներու աղաղակի ձայն չէ', և ո՛չ յաղթուածներու: — Խաղի ձայն կը լսեմ ես (ԼԲ. 17, 18):

Ո՛վ են երգողները, որոնք խնջոյքի պարերուն կաքաւը կը կաղմեն, լուռ անապատը կը խռովի բիւրաւորներու խռովութիւնով, երբ Մարգարէն, Սինայի Օրէնագիրը բարձունքին օդը կը շնչէ: Տրտունջները կը բաղմապատկուին, լացով շաղուած բառեր օդը կը թնդացնեն (ԹԻւք. ԺԱ. 1—6): Օրերը, գիշերները իրարու կը յաջորդեն...:

— Ո՛վ գիտէ, ի՞նչ եղաւ այն Մովսէսը, որ մեզ Եգիպտոսի երկրէն հանեց (ԵԼք. ԼԲ. 1):

— Գուցէ Ռաֆայիմները անդունդներ բացին անոր քայլերուն առջեւ, ու մենք ի զուր պիտի սպասենք անոր դարձին:

Ու Մովարի աղջիկները Եգիպտոսի կիներուն թեւ տուած, ժպիտը իրենց բերնին մէջ, Բելքեքովըր և Աստարովըր կ'երազեն: Պոռնիկ պաշտամունքներու ծարաւը սրտեր կը հրահրէ (ԹԻւք. ԻԲ. 1): Բահուանդներով շողարձակ մերկ բազուկներ ցոփութեան օրհներգը կը դոփեն. կիսամերկ լանջքերը՝ ոսկիով ու արծաթով մանեկուած, հանգիստ բարձեր կը շինեն հեշտոտ զգացումներու, երբ մութը արեւին դէմքը կը ծածկէր, անկէ պոռնկութեան պաշտամունքը վարագուրելու համար: Այդ խաւար աղջամուղջէն, պահանջկոտ, սպառնալից ձայներ կը գոռան ու կ'ըսեն:

— Ելլ'ր ու մեզի աստուածներ շինէ (ԼԲ. 1):

Ահարոն կը դողայ խաժամուժի արիւնալից աչքերէն, որոնց մէջ կատաղութեան յորձանք մը կը պտուտքի: Պէտք էր տեղի տալ, երբ Ենովա

կը լուէր, և երբ Մովսէս աներեւոյթ էր եղած :
Մ'հ, որչափ քաղցր է մարդուն իր ոսկիները
ձուլել հեշտախտի սիրուն, և ամբողջ կեանք մը,
ամբողջ փրկութիւն մը զոհել օրուան մը գոհա-
ցումին համար . . . : Դեւտացին սարսուաց, երբ իր
մէջ մութ ամպի մը սրտալը զգաց :

— Բերէ՛ք, բերէ՛ք ձեր ոսկիները :

Կիներ ու աղջիկներ իրենց գողութեան ոսկի
բեռներէն զզուած, հեռուն, դէպ ի Ահարոնը կը
նետն իրենց օղերը, ապարանջանները, կրծա-
նոցները, մանեակները շղթաներն ու մատնիները,
որոնք բարդ բարդ կը դիզուին աստուածներ ծնե-
լու համար (ԼԹ. 3) :

Կրակը կը շանթէ, քուրաները հալոցներու
վիճակով կը լուծուին, ուրկէ դուրս կը պոթկայ
դեզնագոյն Հորթը : Քուրմեր իրենց քղանցքը կը
բանան, հոն թագայուած արձանիկները դնելու
ժողովուրդին ի տես : Ապիս, Աստարովդ, Բելբե-
քովր, ահա ըմբոստ ժողովուրդին աստուածները,
որոնք՝ պիշ պիշ՝ ցոփութեան սեղանները կը հո-
վանաւորեն, զոհի ըմբոշխնումէն ու խունկերու
բուրումէն անզգայ :

* * *


— Ժողովուրդը ուտելու և խմելու նստան,
ու խաղալու ելան (ԼԹ. 19) : Ամբարիշտները . . .
կը պուայ մօտեցող ձայնը, ուրկէ քարետախտակ-
ները կը խորտակուին (ԼԹ. 19) : Բարկութիւնը,
արդար սրտմտութիւնը շանթարձակ կը նայի չորս
դին . . . : Սկսող ցայգատօները, արբշուութիւն-
ները կը մարին, մինչ անդին Ոսկի Հորթը կը

փոշիանայ (ԼԹ. 20) : Կը լուեն դոփերը, թմբուկ-
ները, սրինգներն ու աղիքները, և անոնց սուրի
շառաչիւններ կը յաջորդեն : Հայրը որդիին կը
սպառնայ, և ընկեր ընկերի (ԼԹ. 29) և ձուլածոյ
աստուածներու հանդիսալայրը դիակնացած մար-
միններով կը ծածկուի (ԼԹ. 28) :

— Ո՛ւր են կաքաւոզ ոտքերը, ոսկեձոյլ դի-
քերու զուարթ պարուհիները . . . :

— Փենեհէս կը խոցէ Մադիանացի կինը՝ հրա-
պուրիչը աստուածուբաց պաշտամունքին, իր
տարփածուին հետ (Թիւք ԻԲ. 6—8) : Մարգարէն
դուրս կ'ելլէ խաւարչուտ վիհերէն, ժայռի խո-
ւոջէն, ուր կը ծածկուէր Աստուծոյ ձեռքով (Ելք.
19. 22) : Ու հիմա Տէրը կը թագաւորէ բանակին
վրայ, մարգարէին երեսի լոյսերով պիղծ պաշ-
տամունքի խաւերը փարատելու համար (ԼԹ. 29—35) :






Ը.

ԱՌԱՋԻՆ ԻՇԽԱՆԸ

Ա. ԹԱԳ. Թ. — ԺԳ.



Յն օրերը Իսրայելի մէջ թագաւոր չկար (Դատ. ԺԸ. 1), երբ Դեբովրա ամպերն ու անձրեւները կ'երգէր Իսրայելի Աստուծոյն փառքին համար (Դատ. Ե. 1—5): Կալերուն բուրգը գիշերէն կը ծծէր խոստումներու հաւաստիքը (Դատ. Զ. 38), պոռնկութեան ընծան գայթակղութեան եփուքը չինելու համար (Դատ. Ը. 27): Սամսոն՝ իր մազերուն որոգայթէն բռնուած (Դատ. ԺԶ. 17—20), կաքաւի քրքիջները կը խորտակէ երկու սիւներու

մէջտեղ , որոնք իր ձեռքերուն մէջ կը սարսխն (29, 30) : Բայց ո՞վ են այն մարդերը , որոնք Եփրեմի լեռան վրայ բախտախնդիրներու կեանքովը կը թափառին գիշեր ատեն :

— Աղքատ Ղեւտացին , Միքայէն որդեգրուած , նոր զուարթութիւն մը կը զգայ իր հոգիին խորը . արծաթ և ոսկի թերափիմները , կուռքերն ու եփուտը աւարի կը տըռւին (Դատ. ԺԸ. 18—21) , ու Միքա իր կեանքը կ'ապրեցնէ բարկասիրտ մարդերու յարձակումներէն (ԺԸ. 25) :

* * *

Արեւին տակ , քրտինքէն կը նեղուէր Իսրայէլի ամէնէն գեղեցիկ ու ամէնէն կտրիճ մարդը , որ իր հօրը էշերը կը փնտուէր : Եփրեմի լեռնէն մինչև Սաղիմա , Սաղիմէն մինչև Սուփի երկիրը քալած էր անիկա (Ա. Թագ. Թ. 2—5) , առանց կարենալ հետք մը գտնելու իր փնտուած էշերէն , որոնք իր հօր հարստութեան մէկ մասը կը կազմէին : Ալ համբերութիւնը զզուանքի տեղի տուած էր իր սրտին մէջ , և իրենց ամաններէն պակսած էր հացը (Թ. 7) :

— Եկուր ե՛տ դառնանք , չըլլայ որ իմ հայրս էշերուն հոգը թողու , և մեզի համար հոգայ (Թ. 5) :

* * *

Իսրայէլ կ'անսաստէր մարգարէին , որուն ձեռութիւնը ալիքներու ճերմակութիւն մը ափուած էր իր ճակատին շուրջը : Սամուէլ , Ռամայի մարդը , օրերով ոգորումներ ունեցած էր ժողովուրդին հետ , և քարձունին իր գիրկն ամփոփած էր մարգարէին

աչերէն վազած ցաւատանջիկ արցունքները : Ի զո՛ւր իր հոգիին հառաջանքները կը խառնէր իր ներշնչումի բառերուն , բացատրելու անմիտ ժողովուրդի մը՝ ծիրանիին սարսուռները , որոնք ժողովրդական վարչութեան մը քաղցրութիւններուն պիտի փոխանորդէին :

— Բայց մտիկ ըրէ՛ք ինձի , «անիկա ձեր տղաքը պիտի առնէ , իր կառքերուն առջեւէն վազցնելու , իր արտերը հերկելու և իր հունձքերը հնձելու համար , անիկա ձեր աղջիկները պիտի առնէ իրեն իւղագործ , խոհարար , հացեփեաց շինելու համար , ձեր ընտիր այգիները , արտերն ու ձիթաստանները պիտի առնէ , իր ծառաներուն տալու համար» (Ը. 11—18) :

Մարգարէն կը տժգունէր ապագայ տրտունջներուն հանդէպ , որոնք շատ յտուակ և շատ որոշ կը հնչէին հիմա , գոնէ իր ականջներուն համար , բայց ժողովուրդին յորձանքը կը վժար , և բարձունքը կ'որոտար բառերու խղուրդախնովը :

— Չէ՛ , չէ՛ (Ը. 19—20) :

Ու ձայն մը Սամուէլի ականջին կը փսփսար .

— Սնանց խօսքը մտիկ ըրէ (Ը. 22) . երբ ամէն մարդ իր քաղաքը կ'երթար :

Սամուէլ թողուց խնջոյքի սեղանները (Թ. 22—27) . քաղաքը իր ետին մնացած էր ա՛լ , օծութեան իւրը կը թափուէր կիւսի տղուն գլխին (Ժ. 1) , երբ իր մանչն անհոգ ու անխոյթ կը քալէր իր ճամբան , Տիրոջը առջեւէն (Թ. 27) : Դատաւորներու կեանքին վարագոյրն էր , որ կը փակուէր Սելոայի ճամբուն վրայ , երբ Ռաքէլի գերեզմանին մօտերը մշակ իշխանը կ'ողջունուէր (Ա. Թագ.

Ժ. 1—2, ԺԱ. 5) : Մարգարէնները պատգամներ կ'երգեն տաւրի, թմբուկի, սրինգի և քնարի ձայններով (Ժ. 5—10), երբ Սաւուղ հոգիին փոփոխութիւնները կը զգար իր մէջ, մարգարէական շանթերէն զարնուած, և երբ անոր մարգարէական առաջին սքանչանքը առակի կարգ կ'անցնէր խուժանին մէջ (Ժ. 12) : Չար մարգերու բարկութեան նախանշանները կը բորբոքին (Ժ. 27), և Սաւուղ թերեւս առաջին անգամը ըլլալով, հաւաքական վրէժխնդրութեան մը խլրտունը կը զգայ իր մէջ, երբ ժողովուրդը իր շուրջ տղաքներու լացն էր որ կուլար (ԺԱ. 5), զարհուրած նաասի աչքափոր յոխորտանքներէն (ԺԱ. 2) :

Ի այց օժման իւրը կը ցամքի Սաւուղի գլխուն վրայ, որ բարկութենէն կ'այրէր, կը վառէր : Չայնր մէկմէկու կը բաղխէին :

— Եկէք Գալգաղա երթանք : Մինչ բարձունքները խաղաղութեան զօհերով կը խնկուէին (ԺԱ. 14, 15) :

* * *


Ծերունին կը տիրի, առաջին քայլը անկումներ ցոյց կուտար իրեն : Խանդավառութիւնները դժկամակութեան ամպեր կը բերէին իրենց հետ : Մարգարէն կը կնճռտաի իր ձերմակ մազերուն տակ, որուն ճակատը խորշումած աղօսներ կը ցուցադրէր : Իր ցաւատանջ հոգին յափրացած, անէծքի պէս բառեր կը խառնէր իր օրհնութիւններուն հետ :

— «Յայտնապէս ըսէ՛ք ինձի, թէ ես որո՞ւն եզն առի, որո՞ւն էջն առի» (ԺԻ. 3) :

Որո՞ւ կ'ուղղուին այս յանդիմանանքները, օծուած Սաւուղին, որուն վրայէն դեռ պատանին կը հօտի, թէ ստամբակներուն, որոնք ժողովուրդը կ'ապականեն : Յանդիմանանքնե՛ր, վերջապէս, որոնք այն օրէն մինչև հիմա կանոնադրքին առաջին էջը կ'ոսկեզօծեն (Ժ. 25) :


Կշտամբանքը կը խմորէ ամբողջին սիրտը, պէտք է կուռի՛լ Տիրոջը պատերազմին համար : Մաքմաս՝ լուռ հանդիսատեսը արիւնահեղ պատերազմներուն, իր այրերը, թուփերը, ժայռերը, աշտարակներն ու փոսերը կը բանայ խուճապողներուն առջև (ԺԳ. 6) : Յաղթականը կը պանծայ Գաղգաղայի բարձունքին վրայ, ուր ժամերը ամիսներ կը թուին իրեն, և օրերը տարիներ, արիւնոտ ձեռքերով զօհի սեղանը պղծելու համար (ԺԳ. 10—12) : Հովերու մռնչիւնին պէս գոռացող ձայնը, սաստեր կ'որոտայ յիմար պատուիրանազանցին գլխուն (ԺԳ. 13, 14) :





Թ.

Z U L U Ծ Ա Ն Ք



(Ա. ԹԱԳ. ԺԵ. 35 — Բ. ԹԱԳ. Ա. 24)

ՊԱՌՈՐԸ կուլայ զղջումի ար-
ցունքով (ԺԵ. 35) :

Սաւուղի յիմար երազանքները
իրմէն կը հեռացնէին Տիրոջը եղ-
ջիւրը մինչեւ Բեթղեհէմի բար-
ձունքները , հո՛ն , օրհնութեան
իւղը սիրելու Յեսսէի զաւկին
գլխուն (ԺՁ. 1) :

— Տէ՛ր , ըսէ ինձի , որո՞նք կը
պահուին քու օծումիդ գանձերը :
Մօտեցիր և դուն , դողացող ձերունի , ու բեր առ-
ջեւէս անցուր քու զաւակներդ որոնք սրբուեցան
ինձի հետ :

— Եղիա՛ր . . . (ԺՁ. 6) :

Հոգին կը խօսէր մարգարէին ականջէն .

— «Անոր երեւոյթին ու հասակին երկայնու-
թեանը մի' նայիր, որովհետեւ ես զանիկա անար-
գեցի . մարդուն նայիլը չըլար, որովհետեւ մարդ
երեւցածին կը նայի, իսկ Տէ'րը սրտին (ԺՁ. 7) :

Մարգարէն դողաց . քիչ մնացեր էր որ օրհ-
նութեան իւզին հոսուժը երկրորդ զղջումի մը
դուռ բանար իրեն :

— Ուրեմն, որո՞ւն պահած ես զայն, Տէ'ր :

«Մանուկ հովիւին» կրկնեց ձայնը :

Զարհուրած մարդեր վազեցին դէպ ի դաշտը,
ուր բնութեան քնարահարը կը թառէր : «Անիկա
կարմիր էր ու աղուոր աչքեր ունէր, և դէմքն
ալ գեղեցիկ էր» (ԺՁ. 12) : Մարգարէին հանդէպ
վախի և ամօթի զգացում մը, ա'լ աւելի կը շեշ-
տէր կարմիրը իր դէմքին վրայ, հետաքրքրու-
թիւնը միամիտ հրճուանքի մը նոր փայլն ալ աւել-
ցուցած էր իր աչքերուն մէջ որոնք զմրուխտի պէս
կը վառէին : Եւ օրհնութեան իւզը նուիրագործեց
իր պատանիի գեղեցկութիւններն ու հովիւի քա-
ջասրտութիւնը, ուրկէ վերջ Դաւիթ «ճարտասան
և գեղեցիկ տեսքով կտրիճը» եղաւ (ԺՁ. 18) :

* * *

Ուր է դաշտերու զուարթ պատանին, Սա-
ւո՛ւղ :

Պատերազմներու ժխորէն մահուան սարսուռը
ու գերեզմաններու մռայլը արգանդած ունի հիմա :
Ու հիմա ամպոտ ժայռերու պէս աներեւոյթ ոգի-
ներու ծլարձակում մը կ'ասպնտէր զինքը իր հո-
գիի մոլորումներուն մէջ : Յովնաթանի գաւազա-

նին մեղրով պլշտկուած ծայրը թունաւոր բոյսի
մը պէս մահ կը սպառնար իրեն (ԺԴ. 43) : Ու
Յէսսէին տղան կարմիր՝ աչքերով վառվռուն, ի
զո՛ւր անոր ցնորքները կը փայփայէր աղեքնարի
թելերուն թրթռումներով :

* * *

Փախի'ր, փախի'ր հէք տւայ, որուն մէջ ա-
պագայ սալմոսերգուն կը ծլի, փախի'ր գիշերին
ձոցը, ձերպերը ժայռերուն, որսորդէն հալածուած
այծեամիներուն պէ'ս փախի'ր, և գնա՛ հանգիստ
ապաւէն մը վնտուել քարերուն ձոցը, քանի որ
հարսանիկան անկողնիդ մէջ քարէ արձան մը կը
նիրհէ (ԺԹ. 13, 16) :

Գու և մահուան միջև մէկ քայլ միայն կայ
(Ի. 3) : Զառանցողը լեռնէ լեռ, քաղքէ քաղաք
կը շրջի, ոչ թէ մեռած շան մը կամ լուի մը ետեւէն
(ԻԴ. 15) այլ անոր՝ որ քնար ունի, դիւանարներուն
համար (ԺՁ. 16), և սրբուած գլուխ մը՝ Սատուծոյ
և ժողովուրդին համար (ԺՁ. 13) : Բայց ինչո՞ւ
Սաւուղ ուրուականներով լեցուն, խոյս կուտայ իր
բնակարանէն գիշերաշրջիկ մոլորելու Հարէթի
անտառներուն մէջ (ԻԲ. 5) և Գարաայի ու Ռա-
մայի ծառերուն տակ (ԻԲ. 6) : Զայրուցքէն յոգ-
նած մարդը հիմա Ենգադդիի այծեմանց ժայռե-
րուն վրայ կը սարսուայ (ԻԴ. 3, 4), դիտելով
քարայրին մութը, որ հանդիպակաց հորիզոնին
ճառագայթները կը ժողվէր իր մէջ : Սրտերը կը
ձփան ահաւոր վրէժխնդրութիւնով :

— «Պէտք է սպաննել» կը պոռար ի զո՛ւր հա-
լածուած հոգին :

— «Ոչ» կ'արձագանգէր Աներեւոյթին ձայնը սրտերու խորէն (ԻԳ. 5) :

Զղջումի ամպ մը անցաւ Սաւուղի ճակատէն , որուն աչքերը կուլային (ԻԳ. 17—22) : Ինքնամոռացութեան զարթնումին , «Յիմարը» հազիւ գիտակցութիւնը կ'ունենար իր մաշող գործերովը որոնալու , հալածուած ազուն անմեղութիւնները ալ սկսած էին խօսիլ իր սրտին , որուն մէջ դժոխք մը կը լուծուէր պատրանքներու , թիւր մոլորումներու , վրէժխնդրութիւններու և անիրաւ գայրոյթներու հակասութիւններով : Ո՞վ էր ինքը , որ անձանօթ կը մնար ինքնիրեն , ի՞նչ էին այդ մշատաբեղուն ցնորքներուն իրադարձութիւնները , որոնք իր մտքին ու հոգիին պայծառատեսութիւնը կը մթագնէին (*) :

* * *

Մարգարէին սուգը ժողովուրդին երջանիկ հորիզոնին համայնատեսիլը կը մթագնէր (ԻԸ. 3) : Սաւուղի գրգիռները տեղի տուած էին պահ մը իր լրջախոհութեան :

Բայց երազները բան մը չէին յուսադրեր Անոր օգնութիւններէն , և Մարգարէն լուռութեան ցըրտութիւնը կը պահէր իր դէմ : Ուրի մը անխօս մարգարիտի մը պէս լանջապանակի քարերուն կը նայէր դողով (ԻԸ. 5) :

Վհուկը կը քրտնի իր կախարդ դիւթութենէն : Վերջին ապաւէնը , օգնութեան վերջին յոյսը ,

(*) Կարգն նաև Ա. Թագ. ԻԶ. 1—25 գլուխը , ուր Սաւուղի կեանքին մէկ ուրիշ պարագան ալ նկարագրուած է , ցոյց տալու համար Դաւիթի սրտին ազնուութիւնը :

ՄՏՈՒԵՐը ծերունի մարդուն՝ վերարկուով փաթթուած , իր տխուր դէմքը ցուցադրեց մեռելներու աշխարհէն (ԻԸ. 14) :

— Մեծ նեղութեան մէջ եմ , Տէ՛ր (ԻԸ. 15) :

— «Կրէ արդար պատիժդ» մրմնջեց Ստուերը :

Սաւուղ մարգարէին ստուերէն լքուած , իր հուժկու ջիղերուն թունալը զգաց իր մէջ : Ոտքերը կը դանդաչէին : Մտամոլոր վիճակը իր գանկը կը բռնցէր : Բռու մը յոյսերը՝ իբր կեանքին վերջին մնացորդները՝ ցրուած էին մէկ վայրկեանի մէջ (ԻԸ. 20) :


Անդին պատերազմի խուանը շեփորներու ձայնէն , տէգերու շաչիւնէն կը սուլէր բլուրներուն ստորոտը : Հաղարաւորներու դիակները մարած ճրագներու պէս տխուր՝ մեռելոյթի վերջալոյս մը կը սփռէին , ջնջուած բանակին վրայ :

Ամէն ինչ լմնցած էր ալ :

Սուգի դողդղանքը գիշերի մը պէս կը պատէ Իսրայէլը , ու Դաւիթ իր զգեստները կը պատուէ ինկածներուն սուգի լացը ողբալով (Բ. Թագ. Ա. 11, 12) :

«Ով Իսրայելի աղջիկներ , լացէ՛ք Սաւուղին համար , որ ձեզի վայելուչ կարմիրներ կը հագցընէր , և ձեր հանդերձներուն վրայ ոսկիէ զարդեր կը դնէր» (Բ. Թագ. Ա. 24) :





Ժ.

ՊԱՏՇԳԱՄՆԵՐՈՒ ԲՈՒՆ

■ ■ ■ ■ ■ Բ. ԹԱԳ. Բ. — ԺԸ



ԻԱՐՈՒՆՆԵՐԸ՝ յաղթական-
ները իրենց տեղերը կը դառ-
նան: Գեղարուկի յեռները սուգի
դաշկութիւնն էին հագած.
բլուրները կը մրցէին դաշտե-
րուն դիակնացած բարձրաւան-
դակներուն հետ: Գիակապուտ-
ներ վայրագ զուարթութիւնով
մը մեռելի կոյտեր կը կոխկը-
տեն, հանդերձներ ու զարդեր

յախշտակելու համար (Ս. Թագ. ԼՍ. 10): Գիակեր
թռչուններու վերելքը ու խուճապը կը դուռթէ

ժխտորովը Յարիսի բնակիչներուն, որոնց ցաւատանջ դէմքերէն ծոմն ու սուգը կը կաթի (Ա. Թագ. ԼԱ. 12, 13): Լեռներուն մէջ ծնած վիշտը ծաւալուն թափով մը կը սաւառնի մինչև Քերթն, ուր՝ «հաւածուած»ը, վշտի ու արցունքի շիթերով կ'արգասաւորէ օծութեան իւղը (Բ. Թագ. Բ. 4) Յուրտ հառաչանքներ մեռելի հոնքիւնի մը պէս կոկորդները կը ցամքեցնեն, երբ կուրծքեր՝ սրտի արփումներով աւլցուն՝ կը ժլոտտէին պալած քարերու նման: Իսրայէլ շնչահատ չոգիի կեանքը կ'ապրէր մայրերու սուգով (Բ. Թագ. Գ. 31-32):

* * *

Զուարթ բարեպաշտութիւնը կը կախուի Ենովայի շրթներէն, ուրկէ յաղթական պատգամներ կը ծորին (Ե. 19, 20, 23, 24): Տապանակը, որ ձուլուած ժողովուրդի մը կրօնական դաշնադրութեան ամփոփումը կը մարմնացնէ, անապատի անաւորութեան այդ ջղուտ ու կենսաւէտ Պալլատիումը, նոր ոգի առած, փոխանցումի կենսականութիւնը կը սփռէ չորս դին, երբ «Իսրայէլի բուլոր տունը, դափերով ու ծնձկաներով Տիրոջը առջեւ կը խաղային» (Զ. 5): Բայց ո՞ր ամբարիշտ ձեռքն է որ կը հպի Տիրոջ տապանակին . . .

— Ամպը կ'որոտայ Սինայի կայծակներով. բարկութեան արտաժողութիւնը կը բորբոքի անխորհորդ պահապանին հանգէպ, ու սխալը մահով կը քաւուի միայն (Զ. 7): Պատիժին սարսուռը հոսանուտի պէս արագ արագ կ'անցնի երակներէն ամէնուն, որոնց ուրախութիւնը կը պոթկայ զենիթի արեւին պէս ջեռուցիկ: Ամէն կողմ երգ

ու օրհնութիւն. Իսրայէլի ժողովուրդը ամբողջ երաժշտացած ձայն մըն է, կուռ նուագերգութեան մը դաշնակաւոր ալիուն: Կրօնի կեանքը կը յաղթանակէ օրհնութիւնը՝ Յաւիտեանական ճամբորդի մը պէս՝ բուռ բուռ բարիք կը ցանէ տուներէն ներս (Զ. 11): Զոհերու արիւնը ժպտադէմ գոհունակութեան ծիրանին կը նախշէ հանգրուանէ հանգրուան, և ժողովուրդը սեղմ հանգոյցներ կը հիւսէ՝ ճամբաներու վրայ՝ Յուրայի Բաղէն մինչև Դաւիթի քաղաքը (Զ. 2. 16): Մարգարէն իր քթանէ եփուաին տակ պահուրած է հիմա, և իր մերկ ստքերը կ'ոտոտտէին զուարթ սրտատրփովը կրօնին (Զ. 14, 15):

— Որչափ փառաւոր և դեղեցիկ էր Դաւիթ, նոյն օրը, երբ իր ծառաներուն ու աղախիններուն առջև ինքզինքը մերկացուց (Զ. 20):

Պատուհանին առջև այս բառերը կ'երկնուէին այն կնոջմէն որ մանկութեան օրերէն ի վեր կեանքի դառնութիւններն էր ձծած շարունակ (Զ. 16): Սէր, ժպիտ, յաղթանակէ յաղթանակ կը տանին Օձեայը որ իր «եղեւնափայտէ շինուած տանը մէջ կը բնակէր» (Ե. 2):

* * *

Լեռներու և դաշտերու ծոցը մեծցած առոյգ պատանին հիմա անքոյթ խաղաղութեան գլրկ տուած, Սուրբ քաղաքին տեսարանները կը դիտէր իր զարգարուն պատշգամներէն: Տարինելը իր կեանքին վայրէջը կը տանէին դինքը, երբ օր մը յանկարծ, անապատի փորձութիւններուն պէս հեշտոտ մեղկութիւն մը ապօրէն կնաստացութեան

գաղափարն արթնցուց իր մէջ : «Տեսքով խիստ գեղեցիկ» և իր լոգանքին մէջ մերկացող կինը (ԺԱ. 2), որուն վարսերը չէին կարող իբր վարագոյր ծառայել վարդագոյն լանջքին, իրիկնագէտին ալտոտ հետք մը կը գծէր բնութեան ջինջ հորիզոնին վրայ, անկողնէն նոր ելլող Դաւիթին հանդէպ (ԺԱ. 4) : Մեղքը կը մարմնանայ Բերսաբէի ծոցը (ԺԱ. 5), կրական մոլուցքը մարդասպանի թեւերով կը զինուի անարգուած մարդուն դէմ (ԺԱ. 14), և մեղքը նոր մեղքեր կը ծնի պարիսպներուն տակ, ուր վիրաւորուած սիրտ մը՝ երկնատենչիկ՝ կը բաժնուի աշխարհէս (ԺԱ. 21), անէծքի պէս բան մը թողլով իր ետին (ԺԲ. 10) :

Օծանուտ կեանքին առէջքները կը քայքայուին տակաւ՝ Դաւիթի վրայէն, որուն երջանիկ օրերը կը հեռուընան հետզհետէ հրաժեշտի սղջոյնով : Զաւակներ սխալող հօր ամբարիշտ կրքերէն հրահրուած, ընտանեկան կեանքին ոսկի դրուագները կը քարուքանգին, և ընտանեկան սէրը հեշտանքի մոլուցքով կը խողի (ԺԳ. 2) : Զգացումի շեղ մոլորումը մեքենականութեան մը դժոխայնութիւնը կը սարքէ օրէ օր հալող մարդու մը մէջ . անոր հիւանդ մարմինին հիւանդ տուիլներ մատուակելով (ԺԳ. 5) : Գորովանքի նայուածքին կուսական բոլոր ամբուլթիւններուն տեղ նախատինքի անըզգամութիւնով կը ընուն թամարի որովայնը (ԺԳ. 14), երբ զգուանքէ ու կուսազգապիղծ լրբութենէ ծնած սոսկումն ու ամօթը կուսութեան «բազմագոյն պատուածան»ը կը պատուեն ու պարկեշտ առաքիլութեան վարդերը կը խամրեն աղջրկան դէմքէն, մոխիրներու սրսկումով (ԺԳ. 19) :

Խաւարը կը պատէ մծղնեայ տանը շուրջ, որուն երդիքէն մթին ու տարտամ ստուերներ կը տարուբերին :

Զղջացող հօր մը արցունքը կը քարանայ սաղմոսի տուերով : «Անթիւ շարիքներ զիս պատեցին . անօրէնութիւններս ինծի հասան . և ես չեմ կրնար տեսնել, գլխուս մազէն շատ են ու սիրտս զիս լքեց (Սղմ. Խ. 12) : Ցերեկ ու գիշեր արցունքներս ինծի հաց եղան (Սղմ. ԽԲ. 3) : Ամէն օր իմ նախատինքս աչքիս առջեւն է, ու երեսիս ամօթը զիս կը ծածկէ» (Սղմ. ԽԳ. 15) :

* * *

Ընտանեկան կցորդութիւնը կը լուծուէր պատրանքներու պէս . հոգիները կը թնդային գիշերներուն ծոցը պահուրտող այն սարսուռներէն, որոնք դարանակալ աչքերու պէս, կեանքի և պատուոյ արատներ կը նիւթէին : Ազգապիղծ մծղնէութիւնը անպատկառ ապականութեան հնոցներ կը բորբոքէր սրտերու մէջ, երբ ընկերներ խնջոյքի սեղաններ կը պատրաստէին (ԺԳ. 28, 29) : Հիմա երջանկութիւնը դիմայեղած ջատուկի մը ծիծաղն ունէր բերնին մէջ, հիւժած կմախքի տեսքն էր անիկա անցած զեղօրերու սեթեւեթներով, որուն առջև կսկծուտ սիրտը կը պոթկայ դժբախտ հօր մը հանդերձներու պատուածքին տակ (ԺԳ. 31) :

Հիմա տուններն ու ընտանիքները կը ժխորին (ԺԵ. 10) : Ծերունի հայրը, երբեմնի առոյգ և զուարթ պատանին, որուն կեանքը արեւի ցոլք մըն էր, հիմա ձիթենեաց լեռնէն վեր կ'ելլէր լալկան, դիմաստուեր ու բոկոսն (ԺԵ. 30) : Սի-

մէի լեռնամէջ հովիտները կը թնդային յոգնած ու յուսահատ հօր անէծքներէն, որոնք նետուած քարերու և հողերու արհաւիրքին մէջ կը թաւանային (ԺՁ. 13, 14) :

Խոճապները մթին թեւերով կը սաւառնին Եփրեմի անտառը (ԺԼ. 6) : Նեաեր ու նիզակներ կը շաչեն մէկ մէկու հանգէպ, երկինքին երեսը լուսածիրեր յորինող փախստեայ ասուպներու պէս : Խուլ, մռայլ հառաջանք մը կ'արձագանգէ անտառին անաւորութիւնը, երբ Իսրայէլի ամենէն գեղեցիկ և գովելի մարդը որ «ոտքին թաթէն մինչև գլխուն գագաթը» արատ մը չունէր (ԺԳ. 25), իր գանգուր մաղերուն հիւսած կախաղանը կը սարքէր բեւեկնիի թաւ ոտերուն մէջ, և հովերէն տարուբերուած դիակնացումը երկնքէն երկրիս վրայ կախուած գժոխքի մը պէս կ'երեւար (ԺԼ. 9) : Կեանքը կը լուծուէր տակաւ ձերունի մարգարէին մէջ, ուր հիմա ողբերու հեղեղատ մը կը պոսթկար (ԺԼ. 23) : Ալ մեռած էին իրեն համար տենջանքի ու փառքի օրերը, որոնք ընդունայն պատրանքներու յիշատակովը կը վերազարթնուին : Կանուխի յաղթանակներուն արշալոյսը հիմա մահաստուեր հորիզոն մը կը թանար իր առջև, և ինք որ սիրեց կեանքը, իր բոլոր թափառկոտութիւններուն, իր բոլոր բաղդախընդութիւններուն, երևոյթներուն, հաճոյքներուն և իր բոլոր ճոխութիւններուն մէջ, հիմա, իր ձերութեան օրերուն, անկէ ունայնութեան բաժին մը միայն կը կտակէր իր զաւկին :

Յաղթանակի մարդը պատշգամներու թու մըն էր եղած, յուսահատ, ցաւազար, որուն վայր-


կեանները կենեղուտ արեւու ջերմութեան անհաղորդ, բեւեռային սառնութիւններու հանգիստը կը փնտռէին :

Աղաւնիներ ու տատրակներ, կը թողուին քաղաքներու կայքը, և իբրև անաւոր ծաղր իր փճացո՞մ կեանքին, իր պատշգամներուն վրայ ծրտելով, կ'երթային՝ զուարթ վույլույով՝ անապատներու խաղաղութիւնն ու լուսութիւնը վայելել :

Նոր փղձկում մը մարգարէին հոգիէն, ա՛հ, վերջին հառաջանք մը մարող ճրագի մը պէս բեկբեկ :

«Երանի թէ աղաւնիի նման թեւեր ունենայի, թռչէի և հանգիստ ըլլայի, ու հետոն փախչէի, անապատին մէջ բնակելու համար» (Սղմ. ԾԵ. 6, 7) :





ԺԱ.

ԵՂԻԱ ԵՒ ՅԵԶԱՐԷԼ

Գ. ԹԱԳ. ԺԶ. 29 — Գ. ԹԱԳ. Բ. 13



ԲՕՆԱԿԱՆ սրբութեան երանաւէտ
ժամերը անցեալին կը վերաբերէին
ալ : Ենովայի և Իսրայէլի միջև կայ-
ծակներով դարձնուած հաշտարար
դաշնակցութիւնը՝ ուրկէ անապատի
ժողովուրդն էր ծնած, հիմա պա-
տըւտուած հիւսկէններու ծրիկները
կը կախէր՝ սարգի ոստայնի մը պէս՝
Յեզարէլի ոտքերուն տակը : Տիրոջը
նորակերտ տաճարը՝ Յաւիտենակա-
նին անթարթ աչքին պէս՝ ասպած
կը դիտէ բարձունքէն, Իսրայէլի առնութեան ծոցը
խլրտող իգութեան փայլատակումը, որուն դա-
հույքին առջեւ Ագաաբի սիրտը կը ծնրադրէր (ԻԱ.
25, 26) : Կրօնական թելին խորտակումները հրա-

չէկ այտուցքով պալարներու պէս կեղեր կը բանային: Բորտած հաւատքը՝ սրբագործութեան ճամբէն խոտորած, կը թալթալէր Ասփերաներու կամ փալեան ծառերու (arbres phalliques) ոստերուն ներքեւ: Համեստութիւնը անապատները կը խուսէր, երբ Ասփերաներու և Բահաղու քուրմերը կանացի սնգորուած յօնքերով շարժուէին կաքաւներ կը յօրինէին, մոլորուն՝ երազոտ երաժշտութեան մը հետ: Փոշին ամպի մզեղներ դուրս կուտար ոտքերուն տակը արբուստ մագրունիներու (gedeschoth), որոնք Սիւքէօի մերձակայ անտառներու մէջ Տիւրացի աղջիկներու լրբանի ցոփութիւնը կը տարողնէին: Աստուծոյ ժողովուրդը նոր ազգի մը ծնունդը կ'ողջունէր իր մէջ (ԺԶ. 31 ԺԸ. 19, ԺԹ. 14): Ի՞նչ են այս տարօրինակ փոփոխութիւնները. ի՞նչ են այդ գունատ դէմքերը, որոնք հեշտախտէն ծիրամ աչքեր ունին. ի՞նչ են այդ սեղանները, այդ տարօրինակ ծառերը, որոնք Սիդոնի անպարկեշտութիւնները կը մարմնացնեն:

Բայց ահա Ահաւորին ձայնը ծխանուտ գոլորշիի մը պէս կը պտուտքի հեռաւոր հօրիզոններէն: Պատիժը կը ծրագրուի սպագայի անէժքով: «Ո՛վ սեղան, ո՛վ սեպան, քու վրագ խուսկ ծխող բարձր տեղերուն քու ռմբը քու վրագ պիտի զո՛նէ, և քու վրագ մարդոց ոսկորներ պիտի այրին» (ԺԳ. 2):

* * *

Մարդերուն Յանդգնագոյնը Գաղաաղու խորերէն փրթած՝ Քուաթու հեղեղատին երկայնքը կը չափէ (ԺԷ. 5): Այխարձի հակապատկերը այս-

քան որոշ և այսքան ցայտուն կերպով ուրուագծուած չէր տակաւին: Բահաղու հեշտասէր, գինարբու, կնատ ու ցոփ քուրմերուն հանդէպ մէջտեղ կ'ելլէր լցստակեաց մարդը, կաշեգօտին, սեւամազ պարեգօտով, Նազովրեցին՝ կոյս մազերով ու խիզախ նայուածքով, որուն շրթներուն չէր դպած արբուցիչ գինին (Գ. Թագ. Ա. 9), Նաթին, լեռներու որոտումէն ծնածը, որ կայծակներ ու կրակներ ունի բերնին մէջ, վայրենի կեցուածքով, կոշտ մարմինով, որ քաղքի մը բարձերուն տեղ իբր օթոց ունեցած է լեռներու խոտը, ապառաժը, և իբր վերմակ՝ երկնքի կապոյտը միայն: Թափառական մարգարէն է անիկա, Աստուծոյ պատգամախօսը, նախանձախնդիրը... Եղիան, որուն՝ հիւրասէր ազուաներ դարպաս կ'ընէին գթոտ խնամքով (ԺԷ. 6):

Գաղաաղու խաղաղ հովիաներէն կենսասփիւռ ոգևորութիւն մը կը ծծէին հովիւները, որոնք շինական կեանքի երանաւէտութիւնը կը վայելէին, երբ Եղիայի շունչին տակ քարայրները ծնունդ կուտային՝ մարգարէից որդիներուն համար՝ վանական միանձնեայ կեանքին: Նախանձախնդիրը անհաշտ ատելութիւնով լեցուն՝ օտար պաշտամունքներուն հանդէպ, ահաւոր սաստկութիւն մը կը խառնէր իր օձանուտ, հրապուրիչ, կախարդող քարոզութիւններուն, որոնք կայծակի որոտումներով կը սարսէին հոգիները:

Յեզարէլի ճակտէն սպագայ դժբալդութեան մը սարսուռը կ'անցնի այրող փոթորկի մը պէս, երբ Պաղեստինի ծիծաղկոտ դալարիքին վրայ, հոն՝ ուր գարունը կը ծաղկազարդէ, և ուրկէ

Փիւնիկեան ծովուն ջուրերը կը պարզուին սառած երկնքի մը պէս, Տիրացի ճարտարապետներ արքունի պալատը կը քանդակէին ցօփ նկարագեղութիւններով : Նարովքի այգին . . . իր սղկուզոտ սարփինաներով կը տարածուէր պալատին առջեւ ափսէի մէջ դրուած՝ գեղեցիկ փունջի մը պէս : Ագաթի տան ոճիւնները, սակայն, գրացնութիւնը կ'անարգէին :

— «Քու այգիդ ինծի տուր, որովհետեւ իմ տանս մօտ է» :

«Տէրը ինծի չցուցնէ որ իմ հայրերուս ժառանգութիւնը քեզի տամ» (ԻԱ. 23) :

Յեզարէլ, կրակ կտրած այս պարզուկ պատասխանէն, կանացի մեքենականութիւնով մը մարդասպան հրամաններ մը կը դարբնէր իր ծոցը (ԻԱ. 8-10) : Ու այլ այնուհետեւ արդար մերժումը տեղի կուտար անիրաւ յափշտակութեան, երբ ծոմապահութեան կեղծ քարոզութիւններու միջոցին, Նարովք քարերու տարափին տակ կ'անշնչանար (ԻԱ. 13) : Մութր կը սկսի վարագուրել ոճիւն հետքերը, երբ դժոխքի մը տեսարանը՝ զուարթ՝ վրիժառու ծիծաղի մը հետքը կը թողուր Յեզարէլի այտերուն վրայ :

«Ելի՛ր, ժառանգէ՛ Նարովքի այգին, զոր ինքը ստակով տալ չուզեց, որովհետեւ Նարովք մեռած է այլեւս» :

Ու մարգարէին ձայնը, Սինայի որոտումին պէս կը գողար :

— «Մեռուցիր ու կը ժառանգես ալ . . . ան տեղը, ուր շուները Նարովքի արիւնը լափեցին, ան տեղը քու արիւնդ ալ պիտի լափեն, և Յե-

զարէլի մարմինը պարսպին տակ շուները պիտի ուտեն» (ԻԱ. 15, 19, 23 : Բզդտ. ԻԲ. 38, Դ. Թագ. Թ. 30-37) :

* * *

Յեզարէլի հովտին վրայ Կարմեղոսի վեհաշուք հրուանդանը կը բարձրանայ : Իր ընդարձակ խարխալը, որուն մէջ կողմը Պաղեստինի ծովուն մէջ կը կախուի, հոս ու հոն անձաւային խոռոչներ կը բանար : Այդ համոյր լեռները, որոնց գագաթի կապոյտը զուգագիծ գօտի մը կը շինէ Միջերկրականի ջուրերուն, բուրման հոտաւէտութիւնը կը ծծեն յակինթի, շահօքրամի և հորուտի գունագեղութենէն, որոնք պսակներու պէս կը հիւսուին, մայրիի, եղեւինի և սարգենիի անտառներու գլխուն : Ինութիւնը կը հարսնանայ՝ հոս՝ կոյս ամբռութիւնով, ոտքին տակ՝ երփնագեղ դալարիքին մորճ պարզութիւնները, որոնց մազերէն ջուրեր կը կախկիթին, և իր գլխուն իրր քօղ ընտրած՝ ամպերուն աստղազարդ գօտին : Զուարթ ու քաղցրարոյր անտառները իրենց բնութեան կանխորհրդաւորութեանը կը խառնեն այն օրերու սոսկումը, զոր կիսոնի հեղեղատը կը նիւթէր ամբարշտութիւններու հանդիսագրութեամբ : Բայց ի՞նչ են այն երգերը, որոնք կ'եղանակաւորին սարգենիներու տակ . . . ի՞նչ են այն աղջիկ ստուերները, որոնք լեռնամէջ կողերու ստինքներէն կը կախուին գիշերասէր ջղջիկներու պէս : Մինչ անդին զո՞նքը ամուլ սպասումով կը ննջեն սեղաններուն վրայ . . . ժողովուրդը՝ վճռական վայրկեանին վկան՝ արեան քրտինքը կը դիտէր քուրմե-

րուն , որոնք՝ օրն ի բուն՝ ճամբորդող կամ քնացող հրէշներու կը պուռային (ԺԸ. 27—29) : Ժողովուրդը կը սարսի , իրարու փոխանցող սարսուռով , երբ կրակու բոց կը վազէր մարգարէին աչերէն , որոնք սեղաններն ու զոհերը կ'այրէին (ԺԸ. 38) : Ամբօսը կը փոթորկի երկնառաք կրակէն , ուրկէ սրտերը կը մաքուին : Խուճապ , սարսուռմ իրարու կը պլլուին , երբ հրուանդանը կ'ամայանայ պիղծ պաշտամունքէն , և կիսոնի հեղեղատը կը խնջոյի քրմազոհի դիակներովը (ԺԸ. 40) : Երկինքի երաշտութեան ամուլութիւնը կը հերձի , անձրեւարեր փայլատակումով մը , որ ծովէն կը խտանար մինչեւ երկինք բարձրանալու համար (ԺԸ. 44) : Աստուած ալ կ'արտաստէր կարծես՝ անձրեւի մեծ ու խոշոր տարափով , ուրկէ սոված Իսրայէլ պիտի յաղենար :

* * *

Անէ՛ծք Մարգարէին . . . (ԺԹ. 2) :

Նզիա կը քալէր անապատին մէջ , երբ անգին Յեզարէլ ահռաները կը կճրտէր անլուր պատիժով մը փոխարինելու իր մաքրուիներու կոտորածին նախճիրները : Հիւսա յիշողութիւնը , անզուսպ միաքը մարդուն , իրարու մօտ թո՛ղ բերէ երկու դէմքերը ա՛յնքան աննման իրարու , որոնցմէ մին Տիրոջ օրհնութիւնը կը բերէր , և միւսը՝ ընա ջինջ Քանանականութեան վրէժք . մին՝ արդար սրտմտութիւնը ունէր , և միւսը՝ բարկութեան մուրացքը : Երկուքն ալ զիրա՛ր կը փնտռեն , ու երկո՛ւքն ալ խոյս կուտան իրարմէ՛ իբրեւ իրարու անհաղորդ տարրեր , մին՝ տանը խորը մոռնելու ,

և միւսը՝ անապատին մէջ մարելու իր յուսահատի նուազկոտ հասաչանքները :

Նզիա ու Յեզարէլ , մարգարէն ու ամբարիշտ կինը . . . ո՛րքան աննման իրարու :

Իայց պողպատէ մարգր՝ զգուած Իսրայէլի ամբարշտութեանէն , հիւս մահր կը փնտռէր , անապատի արեւներէն խանձուած , երբ օրուան յոգնածութիւնը կը փարատէր գիհիի դալար թփուտներուն տակ (ԺԹ. 4. 5) : Անօթին քունով կը յագենար Սարեփթացի կնոջ շօթերէն զուրկ (ԺԷ. 13) , երբ երկինքի հորիզոնէն փրթող հրեշտակային ստուերը իր սնունդը կը պատրաստէր (ԺԹ. 5—7) :

— «Նշիր , կե՛ր . որովհետեւ երկար ճամբայ ունիս երթալիք» . . . :

* * *

Վաստասուն օր քալած էր արգէն (ԺԹ. 8) աւազէ համատարած ովկէանին մէջ , ուր յոգնութիւնն ու ջերմութիւնը խնոցեր էին գինքը : Դէմքը աւելի տեղունած էր հիւս արեւակէզ վայրենութիւնով . քրտինքը փոշիներու խաւ մը պայուրած էր իր գանգուր մազերուն , որոնք ճերմակով կը խառնուէին հիւսա : Հողին՝ որ կ'էրէր իր ներսը , կսկիծին , երկրիցին և նուազումին միացած . յուսեակտի նաւուածքով կը դիտէր՝ ետին՝ տոհմիկ կեանքը , որուն ջիղերը կը թուրնային աւախանութեան պլլուած :

Քորերի քարայրը ամենէն ապահով ապաստանարանն էր իր լուծուած , քայքայուած մարմինին (ԺԹ. 9) : Հիւս այդ ահաւոր ամայութեանէն կը վերանար մինչեւ կարմեղոս , որոճալու իր նա-

խանձայոյզ վրէժխնդրութիւնները , իր վարմունքին գերյանդգնութիւնները , որոնք գերեզման մը կը բանային իր առջեւ :

— Լեռները քակող ու ապառաժները կոտորտող մեծ ու սաստիկ հով մը կը փոթորկէ : Բարձունքները կը կաքաւեն գինովներու պէս՝ իրենց ընդերքը խլրտող գեանաշարժերէն : Կրակը կը ծփայ լափող լեզուակներով : Նախանձաւորին հոգին կը վառէր իր ապուշ՝ ահաւոր դիրքին մէջ , ուր կեանքին քարացումը կ'արտատպէր , երբ յանկարծ զեփիւռի մը սօսափը համրոյր մը խլեց իր խանձած այտերէն . . . (ԺԹ. 11 13) :

Մարգարէն տեսած էր զԱստուած . . . :

Այ կեանքն ու գործը պիտի շարունակուէր ուրեմն : Սերունդի մը մէջ արմատացած սկզբունքը այս ապահովութիւնը կուտար իրեն : Այ մահէն հետո՛ւ երանաւէտ կեանքի մը մէջ պէտք էր ապրիլ հիմա , հանդարտ ու մեյա՛մալ ձոտ զեփիւռներու պէս :

Իր հոգին՝ պատուաստուած իր աշակերտներուն վրայ , հիմա կը ճեղքէր Յորդանանու գիծը , երբ մրբիկներու մէջէն հրեղէն կառքի մը թաւալումը երկինք կը տանէր Քորեթի մարգարէն (Դ. Թագ. Բ. 11) : Վերարկուն . . . կը ծածանէր փայլատակող արեւուն հանդէպ , և սուրբ գետին ջուրերուն վրայ , և որուն տակ կնտակ գլուխ մը կը խորհէր , Մեծ-Մարգարէին կրկին ոգին ստանալու համար (Դ. Թագ. Բ. 9. 13) :



ԺԲ.

Դ Է Պ Ի Բ Ա Բ Ե Լ Ո Ն

(Դ. Թագ. Ժ. 11 — ԺԷ. 6)



ՐԿԻՐԸ սրբուած էր Յեզարէլի և Գոթողիայի ամբարշտութիւններէն ու ցոյի պաշտամունքներէն (Ժ. 11—24. ԺԱ. 16) : Միայն հօս ու հոն կը ստուերագրուէին Նաբաբեան Յերոսովամի մեղքերը , ոսկեհորթի տափակ գանկերով (Ժ. 29. ԺԳ. 11. 2. ԺԵ. 9. 24. ԺԷ. 22. Լայն) : Եւ բարձրակեցրէր երբեմն կը ճենճերէին զոհի արիւններով (ԺԵ. 4. 35. ԺԷ. 10. ԻԱ. 3) , Խառնածին պաշտամունքները մէկ մէկու յաջորդող հանգոյցներ կը շինէին գահերուն առջեւ , երբ Մողոքի կրակները կը վառէին որդիներու գարշելի սրբութեանը համար (ԺԶ. 3. ԺԷ. 17.

ԻԱ. 6) : Կեանքը ալ կը սկսէր բորբոսներ ծլիլ չըջակայքի գէջութենէն , ուխտերու հանդիսադրութիւնը ամուլ բանդագուշանքի կամ անմիտ երազներու տպաւորութիւնը կ'արթնցնէր հիմա՝ իրենց մէջ , ինչու որ «Մնապաշտութեան ետեւէ գացին և իրենց չորս կողմը գտնուած ազգերուն հետեւող եղան» (Ժէ 15) : Գուշակներն ու հմայները , վհուկներն ու նշանագէտները սկսած էին գահիլ մարգարէներու հանդէպ (ԻԱ. 6) , երբ ասոնք հեծանքի տխուր շեշտերով կը պատմէին ապագայի կործանումները :

«Վայ . . . որովհետեւ անկողինն երկնալու համար կարճ է , և ծածկոցը ծածկուելու համար նեղ է (Ես. ԻԸ. 20) : Ահա բեռ կրող անասունները դէպի հարաւ , իժի և կիզող թեւաւոր օձին երկիրը կ'երթան , իրենց ստացուածքը էշերու կրունակին վրայ և իրենց գանձերը ուղտի սապատին վրայ կը տանին անանկ ժողովուրդի մը , որ իրենց օգուտ չունի . . . : Անոր համար սա անօրէնութիւնը բարձր պարիսպի մը ինչալու վրայ եզող ուռեցած ձեղքուածքին պէս պիտի ըլլայ ձեզի , որուն կործանումը յանկարծակի մէկ վայրկեանի մէջ կուգայ : Եւ զանիկա բրուտներու սափորին կոտորուածքին պէս պիտի կոտրէ . . . և անոր կոտորուանքներուն մէջը կրակարանէն կրակ առնելու կամ փոսէն ջուր հանելու կտոր մը պիտի չգտնուի (Ես Լ. 6 14) : Ո՛վ հանդարտ կնիկներ , ելէ՛ք , իմ ձայնս մտիկ ըրէ՛ք , ո՛վ անհոգ աղջիկներ , իմ խօսքիս ականջ տուէ՛ք : Օրերով և տարիներով խռովութեան մէջ պիտի ըլլաք , ո՛վ անհոգ կնիկներ , քանզի այգեկտիթը կորսուեցաւ , հունձքի ժամանակ պիտի

չգայ : Ո՛վ հանգիստ կնիկներ , դողացէ՛ք , ո՛վ անհոգ կնիկներ , խռովութեան մէջ ինկէ՛ք . հանուեցէ՛ք ու մերկ եղի՛ք , ու մէջքերնիդ քուրձ կապեցէ՛ք : Յանկայի արտերուն և պողարեր որթին համար կուրծքերնին պիտի ծեծեն : Իմ ժողովուրդիս երկրին վրայ փուշ և ցախ պիտի բուսնի , նաև ամէն ուրախութեան տուններուն վրայ , բերկրալի քաղաքին մէջ : Քանզի դղեակները երեսէ պիտի ձգուին , աղմկայոյզ քաղաքը պիտի թողուի . բերդերը ու պարիսպները յաւիտեան քարայրներ պիտի ըլլան ցիւրերու զուարճութեան համար և խաշինքներու արօտ ըլլալու համար» (Ես. ԼԲ. 9—14) :

Ի զուր կը պոսար մարգարէն , իր հոգիով օժուած բառերուն մէջ դնելով ապագային սարսուռը :

— Հեշտանքի գինովութենէն մաշած ժողովուրդներ քանանական պաշտամունքներով կ'ըմբոշինն իրենց հոգիի ծարաւը : Իսրայէլի աղջիկները Բիրլոսի աղջիկներուն պարը կը ձեւացնեն ցոփ ուրախութիւններու և անասնձ մոլորումներու մէջ նորէն ծնցնելով Ագոնիսի տարաշխարհիկ մանկութիւնը : «Սեւ մագերու առատ և ոլորուն խուրձեր կ'իյնային քիչ մը ամեն դի , իրենց զըլխուն վրայ , ուր ականջները կ'անհետանային անոնց ալեծփանքին տակ և թուխ՝ մսեղ իրենց դէմքը շքեղօրէն կը չըջանակուէր : Ածուխէ աշուրներ դեռ կրակ չեղած , արդէն իսկ կ'այրէին իրենց յառօղները , արեւին նայելու յանդգնողներուն պէս , և կարմիր հաստ չըթուսքով լայն բերաններ , հեշտանքի հոսանք մը դուրս կուտային :

երգելու համար կձկուելով աւելի բացուած ատեն: Իրենց բաց կոկորդներէն, ուրկէ վար իրենց մութ մարմիններուն խորհուրդը կը ծածկուէր, համարյոյր թաց շոգիներ կ'ելլէին վեր» (*): Գինովներու հր-պարտութեան պսակը ծաղիկներու դրասանքովը կը պճնուի բարձունքներու տօներուն մէջ, որոնք մոլութեան աղաղակներով կ'արձագանգէին: Եւ ահա բեւեկնիի հովանիին տակ շոգիացող աղտոտ համարյոյրները կը չորնան՝ յանկարծ՝ մարգարէական սպառնացումէն:

— «Յակօրին յանցանքին պատճառը ո՞վ է. Սամարիա չէ՞: Եւ Յուդայի բարձր տեղերուն պատճառը ո՞վ է. Երուսաղէմ չէ՞. Ուստի Սամարիան դաշտի քարակոյտի և այգի տնկելու տեղի պիտի դարձնեմ, անոր քարերը ձորին մէջ պիտի գլտորցնեմ, և անոր հիմերը պիտի բանամ, և անոր բոլոր կուռքերը պիտի կոտորին, և անոր բոլոր նուիրուած բաները կրակով պիտի այրին, և անոր բոլոր արձանները բնաջինջ պիտի ընեմ, քանզի անոնք բողի վարձքով ժողվեց և բողի վարձքի պիտի դառնան: Անոր համար պիտի ողբամ և պիտի հառաչեմ, անծածկոյթ ու մերկ պիտի չըջիմ. շնագայլերու պէս կոծ, և ջայլամներու պէս սուգ պիտի ընեմ. . . . Քու սիրելի որդիներուդ համար մազերդ փետտէ՛ ու կտրէ, կնտութիւնդ արծուի պէս շատցուր, քանզի քեզմէ գերութեան գացին» (Միք Ա. 5—16):

Երուսաղէմի պարիսպները կը ճեղքուին (Երեմ. 1Թ. 2) և կը կործանին, արիւնը կը հոսի ուղիսօ-

(*) ՃՕՆ ԹՕՄՄԻ-ի «Կայծուհին» կտորէն:

րէն, կրակը մոխիր կը սփռէ չորսդին, երբ Սե. դեկիայի աչքերը՝ վերջին անգամն ըլլալով, կը տեսնեն գէթ պատիժին ահաւորութիւնը (Երեմ. 1Թ. 5—7): «Բանուկ ճամբաները ամայի եղան, երկիրը սուգ կը բռնէ ու կը նուաղի, Լիրանան ամօցաւ ու թոռմեցաւ, Սարօն՝ անապատի պէս եղաւ, Բասան ու Կարմեղոս կը թոթվուին» (Շա. 1Գ. 8, 9), որովհետեւ երկրին բնակիչները՝ քար ու քանդ թողած ետեւնին՝ հառաչանքով իրենց կեանքը կը քաշկուտեն մինչև Բաբելոն (Գ. Թագ. ԺԵ. 29, ԺԷ. 6):

Պաղեստինի վրայ պատուհասը քարէ ակօսներ բացած էր, աւերքը ամայութեան ահարկութիւնը կը սփռէր չորսդին, և մեռած կենդանութիւնը որդնակեր գարշութիւն մը կը ցուցադրէր այն վայրագ յեղուզակներուն որոնք աւերակէ աւերակ կը թագչէին, յուսահատ գողերու վազքով, հեռուէն միայն, Ամմոնի և Մովարի սահմաններէն, գոհունակութեան ծիծաղ մը, հովերու թեւերէն քշուած կուգար կ'անցնէր այդ աւերակներուն վրայէն:

* * *

Տիգրիսի և Եփրատի խառնարանին մօտ, գետերուն երկայնքը ու արմաւենիներու տակ մերկ ժողովուրդներ կը չըջին: Քաղա ու Քարովր ամուր շղթայի մը պէս իրենց յանցերուն մէջ կը պահէին զանոնք, որոնք ակամայ հիւրերն էին իրենց, ճակատագրին մէկ ցուրտ խաղէն իրենց պարիսպներուն մէջ նետուած: Աքսորականները իրենց հառաչանքը կը լուանային յորդ արցունքներով,

որով կը պոսթկան, իրենց երկրին մէջ գործուած պղծութիւններու յիշատակէն գերագրգռուած, և ողբերը կականով կուլան կեանքի խորտակուած երջանկութիւնները (*):

Իսրայէլի կայթուհիներուն ածուխ աշուրները հիմա մոխրացած գնտիկներ եղած էին իրենց մաշուած յօնքերուն ներքեւ, և որոնք արցունքի իրրեւ աղբիւր միայն կը ծառայէին, մամուռ կապած փողարակներու պէս բիժերով լեցուն: Կեանքը լացի երաժշտութիւն մըն էր եղած, հառաչանքի, յուսահատութեան յոռետես երաժշտութիւնը որ ա՛լ անտանկի կը դառնար Բաբելացի երիտասարդներու անպայման պահանջումներուն և սուր ծաղրանքին միջև: Տեղացի աղջիկներ իրենց դափերով խնձղուն պարեր կը յօրինէին գետեզրը, և իրենց այտերուն վրայ կը վարդերանգուէր գերագոյն գրգռանքը. հեշտանրի եռք մը, ծարաւ մը կը սրսկուէր չորսգին:

— Մեզի երգեցէ՛ք ձեր ուրախութիւններէն, ձեր Սիօնի երգերէն:

— Բայց մեր անաղի քնարները կախուած կը մնան ուռիներէն . . . :

«Տիրոջը երգը ի՛նչպէս երգենք Բաբելոնի մէջ: — Ո՛վ երուսաղէմ թէ որ քեզ մոռնամ, թող իմ աջ ձեռքս իր պաշտօնը մոռնայ. թո՛ղ իմ լեզուս քմայս փակչի թէ որ քեզ չյիշեմ, թէ որ երուսաղէմ իմ գլխաւոր ուրախութենէս աւելի մեծ չհամարիմ» (Սղմ. ՃԼԷ):

* * *

(*) Այս կտորին կից անհրաժեշտօրէն պէտք է կարդալ Ս. Դրբէն, Ողբ. երմ. է. 1 - 22 համարները:

Բաբելոնի մէջ բան մը չէր փոխուած, հակառակ Իսրայէլի խիզախ մարգարէներուն չարամաղթ գուշակութիւններուն: Մեծ Քաղաքը, Նինուէն, Յովեանու փորձութեան այդ մօլին, միշտ կանգուն կը մնար իր մեհեաններով, իր պալատներով, իր կախաղանաւոր պարտէզներով, իր շքեղութիւններով, որոնց ամենուն վրայ ամբարշտութեան մը կնիքը դրոշմած էին Պաղեստինի կողպուտները: Եւ չըջականերու աւարները՝ ոսկիով և արծաթով վարձատրուած, աւելի հեղգ, աւելի թարմ թափ մը տուած էին այն մեղմիս գինարբուններուն, որոնք արեւին շողերով կը հագուեցընէին իրենց մերկ մարմինները: Զուարճութիւնները, ցոփ տօնախմբումները, հասարակաց բարիքին պէս կ'ըմբռնուէին մեծամեծներէն մինչև հասարակ ժողովուրդէն, որ նոր դարձած՝ յաղթական, իրենց կուլէն յօգնած մարմինները կը մեղկէին հանգիստ տարիանքներու մէջ:

Զուարթ գիշերներէն մէկն էր: Լուսաւորները կարծես դաշնադրած էին, ա՛լ աւելի փառազարդ շքեղութիւնով մը դրուագելու Բաղդասարի վերնատունները, ուր գինարբու գեղումներով կը յղփանային հրաւիրեալներ: Ոտքերու կաքաւը, հանգրիծուած քղանքներու տակ, սրունքներու վեր ոստումները գինովցուցած էին արդէն հարձերն ու կիները, լոյսերու շատրուանումին և այն մութի մէջ երգուած կրակոտ՝ սիրաբոյր երգերուն մէջ, որոնք գրգռումի խաղանք մը, վայելքի պատուք մը կ'արթնցնէին իրենց ներսը (Դան. Ե. 3): Սիրտերը կը ձգտուէին ու կը պրկուէին արբուտ երեւակայութենէն, ու մատ-

ուսակուած ձօներէն մտրակուած , երբ Երուսաղէմի տաճարէն հանուած ոսկի և արծաթ նուիրանօթները կը պղծուէին մանկաւիկներու մատներով (Դան. Ե. 4) :

— Բայց ինչո՞ւ սիրտերը կը խռովին , ինչո՞ւ դիմագիծերը կը խորշոմին սոսկումի չոր դալուկով , ինչո՞ւ մերկ ծունկերը կը դողան , և մսուտ ոտքերը կը կթոտին կաքաւողներուն , և երկիւղի սուր աղաղակը կը թնդայ խուճապով վազող քաւդեայներուն և բախտագէտներուն հանդէպ , և ինչո՞ւ աներեւոյթ թաթին մատները Բաղդասարի սրահին ձեփերուն վրայ խորհրդաւոր նշանագրեր կը փորեն :

— Կը քայլէ աքսորականը , որուն հիւժած դէմքը , դէգ խիզախ անկեղծութիւնով մը կը խորհրդաւորէ իր Խորհուրդի մտածումները : Իր յանդուգն համարձակութիւնը կը դարբնէ գաղտնիքներու բանալին , աներեւոյթ թաթը կը պարզի , կը նիւթի , կը հայելիանայ խորհրդաւոր լուսնի ծոցէն , ուրկէ դուրս կը սուրայ բառերու վճռական երրորդութիւնը ՄԱՆԷ , ԹԵԿԵՂ , ՓԱՐԷՍ (Դան. Ի. 25) :


Մանէ , Թեկեղ , Փարէս կը մուտային դողացող շրթներ , երբ գիշերը ոճիրներուն ամենէն սոսկալին կը նիւթէր Յաղթականին դիտուն (Դան. Ի. 30) , և երբ դէպի Երուսաղէմ բացուած պատուհաններէն Դանիէլ կը դիտէր գուրը յոգնատխուր և վախուտ , գուրը առիւծներուն որուն կափարիչը օր մը իր վրայ պիտի կնքուէր (Դան. Զ. 10, 16, 17) : Առիւծներուն աչքերու բոսորէն լուսաւորուած գուրի խաւարը , դատապարտեալին

վրայ ձգուած իբրև վերարկու , նոյն թաթը կ'երկարէր , և նոյն գիրերը կը խորհրդանկարուէին , մարդերու աչքին անտես Մանէ , Թեկեղ , Փարէս երբ տխուր ձայն մը գինքը ի լոյս կը կոչէր (Դան. Զ. 20 — 24) :

Գերութեան պատուհասը սև երիզի մը պէս կը շրջանակէր՝ անհատնում , անվերջ մեղքերէն հիւսուած՝ մարդկութեան ճակատը , և հոգին աշխարհի հովերուն կը հարցնէր շարունակ .

— Ո՞վ պիտի ոսկեզօծէ այդ շրջանակը , ո՞վ պիտի մաքրէ այդ մեղքը :

Ու վիշտերէն յոգնած՝ թափառկոտ մարդը , յափրացած ունայնութեան ըմբռնումներէն , ի զո՞ւր կ'որոնէր սեղաններէն , բարձունքներէն , ծեսերէն ու պաշտամունքներէն , իր կեանքը , ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ , որուն մէջ հանգչէր ինքը , իբր վարդէ անկողիններու մէջ : Ով պիտի քայքայէր Մասիայի որոգայթները ու թափորի վարմերը (Ովս. Ե. 1) , և ե՞րբ տխուր յիշատակներուն երգը պիտի խառնուէր մարդուն ուրախ օրհնութիւններուն (*) :



(*) Այդ օրհներգութիւնը կարդացէր Սղմ. ձեռն.

Բ. Գ Ի Ր Ք

«Յխուս անկիւնաբարն է քիւ-
սնէութեան, իր անունը առ-
խարհէս վերցնելու կամ խղելու
անմիտ փորձ մը անգամ, մարդ-
կութիւնը մինչեւ իր հիմերը սա-
սանիլ պիտի նշանակէ»:

* * *



Ա.

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ը



ԱՆԻ մը դարեր անցեր էին արդէն, Հին Կտակարանի ա՛յն պատահարներէն ի վեր, զորս նկարագրեցինք:

Պաղեստին տարօրինակ դէպքերու և դէմքերու յիշատակները կը պահէր հիմա իր նորայէն պարիսպներուն ետին: Զանազան աղգեր գաղթական կռուներու պէս եկած անցած էին իր վրայէն, կառավարական ձեւի մը, կրօնի մը և լեզուներու իրարու յաջորդող բեկորները թողլով հոն: Եւ խաղաղութեան բաղձանքը արիւններ թափած էր իր դալարագեղ բարձունքներուն վրայ (Մա-

կարեանք. տե՛ս նաև Ղուկ. ԺԳ. 1, Գործք. Ե. 36, 37): Հիմա Հռովմէական գրօշները կը ծածանէին Թափորի բարձունքէն մինչև Սուրբ Քաղաքի աշտարակներուն վրայ. և երկիրը պանդուկ մը դարձած էր կարծես, խառնազանճ բազմութիւններու առջև, որոնք վարձկաններու պէս կը գիշերէին հարթ տանիսներուն ներքեւ:

Նազարէթ . . . :

Յեզրայէլի դաշտին հիւսիսի սահմաններուն վրայ ուղղաձիգ բլուրներ կ'երկարին Յորդանանու հովիտէն մինչև Միջերկրական: Լեռնագօտիին մէջտեղ կը նշմարուի խրամատող ճեղքուածքը, որ կը բացուի հովիտին վրայ՝ վերջաւորուած ծաղկազարդ կածանով: Գեղազարդ հովիտը՝ մայրառատ պարտէզներով հովանաւորուած՝ գարնան անձրեւներէն վերջ, խաղաղ լուսթիւնով մը նուիրապործուած, ամենէն հարուստ և ամենէն գունազեղ մորճութիւնով կը զարդարուի: Հովիտը երթալով կը բացուի ձեւացնելու համար լեռներուն պզտիկ ամփիթատրոնը, զոր ոմանք մարած հրաբուխի մը բերանն ըլլալ կը կարծեն: Պարտէզները կը զարդարուին, շուրջանակի ձիթենիներու և թղենիներու առատ կանանչով, որոնց մէջ նարինջի և նռնենիի ծաղիկները՝ նախշուն բանաստեղծութեան մը պէս, դիւթիչ ներդաշնակութիւն մը կը հիւսեն: Ազաւնիները կը վուվուեն թեւաբախ, յոպոպը՝ իր գարգամնակը սանտրած՝ նետի մը պէս կը սուրայ, և կապոյտ ճուռակը (rollier) իր թեւերուն ու կուրծքին երկնագոյն վարդերը բացած, կը ճախրէ կռածայն, ծաղկակիտուած մարգերու բուրումնաւէտութիւնը ծծելով: Ահա այս

տեսարանին գիրկը կը հանգչի, մատնիի զարդարուն ակնակապիճին մէջ ագուցուած գոհար աղամանդի մը պէս, այն պզտիկ քաղաքը՝ ՆԱԶԱՐԷԹ [Այնը Սարիտ], զոր Հերոնիմոս «Գալիլիոյ ծաղիկը» յորջորջեց (*):

Ան օրերուն խոշոր իրարանցում մը կար Նազարէթի մէջն ու մօտերը: Սառնածին զուգաւորութիւններէ ծնած կոյս գեղեցկութիւնները՝ որոնք անհամեմատ հրապուրանք մը կը սփռէին իրենց դուռներէն, և մանուկ հօտաղները, որոնք՝ երջանիկ ու հպարտ, իրենց զգեստին բազմագոյն այլանդակութիւնները կը ցուցադրէին, ամենքն ալ իրենց գործերը թողած, անցորդի կարաւանները կը դիտէին: Ի՞նչ են այդ շարժութիւնները, որոնք ծիծեռնակի գաղութը կը ձեւացնեն յոգնաբեկ, ի՞նչ են այդ մարդերու երթեւեկները գիշերին լուսնին տակ (Ղուկ. Բ. 1—3):

— Քաղաքէն դուրս կ'ելլեն ծերունին ու կոյսը, որոնց վրայ քանի մը ամիսներ առաջ տարօրինակ առասպելներ կը պատմուէին նենգաւոր, զրպարտող բերաններէ (Մտթ. Ա. 18—20): Հրեշտակային այցելութեան մը տպաւորութիւնը ամօթի չիկնուումին հետ խառնուած, սրբութեան մը նշոյլներով կը գեղազարդէր երկուքին ալ դէմքերը (Մտթ. Ա. 15—25), որոնցմէ միոյն՝ Նազարէթի ծաղիկները կը նախանձէին, և միւսին՝ հասուն փորձառութեան մը միացած համակերպող լրջութիւնը (Ղուկ. Ա. 26—38):

(*) Սոյն տեղագրական ծանօթութիւնները բաղուած են La Société juive-էն, գործ՝ Dr. Edersheim-ի, Թարգմ. Ֆր. Gustave Roux-ի:

Կարաւաններէ ոմանք կանգ կ'առնուն Յուդայի լեռներուն սիրտը, հոն, ուր երկու բլուրներու խաչաձեւած կատարին վրայ կը բարձրանայ անշուք տուներով՝ Բեթ-ղեհէմ: Խորափիտ հովիտներ ամենուստ կ'անջատեն գիւղը: Սեպ սեպ ժայռեր՝ հոս ու հոն միացած որմաշէն քարերու իրենց արգանդէն դուրս կը պտկեն սարահարթ կանաչութիւններ, որոնց մէջէն շարիշար կը բարձրանան այգիներու սարփինաները, ձիթենին, թղենին, նշենին ու եղջերենին: Հիւսիսէն և արեւմուտքէն հորիզոնը փակող լեռները ցուրտ սարսուռներու պէս կը կախուն գիւղին վրայ, մինչ արեւելքն ու հարաւ կը թափանցկոտեն հորիզոնական շրջատեսիլները: Վարը, աւելի հեռուն, Պէյթ-Սաուր գեղէն և Բոոսի դաշտերէն անդին, Յուդայի անապատին գոնջ մերկութիւնը կը ցցուի, լերկ, ամուլ ու աւազուտ լեռներով, որոնց վրայ կարծես աւերակի մոխիրներն են սփռուած: Լեռներու այդ մերկութիւնը կը դողայ վերջալուսի բեկբեկ ճառագայթներէն, երբ միւս կողմը Մովաբի մանուշագոյն լեռները կը թողուն որ իրենց ստորոտը տարուբերին Մեռեալ ծովին մութ կոհակները (*):

Ժխորող բազմութիւն մը լեցուցած էր անշուք տուները, և այն իջեւանը, որ գիւղին մէկ կողմը կ'երկնար: Յոգնած զուարթութիւններու վերջին արձագանգները կը մարէին հետզհետէ, երբ երկու անցորդներ դուռնէ դուռ ապաստանարան մը կը մուրային: Բայց գիւղին և «իջեւանին մէջ իրենց տեղ չկար» (Ղուկ. Բ. 7): Ո՛վ պիտի արգահա-

(*) P. Didon, — J.-Christ, p. 120—121:

տէր խեղճերդն վրայ, որոնք ազքատի կերպարանքով կուգային. ո՛վ հաճութեամբ պիտի բաժնէր իր տեղը ա՛յն ալջկան հետ, որ քանի մը վայրկեան վերջ մայր ըլլալու սահմանուած էր: Տուն մը յատկանշող ինքնութիւնը չկար հոն, ամենքն ալ իջեւան եղած էին, իրարու անհաղորդ, անկարեկիր, անձանօթ զգացումներով: Երկիրը՝ իջեւան, գիւղը՝ իջեւան, սիրտերը՝ իջեւան, և այդ բոլոր իջեւաններուն մէջ իրենց համար տեղ չկար:

Անհիւրասէր այդ գիւղէն դուրս, ծերունին սարսուռ մը ունեցաւ իր մարած սիրտին խորը, և փոշիներու մէջ խեղդուած կոյսը լեռներու կաւային խորափիտներէն դէպ ի ետև դարձուց աչքը: Հեռո՛ւն, Յուդայի անապատը իր լեռներու մերկութիւնով, Մովաբի ապառաժները իրենց մութ կոհակներով, և կոնաձեւ Հերովդիոնը, ուր ծերունին Հերովդէս յաւիտենական քունը պիտի քնանար, գիշերին ծոցը խոկացող և զիրենք դիտող հսկայ, անպարոյր խուճապներու պէս լքուած վիշտեր կը մաղէին իրենց վրայ: Աւելի մօտը, Միգաւալ-Եէտէրի աշտարակին քովերէն, նուիրական հօտերուն պահապանները կ'երգէին գիշերի ալէլուները, երբ երկինքի լոյսերը կը շողային եթերային տարածութիւններէն: Այդ տարտամ սպասումին մէջ, ուր հոգիները, լքուած, յոգնած ու անպատասպար հոգիները կուլան, ծերունին դարձաւ և ըսաւ կուսին որ երկունքի ցաւերով լեցուած կը գողդղար. — Եկո՛ւր, երթանք, ու մտնենք սա քարայրը, որ ի՛մ ալ մանկութիւնս է տեսեր. ի՛նչ փոյթ մեզի թէ մտաւ կը կոչուի

ան . եկո՛ւր և թող հոգիին զաւակը , քո՛ւ զաւակդ քարէ խանձարուր մը ունենայ գոնէ (Ղուկ. Բ. 7) :

Ծնած էր Յիսուս :

* * *

Լքուած այդ ամայութիւնը , որուն մէջ՝ վայրկեան մը առաջ՝ կը քնանար ամեն բան , հիմա նոր ոգեւորութիւնով մը կը խլրտի : Երկնային մարմինները լուսեղէն ցնցուղներ կը սրսկեն շուրջանակի , ՄՍՈՒՐին դրան վրայ դրուագելու այն հիասքանչ լուսապատկերեր , որոնք Գերագոյնին Աթոռը կը բահուանդեն : Անքուն հովիւներ իրենց ալելուքը միջատած , ապուշ նայուածքով մէկ մէկու կը հարցնեն հրաշալի գաղտնիքները այն փոփոխութիւններուն , որոնք նորահրաշ տեսիլքներով կը բեղմնաւորէին : Հրեշտակային լուսափետուր թեւեր կը սաւառնին երկինքի նօսք շամանդաղներէն վար , ուրկէ խաւարասէր ջղջիկները կը խուսին զարհուրած : Նորածին Արդարին քունը ամենէն ահաւոր և գերերկրային հակապատկերը կը հիւսէ աշխարհի , ուր մէկ վայրկենի այդ անցու՛մը իր մէջ կը ծրարէր Յաւիտենական Խորհուրդներուն ամբողջութիւնը : Հովիւները սկսած էին ա՛լ իրենց դէմքերը վարագուրել այն սոսկումներէն որոնք իրենց հոգիներէն կը ծնէին (Ղուկ. Բ. 9) :

— Փառք ի բարձունս Աստուծոյ , և յերկիր խաղաղութիւն , ի մարդիկ հաճութիւն (Ղուկ. Բ. 14) :

Խաղաղութեան և հաշտութեան երգը կը թրթուար հրեշտակներու բերնէն , երբ հովիւները

զարհուրած , խորհուրդներու մեծութենէն , կ'ըսէին մէկ մէկու .

— Եկէք մինչև Բեթղեհէմ երթանք , և տեսնենք , թէ ի՞նչ է աս եղած բանը , զոր Տէրը մեզից ցոյց տուաւ (Ղուկ. Բ. 15) :

* * *



Չարմանքի հետքերը կը բազմապատկուէին հետզհետէ (Ղուկ. Բ. 18) , երբ երկնային լուսատեսիլը իր գիսաւորը կը ձօճէր Յուդայի փոքրագոյն գիւղին վրայ (Մտթ. Բ. 9. բղբ. Թիւք ԻԴ. 17) : Դարերէ ի վեր արմատացած հաւատքը գիտունին ու տգէտին , պատմաբանին ու աստղաբաշխին , իմաստասէրին ու քաղեային աչքերը երկինք սեւեռած էր , Անհունին ծոցը գտնելու համար Մանուկ-Թագաւորին ծննդանիշը , ԳԻՍԱԻՈՐը , ուրկէ թագաւորներ պիտի դողային (Մտթ. Բ. 3) :

Հարուստ նուէրներով բեռնաւորուած անծանօթ մարդեր , մոգական դիւթ նայուածքով , քաղաքին մէջ տարտղնած էին արդէն « Հրեայներու թագաւորին ծնունդը » : Անմիտ անտարբերութիւնը կը ծաղրէր զիրենք . անհանդուրժելի այդ քմմիծաղներուն հանդէպ անխռով հոգիները անսասան հաւատքով մը զօրացած , ու զօրացած գիտութեան լոյսերէն .

— Մի՛ ծաղրէք մեզ , կ'ըսէին , մենք չենք ստեր բնաւ , ինչու որ մենք Արեւելքի մէջ Անոր աստղը տեսանք ու եկանք Անոր երկրպագութիւն ընելու (Մտթ. Բ. 2) :

Գուցէ՛ ճշմարիտ եղած ըլլային անոնք . . .

ինչ փոյթ մեզի, կ'ըսէին, արծաթի ծարաւէն անկուշտ քահանաներն ու դպիրները, որոնք Հերովդէսի պալատէն կ'իջնէին. (Մտթ. Բ. 4—6), երթալ քնանալու համար անտարբերութեան փափուկ բարձերու վրայ :



Բ.

Ն Ա Ջ Ո Վ Ր Ե Յ Ի Ն



ԲԿՁՐ տարիներ իր միտքին մէջ գամուած մնացին մանկական յիշատակները այն խորունկ տպաւորութիւններուն, զոր անիկա ունեցաւ՝ յափշտակուած ու խոհուն, երբ առաջին անգամ ինքզինքը դէմ յանդիման գտաւ Երուսաղէմի, այդ ոսկեղէն քաղաքին (Ղուկ. Բ. 42) : Օրէ օր կը մեծնար, հոգիով զօրուոր և իմաստութիւնով լցուն (Ղուկ. Բ. 40), և իր ունեցած շնորհները կը սքօղէին կրայոյց երիտասարդութեան արթնցող թելադրութիւնները, զանոնք ներդաշնակաւորելով հոգեղինութեան և մարդկայնութեան կատարեալ լծորդութեան մէջ : Իր հօրմէն ու մօրմէն խզումը, մանկութեան օրերու հոգեկան պէտքերէն մին եղած

էր (Ղուկ. Բ. 43—48) : Իր «Հօրը տունը», այդ պաշտամունքի և հաւատքի ձուլածոն (Նոյն. անդ. 49), իր գանկին մէջ կ'արթնցնէր բաներ մը, որոնք ի սկզբան շատ տարտամ և շատ անորոշութեամբ մեկնուեցան : Իր գիւղին խառնածնութեան հրապուրանքը, որուն մէջ Փիւնիկեան, Արաբական, Սեմական և Յունական արիւնը կ'երանգաւորէր, նրբաձև ու շամբուշ յօրինուածութեամբ, իր տենչանքներուն հակահարուածը կը կազմէր, և այդ միջավայրին աշխարհայնութիւնը իր միտքիք զայրատենչութեան յագուրդ տալու ու է երեւոյթ չէր ցոյացներ իր հոգիին մէջ : Իր երազուն սեւեռամտածութեան հանդէպ խուճապի մը պէս կը ցցուէր Նազարէթ, այդ այլասերուած քաղաքը, որուն թողած ցուրտ տպաւորութիւնը մեծցաւ իր տարիքին հետ, և նոյն իսկ՝ շատ վերջը՝ իր քարոզչական կեանքի օրերուն, ցուրտ հառաչանքի մը կսկծուտ վայրկեանին, «Մարգարէն իր գաւառին մէջ պատիւ չունենար» ըսած էր հանդիսաւորապէս (Յովհ. Գ. 44. Ղուկ. Գ. 24) : Իր այդ վայրկեաններուն աշխարհի կրօնական դրութիւնները՝ իրենց հազարաւոր դարերու գոյութիւնով փուլուցումներ կ'ունենային իր միտքին մէջ : Հաւատքի անսխիթ նրբերանգութիւնը կը բողբոջէր իր հոգիին մէջ, երբ հրէական ծիսակատարութիւնները կրօնքի հիմը կը պղծէին :

Երբեմն առանձնանալու պէտքը կը զգար. մտախոհ ու լրջացած, իր ետին կը թողուր գիւղը, այդ լպիրշ զուարթութեան և հրապուրիչ գեղութիւններու շրջանակը, և կ'երթար կարգալու բնութիւնը, ծիծաղկոտ ու վսեմ բնութիւնը, որ

իր գաղափարներուն յեղաշրջութեան առաջին ազդակներէն մին եղաւ (*) : Դէպ ի արեւմուտք երկարող կարմեղեան լեռնագօտին, որ իր մացառուտներուն մազերը կը կախէր ծովու անպականութեան գիրկը. Մակեդոնի հովանաւորող բլրակները, Սիւքէմի երկրին բարձունքները իրենց սրբարաններով, Թարթի շքեղաշուք բոլորչին, և Սուլէմի կշտին երիզը, ուրկէ Յորդանանու հովիտը կը բացուի, Պիրէոյ ապալեր բարձրաւանդակները, և հորիզոնը, նեղցած ու սրածայր հորիզոնը, ուրկէ՝ իրբեւ նեղ պատուհանէ մը՝ անհունը կ'ընդնշմարուէր, ասոնց ամենը Իրեն կը ներշնչէին վսեմին ու Մեծին գաղափարները, անշատ ծէսէն ու նիւթէն, որոնց մէջ մարդկային հոգին կը նուաստանայ : Նազարէթ, հակառակ իր անուանարկութեան, հակառակ իր ոչ-օրինական օրթոտոքսութեան, շնորհիւ իր շուրջեզրի բնական վեհութիւններուն և վերելակող բարձունքներուն ահաւորութեան, հետզհետէ կ'ըլլար Նազովրեցիին համար «Աստուծոյ թագաւորութեան որրանը» : Թիւր մեկնարանութիւններէ խանգարուած սիրոյ ակունքը, հիմա բնութեան ջինջ տողերովը ուրուագծուած, և ներդաշնակաւորուած դաշտերու շուշաններէն, տիեզերական եղբայրութեան կը տանէր իր մասածումները, և այդ յուզումնալից տեսլերեւոյթին խորը կ'արթննար յանդուգն ընծայութեան մը տենչը, իր գերագոյն, վսեմցած ու նրբերանգ խառնուրդով, որ ի զուր երիտասարդութեան կնճռոտութիւններուն, այդ իր հո-

(*) Ռընան. ԿեԱՆԲ ՅԻՍՈՒՍԻ.

գերանութիւնը մթագնող մշուշներուն մէջէն կ'որոնէր մեկնակէտը իր դիրքին, իր կացութեան և իր բռնելիք ուղղութեան :

Նազովրեցիին մէջ Աստուածորդին կը խոկար... :

Վսեմին ու վեհութեան ձգտող իր լուսաբորբ երեւակայութիւնը երբեմն յանկարծ կը մթննար աիրող դժուարութիւններուն հանդէպ, ու ալ Անհունին գիրերը տարտամ գիծերու հետ կը չփոթուէին իրեն համար : Իր միտքին մէջ բզզացող յայտնութիւններուն սքանչանքը քրտինքներով կ'ողողէր իր ամբիծ ճակատը, որուն տակ իր հոգետես և երազուն աչքերը կը նուաղէին : Եւ ոգեկան կրօնի բանաստեղծականութիւնը, իր անդրատեսչ խոկացումով, կը ստիպէր զինքը թողուլ բլուրներուն արբշւանքը, և ցնորակոծ գեղջկութիւնը Նազարէթի ամառի գերեզմաններուն, և երթալ ժամերով փակուիլ տունը՝ իր մօր մխիթարող գիրկը : Այդ ժամերուն, աշխարհի շարժնութիւնը իրենք չէր բնաւ, վաճառամբարձ ուղտերու լեռնամբարձումը իր խոկանքը չէր պղտորեր բնաւ : զեղխութեան ծիրանին ու հայելիներուն սառոցը բան մը չէին արժեր բնաւ բաղդատմամբ իր գեղջկնակ պատմութեանին, որով ինքզինքը հազուեցուցած էր : Գիւղին ցայգատօնի նուագահանդէսները երբէք չէին շարժեր իր ջղայնութեան նուրբ թելերը, որոնք հոգիի տաւիղին վրայ կ'երկարաձգուէին, հաւատքի մատներէն թրթուուն : Եւ իր երիտասարդի կեանքը, նոյն իսկ իր երազուն միօրինակութեան, և կրօնական գաղափարներու համախոնող փոթորկումներուն մէջ, չէր դադրեր բնաւ վերնատեսչ սաւառնումներու երա-

ժըշտութիւն մը ըլլալէն : Եւ այդ հեշտարոյր, խորհրդազգած երաժշտութիւնը յագուրդն ու մնունդն էր ա'յն կեանքին, զոր կ'ապրէր, և ա'յն կոչումին, որուն պատրաստուած ըլլալը գիտէր ապագային համար : Իր այս հոգեհայեցութեան պտուղը պիտի ըլլար մարդկային կրօնական պատմութեան նոր դարաշրջանին այնքան երջանիկ փոփոխութիւնը, զոր ոմանք ամբարշտօրէն Գեղեճիկ ՎՐԻՊԱՆՔ անունով պիտի մկրտէին Իրմէ տասնեւինն դար վերջը :

* * *

Տունը, լուսութեան և խաղալութեան օթեւան տունը իր առջեւ կը բանար իր տենջանքներուն ամենէն լուսաւոր հորիզոններուն տարբեր կրկներեւոյթները : Հոն, պարզ ու անխառն բարեպաշտութիւնը պատն ի վար կախած էր պատգամախօս Մեսուսան (*), ահաւոր պարտացոյցը, դրան բարաւորին վրայ, որուն գիրերը՝ խորհրդաւոր յօրինուածութեամբ մտածել կուտային իր վրան : Եւ այդ մտածումին մէջն էր մանաւանդ որ գիրքին այդ մկրատուած էջերը կը լուծուէին, անսպառ անհունութիւն մը սփռելով դիտողին հանդէպ : Հազար անգամ թերեւս դպրոցին հազգան ը(=դա-

(*) Մեսուսան (mesusah) քառակուսի մագաղաթ մըն էր, որուն վրայ քաներկու տողերու միջեւ ընդհանրապէս կը գրուէին Բ. Օրինաց 2. 4-9 և ԺԱ. 13-21 համարները : Այդ մագաղաթեայ Մեսուսան կը կախուէր Հրէից տան դրան բարաւորին վրայ : Այդ մագաղաթին գոյուծիւնը Բ. Օրինաց նոյն համարներուն գրական մեկնութեան սխալ հետեւանքն էր, կը կարծուի թէ Եսայի այս Մեսուսային կ'ակնարկէ իր սա տողերով : «Եւ դո՛ւներուն ու դրանդիններուն ետեւը բու յիշատակդ դիր...» (Ես ԵԷ. 8) :

սատու) այդ նշանագիրերը ցոյց տուած էր Նազովրեցիին, երբ ինքը տակաւին մանուկ, գեղջուկ պարտաճանաչութեամբ մը կ'երթար բազմիչ անոր ոտքերուն տակ, գլխածօճ ու երեփկտուն՝ արտասանելու իր դասական գոցերը, որոնք մոգական գաղտնիքներու չափ անլոյծ կնճիռներ կ'երեւէին: Ո՛չ, հիմա այդ միեւնոյն նշանագիրերը աւելի խորհուրդ կը բուրէին, աւելի խօսուն, աւելի կենդանի կը կերպարանուէին իր տեսութեան հանդէպ. հիմա գիրը տեղի կուտար անձանօթ ըստուերագրութիւններու, որոնց բանալին իր ձեռքն էր հիմա: Իր մայրը անընդհատ ցոյց տուած էր իրեն մարգարէական խորհրդապաշտութիւնները, որոնք ամեն դարու և ամեն մարդու կը խօսին պատշաճօրէն, բաւական է որ միստիք մեկնաբանութիւն մը գայ անոնց վերարկուն մերկացնելու: Եսային, այդ մենչոյ, ցաւատանջ առիւծը, հրամաքուր բերնէն դուրս կը բերէր բառեր, որոնք իր սեւեռամտածութիւնները կը գգուէին: Հազարաւոր դարերու յառաջացող շրջանի մը այդ բառերուն մէջ Նազովրեցին յանկարծ ինքզինքը կը նշմարէր, ու կը նշմարէր ժամանակը, պատահարները, որոնք Քանիէլեան չափով կշռուած էին խղճամիտ հաշուեգիտութեամբ: Միտքը կը ճառագայթէր գիրերու յօրինած յարկին խաւարչուտ սեմին վրայ. ա՛խ, բայց մարմինը ազդող ծանրութիւնն էր իր հոգեղինութեան: «Նրկինքէն եկող հոգիին համար, ծնունդը մահ մըն է» ըսած էր Եմիլիտոկլէս: Պէտք էր, ուրեմն, ամեն բանէ առաջ տիրանալ այդ ծանրութեան. երկինքի Աստուածութիւնը պէտք էր որ բնակէր նաեւ իր սե-

նեկին մթութիւնը աղօտալուսող առկայծ կանթեղին մէջ: Այլ հիմա միայն կրնար վերուծել Սաղմոսներուն տողանցութիւնը, որ այնքան խորհրդապաշտօրէն կ'երգուէր տուներէն, անցնող կարաւաններէն, ուխտաւորներէն և դարերու անջրպետներէն: Հիմա միայն, երբ կը զգար գիրին հոգեկանութիւնը, և տաղտապող ժողովուրդին տուայտանքը, հիմա միայն կը զգար Այն-էլ-Հարամիէի օթեւանին ողբերգակ լուծիւնն ու մելամաղձոտ հրապուրանքը, որոնք «արտասուաց հովտին» մույլ ջուրերով ու մելամաղձոտ հրապուրանքով Երուսաղէմի մուտքին վաղորդայնը կը շրջանակէին ուխտաւորներուն համար:

* * *


Քանի՛ գիշերներ արդեօք խորհրդաւոր երազներ փոթորկեցին գանկը Նազովրեցիին, որուն մարդկութեան մէջ հաւասար դիրք մը բռնած էին Աստուածօրդին ու ապագայի Մարգարէն: Այդ տեսիլներուն հանդէպ ընտանեկան բարեպաշտութիւնը կը լրջանար, կը ծանրախոհէր այն լուռ մտածկոտութիւններէն, ուրկէ Մարիամի սարսուռները կը ծնէին: Մայրական սիրտը, թերեւս ուրիշներէ սխալ լուսաբանուած, իր որդւոյն վրայ դիտուած յոռի ախտանշաններու վրդովանքը զգաց իր ներսը (Մրկ. Գ. 21. 30): Արցունքի մը կրակոտ կաթիլը շարունակ տամկացուց անոր աչքերը, երբ Նազովրեցին իր վերանցական յուզումներուն անձնատուր, փաղաքուշ բառերու անդուսովը կը ծածկէր խիստ յանդիմանանքի մը կծուութիւնները:

— «Կնի՛կ, դու իմ հետս ի՞նչ բան ունիս . իմ մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն, ու զանիկա կը կատարեն» (Յովհ. Բ. 4. Ղուկ. Լ. 21. Մրկ. Գ. 32—35) :

Ա՛յ եկած էր ժամանակը, գէթ այնպէս ցոյց կուտային իր ներընծայութեան լոյսերը, և այն արտաքին ցուցանքները, որոնք օրէ օր կը յաճախէին : Գիւղերէն ու քաղաքներէն գունդագունդ կը դիմէին դէպ ի Յորդանան, ուր ապաշխարութեան ձայնը կ'որոտար : Յիսուս զգաց հանդիսաւոր վայրկեանին ժամանումը, ու նախընթաց գիշերը ինքնամաքառումներովը անցուց .

— Հիմա եկած է ժամանակը, պէտք է մարմինը լուալ Յորդանանի ջուրերէն . . . :

Յիսուս այն ատեն երեսուն տարեկան էր :



Ք.

ՅՈՐԴԱՆԱՆՈՒ ԵԶԵՐՔԸ



ՈՐԴԱՆԱՆ կը վժար ծոցն ա՛յն ոգեւորութիւններուն, զոր Հրէաստանի ամեն կողմերէն եկողները բերած էին իրենց հետ (Մտթ. Գ. 5) : Մենակեացը շանթեր կը տարտղներ գետեզրի շամբուաներէն, որոնց ընդմէջէն հազիւ կը նշմարուէր իր խիզախ վայրենի դէմքը, որ տարբեր դարերու ոգիով մը կը ճառագայթէր : Ժամանակին և իր միջև սխալում մը կար, և ինքը հակասութիւն մըն էր իր միջավայրին ու զինքը չըջապատող ժողովուրդներուն : Իր ուղտաստեւ հանդերձը և կաշեգօտին հանելիօրէն պինդ բռնած էին իր մէջ բանէ մը չվախցող աննուած նկարագիրը, անթեք՝ անվրդով անկեղծութիւնը

և Թեղբացիին հզօր ու ջղուտ շնորհները, որոնք մարդկային գիտակցութիւնները կը թարգմանէին, խորտակող, անդուսպ մաքառումներէ վերջ: Իր առնացի ձայնին որոտող շեշտերը ապաշխարութեան մէջ կ'ամփոփէին կրօնքն ու բարոյականը: Շնորհ չբաշխեր անիկա, քառութեան զոհերով չմաքրեր աղտոտ հետքերը, որոնք մարդկային ամբռութիւնները ապականեր էին: Իր աչքերը Աստուծոյ արդարութեան վրէժխնդրութիւնով կը շողային, բարութեամբ լուսաբորբուած. իր սաստերը անաւոր երկիւղի մը սարսուռները կը ծնցընէին այն բոլոր գանկերուն մէջ, որոնք քիչ մը առաջ մարդասպաններ ու օրինազանցներ էին: Ո՛վ էր այդ մարդը, որուն բոլոր յուսահատցնող ճշմարտութիւններուն, ընկճող բոլոր յուզումներուն մէջ կարելի չէ գտնել նուազած, յուռտես շեշտը, քայքայող պատուիրանքը օրէնքի վարդապետութեան:

Քաղաքացի մը չէ անիկա, և ո՛չ փափկակերը իր ժամանակին: Ամուլ դաշտերէն ծնածը (Ղուկ. Ա. 5—80), անապատի զաւակն է, Աստուծոյ մեծութիւնը պատմող աւազներէն ու ջուրի կաթիլներէն սերածը, որ քարայրէն շամբուախն մէջ հոսող սաստն եղաւ, առանց՝ սակայն՝ հովերէն շարժող եղէգ մը ըլլալու (Մտթ. ԺԱ. 7. Ղուկ. 5, 24): Յուդայի խիզախ սերունդէն, ժողովրդական մարդարէն է Յովհաննէս, միութեան գիծը իր և մարդարէական դարերուն, որ ամենէն խիստ և ամենէն անձնալուկ կեանքը կը ցուցադրէր իր աղօթքներուն, իր ծոմապահութիւններուն և իր ապաշխարութիւններուն մէջ: Իր ոտքերուն տակ, ու իր

չունջէն Յորդանան կը ժպտէր բիւրեղ կայլակներով, որոնք ներքին սրբութեան մը իբրև ընծայում, ապաշխարութեան զաւակները կը լուային Յովհաննու մկրտութիւնով (Ղուկ. Գ. 7): Գետը կը զգայուննար, իր նախորդ օրերու յիշատակներուն մէջ (Տե՛ս Յես. Գ. 14—17), և թող կուտար որ վերջին անգամ մըն ալ իր մէջէն անցնէր Իսրայէլի ժողովուրդը՝ աւելի վսեմ, ու բարձր երուսաղէսի մը աւելի տեւական, աւելի սփոփիչ հոգեւոր իշխանութեան մը, Աստուծոյ թագաւորութեան ժառանգութեան համար: «Այս նոր արարողութիւնը, այս բռնութեան քարոզը, անհամար ժողովուրդին առջեւ, անապատի շրջանակին մէջ, Յորդանանու նուիրական ջուրերուն հանդէպ, Յուդայի և Պիրէոյ խիստ լեռներուն ընդմէջ, կը սարսափեցնէր երեւակայութիւնները և իրեն կը քաշէր ամբոխը Հին մարդարէներու փառաւոր օրերը կը յիշեցնէր, և ժողովուրդին կուտար ինչ որ անի չէր կրնար գտնել տաճարին մէջ»:

«Ապաշխարեցէք» կը պօռար ամենուն (Մտթ. Գ. 2):

«Իժի ծնունդներ» կ'ըսէր Փարիսեցիին ու Սադուկեցիին (Մտթ. Գ. 7):

«Ո՛վ որ երկու հանդերձ ունի, թող մէկը չունեցողին տայ» կը վարդապետէր անոնց, որոնք մէկ մէկու կը հարցնէին իրենց բռնելիք նոր ճամբան (Ղուկ. Գ. 10, 11):

«Զեղի հրամայուածէն աւելի չպահանջէք» կ'ըսէր մաքաւորներուն (Ղուկ. Գ. 13):

Ահա թէ ինչպէս կը նկարագրէ Հ. Տիտոն, տեղը, ուրկէ այդ ձայները կուգային.

«Տակաւին այսօր ցոյց կուտան Այնը-Քարիմի արեւմտակողմը այն քարայրներէն մին, որ թեւեւ իր (Յովհաննէսի) առաջին ապաստանարանը եղաւ, թափառական կեանքին մէջ: Խիստ ժայռի մը ծոցը փորուած է, Պէյթ-Անինա հովիտին արեւելեան կողին վրայ: Քարայրէն երկու մէթր վեր ազբիւր մը կը հոսի, և բոլոր շրջակայքը կը ցօղէ: Դալար է մարգը, և կիտրոնին ծաղկած, եղջերենին իր սեւ ճիւղերը կը սփռէ: Փոթորիկի ատեն, ուռած հեղեղը անցքին խորը կը մոնչէ: Դիմացը արեւմտեան զառիթափին վրայ արաբական պղտիկ գիւղ մը: Անկէ քանի մը խեղճ ֆէլլահներ կուգան դէպ ի ազբիւրը: Քիչ մը դէպ ի ձախ, բլուրին մէջտեղ, կանաչ ծառերու փունջ մը — նուիրաւ վայր — ուր՝ երկրին աւանդութեան համեմատ՝ վայրկեան մը դրուեցան պատերազմի մէջ սպաննուած երկու արթուն Մակարէներուն մարմինները: Տմոյն և մերկ առանձնութիւն, որմափակ հորիզոն: Մարդ ինքզինքը պարապինդ կը զգայ հովիտին կուրուսն մէջ, որոնք կարծես իրարու միանալ կ'ուզեն: Պէտք է դիտել երկինքը որ կ'իջխէ, կը լայննայ: Այս ապառաժները, այս հեղեղը, այս տխուր հովիտը ըստ ամենայնի ներդաշնակութեան մէջ են այն խիստ մարդուն հետ, որ հոտ ապրեցաւ: Արձագանգը զօրեղ ձայնին որ կ'ալաղակէր «Աստուած կուգայ, պատրաստեցէք ձամբաները, ապաշխարեցէք», տակաւին այսօր այդ անապատը կը լսու. անիկա կարծես տակաւին կը լսուի անցնող հովին սոյլէն և Պէյթ-Անինայի ջուրը մըրմունջներէն (էջ 192)»:

* * *


Հասունցած ճակատը իր ետին կը պահէր մարդկութեան ընծայացուներէն ամենէն խորհրդաւորը, որուն աչքերը երկինք կը բուրէին իր շուշանաթօյր թաւիչէ խոպոպիքին տակէն: Աստուծոյ, բնութեան և մարդուն վերլուծուած, աւինքնուած խտացումը ձերմակ վերարկու մը ձգած էր իր վրան, ծածկելու համար ուրիշներու ցաւերէն ու մեղքերէն հիւժած սիրտը, որ Հոգիէն կարապետուած զինքը դէպ ի անապատը կ'առաջնորդէր, քաղաքներու ժխորը ունկնդրելէ առաջ:

Իրիկնադէմին, արեւմուտքի ժայռերը կարմրած էին մարմրոզ ճառագայթներէն, երբ Յիսուս բլուրները իր ետին թողած կուգար իր մկրտութիւնը ընդունելու: Անապատի մարգարէն, որուն հոգին մինչև այն ատեն չէր դրոյզած բնաւ, և որուն աչքերը լուսալիր գունդերու պէս կը վառէին, իր մէջ զգաց իր տկարութեան բովանդակ սարսուռը, նազովրեցիին առջև: Երկուքին իրարու հանդիպող նայուածքները պողպատէն ծեծուած կայծքարին պէս կայծեր սրսկած էին Յովհաննէսի հոգիին խորը: Կարապետին ձեռքերը կը դողային լուացման ջուրին վրայ, երբ լուսէր Յիսուսի նայուածքին խորհրդաւոր՝ քաղցրանուշ երկնաբուրումը, հորիզոններուն գիրկը չիջած վերջալուսի երկինքը կը բանար, թեւաբախ, անբիծ աղաւնիին համար (Ղուկ. Գ. 21, 22. Մտթ. Գ. 16): Անապատի մարդը իր ուժերուն սպառիլը զգաց ա՛յն օրէն, երբ Յիսուս, անուշադիր շուրջի իրադարձութիւններուն, գիշերին հետ կ'երթար անապատին ընդերքը մխուելու: Ինչե՛ր զգաց Յովհաննէս, ի՛նչ ինքնամաքաւ հարցումներ, զի-

րար հակասող ի՛նչ կնճռոտ տարակոյսներ փոթորկեցին գանկը անոր, որուն փոթորիկները ահաբեկած էին Հերովդէս Անդիպատի գինարու խընջոյքները ու կաքաւները:

Իր մկրտութեան ջուրին վերջին կաթիլը թափած էր Անոր գլխուն. հիմա թափուելիք արիւն միայն ունէր իր երակներուն մէջ: Իր մոլորուն նայուածքը կը մարի իրիկուան արեւին հետ, երբ շրթները կը դողային, արտասանուած ահաւոր բառերէն.

«Իմ ուրախութիւնս լցուած է: Անիկա պէտք է որ մեծնայ, ու ես պզտիկնամ» (Յովհ. Գ. 29, 30):



Գ.

Փ Ո Ր Ձ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր



ՈՎ Հ Ա Ն Ն ՈՒ՝ անապատի մարդուն՝ հիւժած՝ խուլ մռնչիւնները կը լսուէին տակաւին, երբ Յիսուս վեր կ'ելլէր մոխրացած՝ կրակարմիր բլուրներէն: Ներքին յուզումներէ և կոշումին իր մէջ ծնցուցած տարակոյսներով լեցուն դժուարութիւններէն և ահաւորութենէն կարմրած դէմքը՝ բակ կապած լուսնակին պաղ սկաւառակին պէս կը փայլէր բնութենական ճարտարապետութեան այն քարակող բրուկներուն վրայ, ուր՝ հովերէն ու անձրեւներէն կրծուած ատամնաչար գոգուածքներ կը բացուէին առանձնասէր, լուռ մենակեացներու համար: Վայրի աղաւնիներու և սրակն արծիւներու բոյները քարի

ծերպերէն վար կը կախուէին, ու Նազովրեցիին՝ կարծես, անոնց միջովը խոյաջող մարդկային արօծիւ, ինքն իր մէջ դարձած, իր ներշնչումներուն, իր ինքնամաքառումին մէջ կեդրոնացած, անթարգմանելի՝ ահաւոր խռովքը կը պատկերացնէր, իր հոգիին ներդաշնակաւոր խաղաղութեան, և միօրինակ լուռ լեռներուն ու անապատին ձոյր : Վերէն, բլշակնած տեսութեան առջեւ կը պարզուին, Յորդանանու հովիտին մէջ, դէպի արեւելք Նաբաւ լեռը և Պիրէոյ ծորձորները, հիւսիսէն՝ ձիւնապսակ Հերմոնը, լուսալիր հորիզոնին մէջ խորասոյզ . հարաւէն՝ լոյծ՝ գորշ անշարժը Մեռեալ ծովին և Ջիթենեաղ լեռը, որ իր ետին կը պահէր մեծ քաղաքը իր աշտարակներով, իր պարիսպներուն արծաթաշար մասներով :

Անապատի այդ բարձունքին վրայ ամբողջ օրեր ու ամբողջ գիշերներ հոգիին կռիւը մղեց Յիսուս, իր մարդկային բնութեան դէմ : Պէտք էր յաղթել մին կամ միւսը, կա՛մ պէտք էր մարմինը իշխէր և կա՛մ հոգին, քանի որ երկուքը միանգամայն իրարու ճիգերը կը չեզոքացնէին նորանոր ընդվզումներով : Եարունակական աղօթքները, անխոնջ հոգեհայեցութիւնները, երկնատե՛նչ, զինքը կը բարձրացնէին այդ անապատներէն, լեռներէն, ամպերէն ու եթերէն վեր, հոն լսել ու տեսնել տալու համար՝ իրեն, մրմունջները, խօսքերը, լուսատեսիլները, «որ մարդուս արժան չէ խօսիլ» (Բ. Կորնթ. ԺԲ. 4) : Մարմինը խորտակուած էր իր ԵՍ ին, իր կիրքերուն հետ . և հոգիի ու մարմինի աստուածային ներդաշնակութիւն մը կը ծլէր հոն, ուր արծիւները կը խոյանային : Հոգին, սակայն, իր աստ-

ուածեան լրութիւնով յագեցած, պէտք էր որ սաւառնէր աւելի՛ վերերը, Իսրայէլի սահմաններէն անդին, Աւետեաց երկրի ժողովուրդէն աւելի, աշխարհի ամբողջ պարագիծը ընդգրկելու . . . :

Հոս, խոյր՝ սեւ ամպ մը անցաւ Յիսուսի ճակատէն : Աւելի լայն, աւելի դժուարին պատերազմի մը ասպարէզը կը բացուէր իր առջեւ, աւելի մեծ, աւելի անձնուրաց զոհողութիւններու պէտքը զգալի կը դառնար հետզհետէ իր հոգեկան ամբարձումներուն գիրկը (Կարդա՛ Եփես. 2. 12) :

Չարին ամպը կը թխպանար հետզհետէ ու Յիսուսի ճակատը արիւնի կայլակներ կը ժայթքէր քրտնաթո՛ր, երազո՛ւն : Որո՞ւնն էր յաղթանակը : Ոչ ոք գիտէ դեռ : Ստուերները, մեղքը կը շարժին, սատանի կերպարանքով, փառասէր տենջանքները կը քակուին բաղամթել կծիկներու պէս, երբ Յիսուս անօթութենէն կրճուած կը զգար իր մարմինը : Այդ նօթութեան մէջէն յիշեց յանկարծ պալատներու ճոխ սեղանները, հացալից խնջոյքները, յլփացնող համադամները : Ու փորձիչ ձայնը ծաղրող շեշտով մը իր ականջին կը փսփսար .

— «Եթէ Աստուծոյ որդի ես, ըսէ՛, որ սա քարերը հաց ըլլան» (Մտթ. Գ. 3) :

Հիմա խաւարը անդունդներ կը բանար իր առջին : Գերմարդկային ճիգ մը անհրաժեշտ էր իրեն այդ գահավէժ կտուրին վրայ . սխալ քայլ մը, խտորնակ զգայում մը, հակասող բաղձանք մը խորափիտ վիհեր պիտի փորէին իր առջեւ :

— «Անսիտ, միայն հացով չէ որ կ'ապրի մարդ» մրմնջեց Հոգին (Մտթ. Գ. 4) :

Խաւարը կ'անդսնանար, ու Չարը կը մղեղէր

ստուերներու ծոցէն : Անսպասան ու լեռները կը սարսռային այս անաւոր մաքառումներէն , քարերը կը հեծէին իրենց անձաւային խոռոջներէն , երբ մանչոզ հովին թեւերով Սատանան դէպ ի աշտարակին բարձունքը կը փոխադրէր Նազովրեցին (Մտթ. Գ. 5) : Յիսուս հիմա որոշ կերպով կը լսէր տաճարին ալէլուները , որոնք բարեպաշտիկներու յաղթական երգերով կը նուագէին Մեսիային փառքը : Սպասումէն ու անձկութենէն տառապած դէմքեր հիմա իր դէմը շարուած կ'ըսէին իրեն :

— «Այս ամէնը քեզի համար պիտի ըլլան , եթէ աշտարակէն վար նետես ինքզինքդ» :

Սաղմոսներէն գինովցած Նազովրեցին պահ մը վարանքով պատուած՝ մտադրեց գահավիժելու դէպ ի անոնց գիրկը , երբ Հոգին յաւիտենականութեան խորէն մանչեց .

— «Մի՛ փորձեր քու Տէր Աստուածդ» (Մտթ. Գ. 7) :

Ճայն մը կ'արձագանգէր իր քարակոփ խոցին պատերէն .

— «Հայր , մինչև ե՞րբ փորձութիւնները» . . . :

Դու՛րսը , վա՛րը օգային պայքարներ կ'որոտային , որոնք իր ներքին յուսահատութիւններէն ու սարսափներէն կը հիւսէին գիշերի վերարկուն : Փորձիչին մասնիչ ու հրապուրիչ թելադրութիւնը իր մարմինի մասններէն ու նեարդերէն կը հիւսէր ցանցը , վիթխարի՝ թունաւոր սարդի մը պէս : Յանկարծ զօրաւոր ձեռք մը պատուեց խաւարին մէկ մասը , ու լոյսի ցայտքով որոշ կերպով ցոյց տուաւ իրեն երկրի իշխանութիւնները , մական-

ները , ոսկեձոյլ կամարները արքայական փառագարդութեան :

— «Վայրկեան մը միայն , ծռէ՛ իմ՝ առջիս քու երկնամբարձ գլուխդ , և այս ամենը քեզ պիտի տրուին» (Մտթ. Գ. 9) :

Նոր ու անաւո՛ր լուծիւն :

Նազովրեցին իր չորցած , ճանկրթուած ձեռքը երկնցուց պահ մը մութին մէջ շողացող այդ փառքերուն . . . յանկարծ ե՛տ քաշեց զայն նողկանքով , և զիմագրաւումի գերմարդկային ճիգով մը .

— «Ինձ՛ , Սատանայ» :

Մրմնջեց իր հոգիին խորէն , երբ ամպը սկսաւ փարատիլ տակաւ . . . :

Ու անա , հրեշտակներ կը սպասաւորէին Անոր (Մտթ. Գ. 10 - 11) :

* * *

Ադամամութիւն լուսաւորները կը նշուլազարդէին երկինքի կապոյտը , որուն վրայ սիւռուած էր բամպակէ շղարշը , երբ Յիսուս քրտնաթոր , փորձութիւններէն յոգնած , յաղթականի մը նայուածքովը չափեց իր կոշուտին անհուն ասպարէզը՝ դժուարին ու փշուտ , և ծնրադիր՝ Անհունին առջև կ'աղօթէր Հոգիի սուրբ մրմունջներով : Ինքնագոհ քաւութեան նուիրածօնը պատրաստուած էր ալ . . .

— «Բայց ի՞նչ նշանով պիտի կրնամ յաղթել աշխարհի զօրութիւններուն :

— Մարդուն Որդիին նշանով , կ'ըսէ ձայնը բարձրերէն :


— Ինձի ցոյց տուր այդ նշանը» ըսաւ Յիսուս : Եւ անա յանկարծ «փայլուն համաստեղու-

Թիւն մը երեւցաւ հորիզոնին վրայ: Խաչածե չորս լուսաւորներ ունէր անիկա: Գալիլիացին ճանչցաւ նշանը հին ընծայացուներուն, ընտանի՝ Եգիպտոսի, և պահուած՝ Ծասնեաննհերու կողմէ: Աշխարհի մանկութեան ասեն Յարէթի որդիները պաշտած էին իբր նշանը երկրային և երկնային կրակին, իբր նշանը կեանքին ու իր բոլոր հաճոյքներուն, սիրոյ և իր բոլոր հրաշալիքներուն: Աւելի յետոյ Եգիպտական ընծայացուներ անոր մէջ տեսած էին խորհրդանիշը Մեծ-Խորհուրդին, Երրորդութիւնը՝ Միութիւնով իշխած, պատկերը քառութեան, անճառելի էակին որ ինքնին կը խորտակուի աշխարհներու մէջ յայտնուելու համար: Խորհրդանշան միանգամայն կեանքի, Մահուան և Յարութեան: անիկա կը ծածկէր դամբանները, գերեզմանները և բազմաթիւ տաճարները: Շողուն՝ Խաչը կը մեծնար ու կը մօտիկնար Մարգարէին սիրտէն քաշուած: Չորս կենդանի լուսաւորները կը լուսազարդէին արեւներու պէս զօրութիւնով ու փառքով:

«Ահա կեանքի և Անմահութեան մոգական նշանը: Մարդիկ զանի ունէին երբեմն ու կորսընցուցին: Կ'ուզե՞ս զանի նորէն իրենց տալ:

— Կ'ուզեմ:

— Այն ատեն, ատ'ս ահա քու ճակատագիրդ(*)»:



Ե.

Ք Ա Ր Ո Ջ Ի Չ Ը



ԻՐՅԵՐԻԱՅԷՆ երբ մեկնիս, առաջին անգամ կը հանդիպիս, ցցուած ժայռերու, լեռան մը որ կարծես ծովուն մէջ պիտի տապալի: Յետոյ ցրուած լեռներ, դաշտալայր մը (Ել-Ղուէյր) կը բացուի լիճին մակերեսին հաւասարութեամբ: Հոս հեշտաբոյր թաւուտը մը կանաչագեղ, ակօսուած բազմաթիւ ջուրերէ, որոնք մասամբ կը բլլին մեծ՝ բոլորակ աւազանէն, հին շինուածքէն (Այնը-Մէտաւարա):

(*) Ed. Schuré. — Les grands initiés (J.-Christ) p. 484-485.

Այս դաշտագետնին անցքին վրայ, որ ճշմարտապէս Գեներատէթի երկիրն է, կը գտնուի Մէճտէլի գիւղը: Դաշտին միւս կողմին վրայ, մի՛շտ ծովուն երկայնութեամբ կը տեսնուին քաղքի մը տեղը (Խանը-Մինիէ), գեղեցիկ ջուրեր (Այն-էտ-Տին), սիրուն ճամբայ մը, նեղ ու խորունկ, ժայռին մէջ փորուած, որ իբրեւ անցք կը ծառայէ ընդմէջ Գեներատէթի դաշտավայրին ու լիճին հիւսիսի զառիվայրին: Ասկէ քառորդ ժամ անդին, կ'անցնին քաղջուր պղտիկ գետակէ մը (Այնը-Տարիգա), որ գետինէն կը բխի, լիճէն քանի մը քայլ անդին, բազմաթիւ լայն աղբիւրներէ և կը թափի դալարիքի մը խիտ մացառուտքին մէջ: Վերջապէս քառասուն վայրկեան աւելի հեռուն, Այնը-Տարիգայէն մինչև Յորդանանու բերանը երկարող չոր զառիթափին վրայ, կը գտնուին քանի մը գիւղեր, և Տէլլ-Հոււի բաւական յիշատակելի աւերակներուն ամբողջութիւնը:

«Հինգ փոքր գիւղեր, որոնց յաւիտենապէս պիտի խօսի մարդկութիւնը, Յիսուսի ժամանակ ցրուած էին Մէճտէլի գիւղէն մինչև Տէլլ-Հոււ երկարող միջոցին մէջ: Այս հինգ գիւղերէն (Մագդալա, Դաղմանութա, Կափառնաոււ, Բեթսա-յիգա, Գորազին) միայն առաջինը ինքզինքը որոշապէս ցոյց կուտայ այսօր: Մէճտէլի դժնէ գիւղը անտարակոյս պահած է անունն ու տեղը աւանին, որ Յիսուսի տուաւ իր հաւատարմագոյն բարեկամը: Դաղմանութա հաւանաբար ասոր մօտն էր: Անհաւանական չէ որ Գորազին քիչ մը հիւսիսի դաշտերուն մէջն եղած ըլլար: Գալով Բեթսայի-դայի և Կափառնաոււի, անոնք զիպուածով մի-

այն կը դբուին Տէլլ-Հոււի, Այն-էտ-Տինի, Խանը-Մինիէի և Այնը-Միտավարայի տեղ (*) »:

* * *

Երբեմն Գալիլոյ ծովուն շինած սա շրջանակը ոսկեղօծուած էր արեւին հիւսած թելերովը և այն փունջերովը ծաղիկներուն, որոնք անտառներէն, պուրակներէն, պարտէզներէն ու բարձրաւանդակի բուսականութենէն դէպ ի վար կը կախուէին: Լիճը իր եզերքին վրայ կեանք կը ծնէր մշտաբեղուն, հակառակ վերջին դարերու ամայութեանը: Մանուկ անմեղութիւնը սրբած էր այդ գիւղերու բնակիչներուն սիրտէն, ինչ որ կեղծիքը կը չինէ, և Փարիսեցիին ու Սադուկեցիին անկրօն վիճասիրութիւնը չէր վրդոված տակաւին հոգին այն ժողովուրդներուն, որոնք երուսաղեմէն գրեթէ օրուան մը ճամբայ հեռու, ինքզինքնին կը դիտէին Գեներատէթի ծովուն ջինջ յստակութեան մէջ: Խաղաղ կեանքի այդ վառարանին խորը հաւատքի ներշնչումը կը շողէր անգիտակից յոյզերով և կրօնը շարունակ իր հիւթը կը ծծէր շրջակայքի վսեմութենէն և ծովին մրմունջներէն, որոնք Բարձրալին պատգամներուն պէս կ'որոտային փոթորիկի ատեն, և խաղաղութեան ու հաշտութեան նուագը կը հիւսէին, երբ զեփուռը կ'անցնէր կը սահէր իրենց վրայէն:

Նազովրեցիին ա՛լ ետին թողած էր անապատը, իր հոգին լուսաբորբած, և իր մարմինը աննիւթացած նուիրոււմի խանդավառ թեւածուէն,

(*) Սոյն տեղագրական ծանօթութիւնները Ծարգմանուած են Ռընանի «Եիսուսի կեանքն»:

կը զգար թէ իր խորհուրդներն ու զգացումները աստուածայնացած էին իր մէջ և բաւերու հեղեղ մը , քարոզներու պոռթկում մը իր չրթները կ'այօրէր շարունակ : Կայծակները բարձունքներու կը զարնուին շարունակ , կամ հսկայ ծառերու կատարին , և կամ աշտարակներու սրածայր կտուրին : Յիսուս ուզեց որ իր փրկութեան , արդարութեան և ճշմարտութեան կայծակները դաշտերուն գիրկը նետուին , հոն միանալու , ձուլուելու համար ամենէն անմեղ , ու խաղաղ սիրտերուն , ուստի իր քանի մը աշակերտներն ու մայրր առած Կափառնաում իջաւ (Յովհ. Բ. 12) : Եւրաքը երբէ՛ք այնքան չէր լուսաբանուած նախընթաց դարերու իր շարունակութեան ընդմէջ , որչա՛փ այն վայրկենին , երբ Յիսուս Սուրբ Գիրքը մեկնեց ժողովուրդին հանդէպ : Այս քարոզութեանէն զգացուած զարմացումը ամենուն կուրծքէն դուրս կը պոռթկար . « Ինչու որ իշխանութիւնով էր Անոր խօսքը » (Ղուկ. Գ. 32) : Գեղախումբը այդ օրէն իր ճակատագիրը կապուած զգաց չրջուն քարոզչին , որուն մէջ « Մարդուն Որդին » կ'անմահանար : Ցաւազար կեանքը , որ գիւղերու գիրկը կը տուայտէր , յուսահատ հոգիները որոնք կուլային , հաւաչանքներով հիւժող տխուր սիրտերը այդ օրէն իրենց մէջ զգացին Յիսուսի տաք ճառագայթումը : Անոր կարեկցող սիրտը , սիրոյ գերերկրայնութիւնը , կիրքերը վերլուծելու անոր շնորհները , հոգիները իրենց տենջանքներուն մէջ կարգալու անոր պայծառատեսութիւնը , ինկածները բարձրացնելու անոր երկնահայեցութիւնը , ձայնին անուշ շեշտերը , բաւերուն օծութիւնը , Անոր

դէմքին հրեշտակային թախծութիւնը , աչերուն՝ այրող՝ խոհուն նայուածքը արդէն բաւական եղած էին հաւատքի հիւսքը կազմելու , և ժողովուրդին ըսել տալու « երբէք մէկը ասոր պէս խօսած չէ » (Յովհ. Է. 46) :

Անոնք լոյսի պէտքը ունէին .

— « Ես եմ աշխարհի լոյսը , ըսաւ , ան որ իմ ետեւէս կուգայ , խաւարի մէջ չպիտի քալէ , հապա կենաց լոյսը պիտի ունենայ » (Յովհ. Ը. 12) :

Աշխարհի խաբկանքէն մոլորած , կեանքի ճշմարտութիւնը կորսնցնողներուն ալ ըսաւ .

— « Ես եմ ճանապարհը , ճշմարտութիւնը ու կեանքը » (Յովհ. ԺԴ. 6) :

Եարունակական պատահարներէ ձանձրացած , և արեւին տակ ունայնութիւն ու զգուանք տեսնող շինականներուն .

— « Հոգին է , ըսաւ , կենդանի ընողը . մարմինը չա՛ մը չըներ , ան խօսքերը գոր ես ձեզ կը խօսիմ , հոգի և կեանք են » (Յովհ. Զ. 64) :

* * *

Լեռներն ու անապատները կը թնդային անոր խօսքերէն , վարդապետութիւններէն , կենսատու քարոզութիւններէն , և ժողովուրդը անոր շուրթներէն կախուած մտիկ կ'ընէր զԱնիկա ծովեզերքը , լերան ստորոտը , անապատին խորը և գիւղերու մէջ : Անոր երեւումը ամենէն մեծ յեղաշրջումը գործած էր ժողովուրդին ապրելու , զգալու , հաւատալու և յուսալու կերպերուն մէջ : Այժմ կը մտածէր մարմինին վրայ , որ շահ մը չէր ըներ : Հոգին իր կոչումին կը փարի , թուչող մի-

Ջատէն սկսեալ մինչեւ խորհող իմաստութեան մէջ գեղեցիկին ու վսեմին գինովութենէն արբչիւ , քաշուած , հաւատքի մաքրութիւնով : Ու մարդիկ այդ զարթնումին մէջ սիրտի զարկերը , բարախումները միայն կը հաշուեն առանց ժամանակին և օրերուն անցնող թրթռումները լսելու : Խօսքի ծարաւին , մխիթարութեան նօթին , հոգիով աղքատը կը վազեն , կը վազեն շարունակ իր ետեւէն : Եւ կեանքը կը վերածնի Աւետարանի թագաւորութեան մէջ :

Մարդուն Որդին յոգնած իր դադափարներու ծանրութենէն , ընկճուած իր գագացումներուն , իր սիրոյն յորդանաս ջրվէժումէն , կը նայէր դէպի վար , ուր գումարուած ժողովուրդին տեսքը զինքը ա՛լ աւելի կը փղձկէր : Անի մխիթարութիւն , կեանք կը պոռար վարէն իր հանդերձի դրօշակներուն փաթթուած , լալկան ու գերագրգիւ : Իր նայուածքը կը ճեղքէ Անհունին խոր անջրպետները , անոնցմէ դուրս բերելու համար ժողովուրդին մխիթարութիւնը . «Երանի հոգիով աղքատներուն , ինչու որ երկնից արքայութիւնը անոնցն է :

Երանի սգաւորներուն , ինչու որ անոնք պիտի մխիթարուին :

Երանի հեղերուն , ինչու որ անոնք պիտի ժառանգեն երկիրը :

Երանի անոնց որ անօթի և ծարաւի են արդարութեան , ինչու որ անոնք պիտի կշտանան :

Երանի ողորմածներուն , ինչու որ անոնք ողորմութիւն պիտի գտնեն :

Երանի անոնց , որ սիրտով մաքուր են , ինչու որ անոնք պիտի տեսնեն զԱստուած :

Երանի խաղաղարարներուն , ինչու որ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին :

Յնձաքէք և ուրախ եղէք , ինչու որ ձեր վարձքը շատ է երկինքը» (Մտթ. Ե. 3 - 12) :

* * *

Աստուծոյ արքայութիւնը հաստատուած էր Յիսուսի հոգիին և ժողովուրդին մէջ : Երկօւքն ալ տկար , երկուքն ալ հալածուած ըստ երեւոյթին : Քանի մը ամիսներ բաւական եղած էին՝ իրեն համար՝ կառուցանելու այն լուսեղէն շէնքը , զոր ամբողջ դարեր և իմաստասէր միտքեր չէին յաջողած շինել : Աստուծոյ թագաւորութեան հիմնարկութեան խորհուրդը՝ իբրեւ առեղծուած՝ պահուած կը մնար այս քանի մը ամիսներուն մէջ , ինչպէս պահուած մնաց մանանուխի հատին (Մտթ. ԺԳ. 31, 32) , խմորի հայսին (Նոյն , անդ , 33) , տանուտէր մարդուն (Մտթ. Ի. 1-16) , հարսնատէրին (Մտթ. ԻԲ. 2 և այլն) և իմաստուն կոյսերուն մէջ (Մտթ. ԻԵ. 1-13) : Կոյս արքայութիւնը մը կոյս գետնի վրայ հիմնուած ա՛յսքան որոշ չպիտի կրնար բացատրուած ըլլալ , եթէ ընդգրկած չըլլար կեանքի և բնութեան բոլոր կուսութիւնները , քանի որ «Աստուծոյ արքայութիւնը խտրանքով չպիտի գար բնաւ» (Ղուկ. ԺԷ. 20) :

Երկնից թագաւորութեան հաստատութենէն վերջ , եղբայրութեան կրօնքը իր մէջէն կը վտարէր ա՛լ ծիսակրօնին վրէժխնդրութիւնները , գիրը տեղի կուտար հոգիին , և Մովսիսականութեան շանթածի՞ օտարամերժ աստուածը , «ԵՐԿՆԱՒՈՐ ՀԱՅՐԸ» կ'ըլլար հրէին ու հեթանոսին , ծառային

ու տանուտիրոջ, Երուսաղէմ կը դադրէր Տիեզերքի կեդրոնը ըլլալէն, և Յակոբի ջրհորը բաժնուած կրօններու հաշտութեան որրանը կը դառնար «Հօրը՝ հոգիով երկրպագողներուն» (Յովհ. Գ. 21—24) :

Տաճարը գիշերին մէջ կը շողացնէր իր աշտարակները, ստուերին մէջ վեհանիստ, և կեանքերուն առանցքը կը կազմէր : Հիմա Հրէին այդ սրբավայրը տակաւ իր մէջ կը զգար խրտուածը, ապագայ քայրայուսի ցնցումները, ամեն անգամ որ Մարգուն Որդին իր նայուածքը կը դարձնէր անոր : Նիւթապաշտ կրօնի ամբարձումները, կրանիթէ և որձաքարէ արտակիտուած, ժայռոտ սիրտերու և անզգայ հոգիներու յորդումը կը պատկերագրէին : Յիսուս այդ քարերէն, այդ աշտարակներէն վեր գիշերներու անաւորութեան մէջէն կը տեսնէր Հոգիին Տաճարը, աննիւթ նիւթականութիւնով շինուած, մարդուն ու ամբողջ Տիեզերքին համար : Չիթենեաց լեռնէն քանի՛ անգամներ նայեցաւ Յիսուս այդ տաճարին, այդ շէնքերուն, ու գիշերներէն մին իր աչակերտներուն տուած էր գոյժը, թէ օր մը այդ ամենէն քար քարի վրայ չպիտի մնար» (Մատ. ԻԳ. 2. Մրկ. ԺԳ. 2. Ղուկ. ԻԱ. 6) :

Քառսէն նոր ծագող արեւին պէս քարոզը լոյսով ու կեանքով ողողած էր այն բոլոր ժողովուրդները, որոնք Օրէնքէն ինքզինքնին մխիթարուած, փրկուած կը կարծէին ընդունայն : Նախորդին ունայնութիւնները հիմա մերկապարանոց կը սուլէին ամէն դի, ու խարազանը անգամ մըն ալ չեշտած էր հրէական կրօնքի պատրանքներուն անաւորութիւնը (Յովհ. Բ. 15—17) :

Ջախջախուած, հիասթափ ջերմեռանդութիւնը խուլ մռնչիւնով մը կը հարցնէր Յիսուսի .

— Ի՞նչ նշան կը ցուցնես մեզի, որ ատ բաները կ'ընես (Յովհ. Բ. 18) :

Հարցումը, գողունի, թափանցող նայուածքի մը պէս իջած էր մինչեւ Անոր սիրտը, իբրեւ կայծակ մը, որ ամպոտ, մառախլապատ երկինքը կ'ակօսէ :

— Քակեցէ՛ք այդ տաճարը, ու երեք օրուան մէջ զանիկա պիտի կանգնեմ :

Այս քակտող ձայնն էր որ նախադուռը բացաւ Քրիստոսնէութեան Ոսկեդարուն, երանութեան և զիտակից համոզումներուն, և միեւնոյն ժամանակ հիմը դրաւ, հասկցուած կրօնքի կալուածին մէջ, մարդուս բարոյական Տաճարին :

«Հաւասարակշիւ բանականութիւն, խորհրդաւոր ներքսահայեցութիւն, մարդկային համակրանք, զօրութիւն բանի և գործի, զգայնութիւն մինչեւ ի վիշտ, զոհարելութեան թաթաւուչ սէր, մինչեւ ի մահ քաջութիւն, բան մը չ'էր պակտեր իրեն : Իր արեան իւրաքանչիւր կաթիլին մէջ բաւականաչափ հոգի կար զինքը դիւցազն մը շինելու համար, այսու հանդերձ, ժրպիտի աստուածային քաղցրութիւն : Խորին միութիւն դիւցազնութեան և սիրոյ, կամքի և իմացականութեան, Յաւիտենական Արուին ընդ Յաւիտենական Իգին, մարդկային իտէպը կը ծաղկեցնեն իր մէջ : Ամբողջ իր բարոյականը, որուն վերջին բառն է անսահման սէրը, բնականաբար կը հոսի այդ մեծ անձնաւորութենէն : Իր մահուընէ ի վեր սահող տասն և ութ դարերու աշխատութեան արդիւնքն

եղաւ այդ իտէալը թափանցել ամենուն գիտակցութեան մէջ : Որովհետեւ չկայ գէթ մարդ մը քաղաքակիրթ աշխարհին մէջ , որ առաւել կամ նուազ յստակ դադարիտ մը չ'ունենայ Անոր մասին : Կարելի է ուրեմն հաստատել , թէ Յիսուսի ուղած բարոյական տաճարը ոչ թէ աւարտած , այլ միայն հիմնուած է արդի մարդկութեան մէջ , անկործանելի հիմերու վրայ» (Ն. Շուրէ) :

Ամեն դար պիտի մասնակցի այդ բարոյական տաճարի շինուածքին , և ամեն ժամանակներու նորոգուած մարդկութիւնը իբրեւ շինուածանիւթը պիտի ծառայէ անոր :



Զ.

ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ



ԱՒԱԿԸ իր պատրաստութիւնը կը տեսնէր ափունքէն զատուելու համար :

Ժողովուրդը՝ առականերու քարոզութենէն կախարդուած , մեկնող նաւին չափ կը դանդաղէր :

Իրարու համար , ու իրարու մէջ միայն կրնային ապրիլ անոնք :

Հանճարն ու կարօտը , շնորհն ու զրկումը իրարու ետեւէ կը վազեն շարունակ , իրարու տեղ բռնելու կամ զիրար լրացնելու համար : Հրապուրուած ժողովուրդին պէտքը ա՛յնքան ստիպողական դարձուցած էր Յիսուսի ներկայութիւնը : Անկէ բաժանումը՝ նոյն

խակ օրուան մը, նոյն իսկ վայրկենի մը համար, կարծես դառն զրկանք մը կը դառնար :

Օրուան այդ վերջին պահուն, երբ բաժանումի կսկիծը կուլար ծովափի ժողովուրդը, արևը իր ցրքուն, հառած, իրիկնադէմի գոյներուն քմահաճոյքը կը կաթեցնէր ծովուն վրայ, հորիզոնէն փրթած երկայնութիւնովը բեկբեկ, ու խորտակուած՝ ալիքներու զիրար համբուրող խարշափի օղակաւորումներէն : Ափունքի կանաչութիւնները, ցոլացումի պատրանքով ծովուն մէջ փոխադրուած, կը ձեւացնէին՝ գիշերի այդ առաջին պահուն, շարժուն բուրաստանը, որ աստղերու փարփաւ շողարձակումէն կը լուսընդոտուէր : Լուսինը ծովին հայելին վերածեր էր հեղուկ երկնակամարի, ուրկէ մէկ մէկ լուսալիւր նետեր երկինքի ասուպներուն հետ շարունակ կը տեղափոխուէին, կը լուծուէին հիասքանչ, և այդ ամեն լոյսերէն, այդ ամեն կանաչութիւններէն, այդ ջուրերու խարշափէն հարաւի մեղմ դաղջ հովը կը հիւսէր այն բազմերանդ նկարները, որոնց ամենէն ճարտար նկարիչը պիտի նախանձէր : Այդ լուսաշող մթութեան մէջ ամեն ինչ կրկնուած էր ծովարձակ : Բուսաքողք բլուրները իրենց պատուանդանը չնստած, իրենք ալ կը ծփային ջուրերուն հետ, և մեղմօրօք նաւը՝ ջուրերուն վրայ յուլօրէն նետուած՝ կը թողուր որ իր տախտենի գոգը ձեղքէր այդ լոյծ վարագոյրին բերերանգ թաւիչը, լոյսերէն և բոյսերէն, խաւարէն և անդունդներէն յօրինուած :

Հերմոնի ձիւնապատ գլուխը գիշերի հորիզոնական կարմիրներուն մէջէն կը գծէր ճերմակ երիզը, որ կուգար ծովակին մէկ հեռաւոր անկիւնը պատ-

ուել, թողլով որ հարաւի և հիւսիսի բերաններէն եկած հովերու ծփանքը ներդաշնակէ, այդ «սսկի բաժակին» շփուելով :

Յորդանանու գիւ գիւ ջուրերուն անցքը ծովակը կը ձեղքէր, հազու թէ անոր միջինքը փերփերցնելով : Չկները կը խաղային այն կարածիւթ սեւ քարերուն վերեւ, որոնք ամբարուած Նեմեսիաներու ընդունարաններուն պէս կը տեսնուէին խորը այդ յիստակ ջուրերուն, և որոնք գիշերի ցնցող դիւայնութիւններու կախարդանքովը կը դիւթէին գեղջուկ ձկնորսները :

Ծովափը դեռ կը չէր անցորդներու ոտնատրոփէն, և աւազը իր ձայնը կը խառնէր ալիքներու մրմունջին, որ Յիսուսի քարոզութիւնները կը կրկնեցուցէր խորհրդապաշտօրէն, գիշերի բեցուն՝ լուռ ծոցին մէջ. երբ Յիսուս խորհուրդի ծովին պէս հեղեղած գանկը կը հանգչեցնէր բարձին վրայ, թողլով որ բնութեան զգլխող խօլանքներուն տեղ երկնային տեսիլներ պայծառացնեն իր հոգիին՝ իր բարախուն սիրտին ներքնահայեցութիւնները : Աշակերտները օրուան խոնջէնքը կը մրափէին նաւակի առասաններուն կառչած : Չկար մէկը որ այդ խաղաղութեան վեսիլին գիրկէն դգար մօտալուռ վտանգը այն ալիքներուն, որոնք դիւայնօրէն պիտի ջլախտաւորէին պահ մը վերջ, և որոնք օր մը պիտի քարանային բարձունքին վրայ հոգեղմայ աղօթող վարդապետին ոտքերուն ներքեւ (Մտթ. ԺԴ. 25) :

Կը մեկնի նաւը, կամ մանաւանդ դատապարտուած է մեկնելու : Յիսուսի կերպարանքը՝ նաւին ծայրը շքանկարուած, կըր՛ւն և խորհր-

դաստուեր, պարտասածի դէմք մըն է : Գիշերի սքանչելիքներուն մէջ ի՛նչ անտարբեր դիպուածներ կամ դիպուածական ի՛նչ գիտակցութիւններ միաբաններ են նաւակին սա երազուն՝ տրտմագին խորհրդանկարը յօրինելու, բնութեանական գորշ, պղտոր, ամուլ ու միանգամայն յտակ անծանօթի մը բոլոր ոչնչութիւնները գիտցող վարդապետէն առաջնորդուած :

* * *

Տեսարանները կը փոխուին արագ արագ :

Հորիզոնի կարմիրները կը ստուերատին մեռելայթի սեւերով : Ամպերը հեռաւոր տարածութիւններու վրայ կը սեւագրեն ճարտարարուեստ նկարներ խնչափառներու, աստաքողներու և անձանաչ կենդանիներու, որոնք կարծես իրենց երախը կը բանան, փոթորկող հովերը ծնցնելու համար : Հեռուէն ծուր ճպուռին, վայող բուերու կազկանձին և ոռնացող շնագայլին վայրագ խժուլտուքները՝ գիշերին ու միայնութեան մէջ արթնցող ուրուականներու լեզուն կը խօսին կարծես : Հովերէն ձեռուած ծառերուն ոստաքանց աղամոխը և ալիքներուն թեւաբախումը գիշերազուարճ ոգիներու խռովքը կը թափեն ամեն դի : Փոթորկուած գանկի մը և լերկ՝ ապալեր հոգիներու բառերը կը թոթովեն համագոյք շուրջանակի, և լոյսի ու վսեմի կեանքը կը լուծուի ալիքներու ամենութեան մէջ :

Ալիք ալիքի կը յաջորդեն . . . :

Հեղուկ ջուրերուն յեղյեղուկ շրջապատիկերը կ'ուռի, կը խոչորնայ յարաշարժօրէն, ամպերու

ստափէ քղանցքը կը թօթուէ իրմէն իր հրապոյրները, անոնց տեղ դիւակաւ սարսուռներ կախելու համար խեղճուկ նաւակին հանդէպ : Փոթորիկը կը դահալիժէ լեռներէն, փորձութիւններու թափով, զաւանցող միտքի մը պէս խօլական, խօսելով վայնասունի և ճիչերու չարչրկող լեզուն, և կուտելով տանջանքն ու արհաւիրքը Անծանօթի գաղտնիքներուն, այդ յուսարեկ ձկնորաներուն վրայ : Ճարահատ Գալիլիայիներ . . . , որոնք տարիներով ծովի բառերը հեգաձ կ'ին իրենց ուսկաններու հիւսքին մէջէն, հիմա ցաւատանջ հեծութիւններու ողբը կուլան մռնչող բնութեան և ծովուն ինքնամոլութեան վտանգներուն հետ :

Միայն Յիսուս կը քնանար հանգարտիկ :

Երկնային հակասութիւն . . . :

Ի՛նչ է այդ լաստակը, որ կ'ալեծփի, հեռանայտ Անծանօթին ափունքը թռչող պղտոր, տարակուսական Աւետեաց երկիրները փնտռող ճիճն է արդեօք անիկա :

Ու փոթորիկը, աւանց լսելու յուսահատ նայուածքի պալատանքներուն, կը կոծէ շարունակ դիւրաբեկ լաստը նուիրական կարապի մը կամ ծովածայի մը թեւերէն փրթած փետուրի մը պէս, և կը խաղայ կեանքերուն հետ որոնք հիմայ մահուան անդունդէն վեր մագլցելու յուսահատ ճիգը կը փորձեն :

Ալ յոյս չկար բնաւ փրկութեան . . . :

Ծովակին հիւրերը առաջին անգամ ըլլալով կը զգային մահը՝ այնքան իրենց մօտիկ, իրենց ոտքերուն ներքեւ, իրենց գիրկընդխառն, տախտակէ որմով մը բաժնուած իրենցմէն, և քնացող

Յիսուսին անքոյթ խաղաղութեան և փոթորիկին միջեւ եղած հակադրութիւնը ա՛լ աւելի կը քստմնցնէր զիրենք .

— «Վա՛րդապետ , քու հոգի չէ որ կը կորսուինք » (Մրկ. Դ. 38) :

* * *

Քունով թաթխուած աչքերը իրենցմէ մէկզկէրբին արտեւանունքի ստուերոտութիւնները : Շըրջակայ խռովքը ա՛լ աւելի կը շեշտէր Անոր հոգիի հանդարտութիւնը :

Մէկ նայուածքով չափեց փոթորիկին կատաղութիւնը և աշակերտներուն յուսահատութիւնը : Իր աչքերը ա՛յնքան խոստմնալից , ա՛յնքան յուսատու , հորիզոնէն նոր ծագող արեւու մը պէս ձեղքեցին մութը . այդ նայուածքէն սարսուռ մը տարածուեցաւ շուրջանակի , ու հովը , որ Մեռեալ ծովուն ջուրերուն վրայէն կը խուժէր , անոնց պէս տոնոյն ու դաժան , առկախ մնաց օրօրուն՝ Յորդանանու թափ տուող բերնին մէջ : Ու դիզուած ամպերը կայծակէ դարնուած դօս ծառի մը տերեւներուն պէս թափեցան ցրքուն : Իր բարձրադիր հասակը , նաւին յետակողմին վրայ կանգուն , և հիւսուած՝ խաւարին հետ , ի՛նքն ալ խաւար , անգամ մըն ալ չափեց հորիզոնը . . . :

Պուրակներուն մեռած խոպոպները նորէն սկսան խայտալ և ծառերուն դանդուրները անգամ մըն ալ ի տես դրին իրենց մեծվայելչութիւնները ջուրերու հայելիին մէջ : Իր հնչուն , ներդաշնակ ձայնը , ուրկէ երկինքի խաղաղութիւնը կ'երգէր .

«Դադարէ՛ , լո՛ւռ կեցիր » , մրմնջեց ծովին ,

որ միջակաուր օձի մը պէս կը գալարուէր իր ալիքէ օղակներուն մէջ , բարկաճայթ՝ մտացնոր անդհականութեամբ (Մրկ. Դ. 39) :

Մահը խափանուած էր խաղաղութեան տեղի տուող փոթորիկի անհետացումին հետ , և նաւը ծովակը ձեղքելով ցամաքը կ'ողջունէր Դադարայի ափունքը :

Առաքեալներուն թերահաւատութիւնը գերագոյն՝ անմոռանալի դաս մը առած էր այդ նայուածքէն , այդ ձայնէն , որոնք իրենց հոգիները դըրդած էին (Մրկ. Դ. 40) :


— «Արդեօք ո՞վ է անիկա , որուն՝ հոմը ու ծովը կը հնազանդին » :





Է.

ԼԵՐԱՆ ՎՐԱՅ



ՊՈՍՏՈՍԻ զիշեր մըն էր :

Ժողովուրդը անապատը խը-
նուած, անգամ մըն ալ ճաշակած
էր Բրիտանէութեան սեղանէն ,
ուր ժուժկալութիւնն ու ողջախոհութիւնը իբրև
անհրաժեշտ պայման ընդունուած էր (Ղուկ. Թ.
12 - 17) : Իրիկունը կապոյտ ու լուսաշող մութով
մը կը շրջանակուէր , երբ ալօթքը՝ Յիսուսի հո-
գիին ամենէն վսեմ արտարտրուժը՝ կը սրբագոր-
ծէր բայձունքները : Որովհետև պէտք է ըսել թէ
Յիսուսի պէս ոչ ոք պիտի կրնայ ազօթել երկրի
վրայ :

— «Յովհաննէս Մկրտիչն է», ըսած էր իրեն համար Հերովդէս (Մրկ. 2. 16) :

— «Եղիան կամ ուրիշ մարգարէներէն մին է», կ'ըսէին աշակերտները ժողովուրդին բերնով (Ղուկ. 10. 19) :

Որոշ գաղափարը՝ իր Անձի մասին՝ տակաւին արմատ ձգած չէր մէկու մը միտքին մէջ : Անմեկնեւին, առեղծուածն իսկ էր իր անձը, նոյն իսկ անոնց համար որոնք ի՛րն եղած էին, և որոնք կը կազմէին իր ամենէն ներքին և ամփոփ շրջանակը : Պէտք էր ուրեմն այդ տարտամ տարակուստ համոզումները ցրուել նախ իրեններուն միտքէն, անոնցմով կարենայ միւսներուն գաղափարը շինելու համար . պէ՛տք էր ուրեմն՝ ցոյց տալ անոնց Մովսէսն ու Եղիան, ի՛նչ օրէնքին երկու մե՛ դէմքերը, որոնցմէ մին մորենին այրեց, ու միւսը կարմեղոսի սեղանները . որոնցմէ մին՝ քարը կենդանացուց օրէնքով ու միւսը հոգիով անմահացուց Օրէնքը, մին՝ Աստուծոյ համբոյրին տակ մեռած, ու միւսը երկինք վերելակած, և որոնց երկուքն ալ կենդանի բոյրի մը պէս կը վերագարթնուին ռամիկ միտքերու խորէն, երբ երկրին բարձունքներուն վրայ մարգարէական հոգի մը փայլատակէր :

Մովսէս ու Եղիա, Ուրիմն ու Թումիմը, օրէնքի, զգացումի, խանդի ու ճշմարտութեան Եփուտին : Մին՝ Սինի ապառաժները լացուցած (Թիւք. ԺԳ. 21 Թ. 1-13. Իէ. 14) . իսկ միւսը՝ Սինայի բարձունքը գզրդող որոտումները ծծած (Գ. Թագ. ԺԹ. 12) . մին՝ Եգիպտոսէն խուսած և միւսը Յեզարէլի արիւնստ նայուածքէն . երկուքն

ալ — Եգիպտոս և Յեզարէլ — ամբարիշտ, երկուքն ալ մծղնեայ և անիրաւ, երկուքն ալ — Մովսէս և Եղիա — մեծ, երկուքն ալ՝ հոգետես՝ մարգարէ :

* * *

Չորսն ալ լուռ էին, երբ վեր կ'ելլէին լեռնէն :

Գիշերը խորհրդաւոր կարմրութիւն մը ցըրցըքնած էր չորսդին : Անհատնում լուսաւորները՝ հակառակ ասուպներուն փոխտեսայ ընդվզումներուն, կարծես ինքզինքնին կը լուսամփոփէին հանդիսատեսն ըլլալու համար այն ճեպակաւ փոփոխութիւններուն, որոնք «Սուրբ լեռան» բարձունքը պիտի նուիրագործէին : Ծիր կաթինը իր մեղկ մարմինը կը փռէր տարտամօրէն, պիսակաւորուած այն ոսկեձոյլ լուսերով, որոնք աւելի եւս կը շքանչէին երկինքին երեսը մոռցուած այդ Թուլահիւս գօտին, տաք երկիրներու կուսական մեղկանուշ մարմիններուն պէս, և որ կարծես իբրեւ մանեակը շինուած էր գիշերներու թագուհիին :

Իրենց կրօնքը բարձունքներու վրայ ներշնչուած, և անոնցմէ պատուաստուած էր արդէն : Պաղեստինի բնութեան հպարտ ու պարարտ ստինքն էին անոնք, որոնցմէ քաղցրութիւն կը բղխէր (Սմովս, Թ. 13. Յովէլ, Գ. 19), և որոնք կաթով կ'ոռոգուէին (Յոր. ԻԹ. 6) : Մարգարէն կը կենդանացնէ զանոնք : Սաղմոսներ կ'երգեն այդ լեռները (Դան. Գ. 73), ու տառապող սիրտը իր ակնկալութեան յոյսերը անոնցմէ միայն կը սպասէ : Անոնք իրենց վեհութեան ու բարձրութեան մէջ կ'որոտան ու կը ծխան, կը փայլատակին ու կը սասանին :

Գիշերի այդ լուսէր մը մունջներուն զիրկը Իթափորի բարձունքը ցցուող աշտարակին կիսախորտ մասերուն անհաւասար ատամնաշարերը երկինքի գաղջութիւնը կը սղոցէին կարծես վարը լիճին մասնակի կապոյտը կ'ուրուագծուէր սարահարթերու, ձորակներու և լեռներու միջով : Գիւղերն ու քաղաքները բուռած գերեզմաններու պէս մէկ մէկու ծոցը կը նիրհէին : Հիւսիսի հորիզոնը կը ճերմկէր Լիբանանու և Հերմոնի հեռաւոր ձիւնափառութիւնովը : Արեւելք՝ լեռներու անշարժ, հսկայ բարձունքներ չէին կրնար իրենց ետին ծածկել Ապառաժն Արաբիոյ գորշ-կապոյտ լեռնագօտին ու Անապատը, Ահաւորին չափ միանձուն, անոր պէս խորին ու խոհուն : Եւ այդ չիջասփեւ, անաւոր գաղջութեան անշարժին մէջ Յորդանան իր զուարթ խնձիղով՝ ուստոստուն, իրարու կը միացնէր՝ արեւելքէն արեւմուտք, Զէրքան ու Արճլունը : Մովաբ հարաւէն Մեռեալ ծովուն կը տիրէր : Միջերկրականը Կարմեղոսի և Նազարէթի լեռներուն իրարմէ անջատուած մէկ միջոցէն կ'երեւէր իբրեւ կապոյտ բիծ մը . խառնուած՝ տարորոշուած երկինքի կապոյտին հետ . . . :

Կեանքի անորոշութիւնը, անապատային թափառկոտութիւնները, ժողովուրդին տուայտանքը և բարձունքին վերելքը յոգնեցուցած էին զիրենք այն պակուցիչ դժնդակութիւնով, զոր մարդ իր մէջը կը զգայ դիպուածական, չհամոզուած, ու մութ ձեռնարկութեան մը միջոցին :

Սուրբ լերան վրայ, Յիսուս պայծառակերպութիւնն էր լուսաւոր, փաղփուռ երկինքի մէկ ցլացումը, որ ա՛լ աւելի կը շեշտուէր, կը սպի-

տականար, կը վսեմանար իրեններուն մուսլականութեանը ի տես : Սուրբ լերան կասարը ոսկերուկն էր եղած վարի հարթ տարածութիւններուն, որոնց մէջ, մէկ կողմը կը խորդար երուսապէմ, մարգարէներու այդ ոճրագործը, և միւս կողմը՝ ժողովուրդը կը տաղտապէր մեղքի մոխրագոյն հաեւանքներով :

Լոյսի և խաւարի խառնուրդը հոս ա՛լ աւելի շօշափելի կը դառնայ, դիցութեան պաշտամունքներու և հաւատալիքներու նմանաթել հիւսուածքը մկրատելու համար :

Գալիլիացին հիմա իր այդ վսեմին դրացնութեան գիրկը, իր աստուածային լուսեղէն հիւսուածքին այդ ճոխ զարգացումին մէջ, աւելի կը զգար այն արտակարգութիւնները, որոնք իր աննիւթականի իսկութիւնը կը լլկէին իրեններէն ու աշխարհէն հասկցուած չ'ըլլալուն բոլոր յոռետանջութիւններով, ու այն հոգէախտութիւնովը, որով աշխարհք կը չարագիւլէր :

Յոգնած, տառապած, ու մահուան ուրուանկարովը նախագրաւուած հոգին՝ դալուկ կարմրութիւնը, լոյսերէ շաղուըւած կարմրութիւնը բերած էր իր վրայ :

Ծնրագիր ու ձեռնամած, դէպ ի անհունը կը խորասուզուէին իր աչերը, որոնք բիւրեղ երկինքին հրեշտակայնութիւնը կը բուրէին, և որոնց խորը պահուըտող արցունքի երկու տառապագին կաթիլներ կիզանուտ ջերմութեան մը ատրաչէկ սպիտակութիւնովը կը վարագուրէին, իրմէն, չուրջի տեսլերեւոյթները :

Իր աղօթքը՝ բովանդակ հոգի, բովանդակ պաշ-

տում, իր վրայ կը լուսանկարէր խաղաղ՝ աստուածային մեծվայելութիւններու հրաշալիքը, ու անմեղութեան, չարչրկուող անմեղութեան և յուսատենջ անարատութեան համոզուած գիտակցութիւնը, հրեշտակներու շղարշային, նուրբ, սպիտակ պատմուճանը սիւսած էին իր վրայ:

Սյակերպած էր Յիսուս, կամ աւելի ճիշդը, պայծառակերպած: Իր այդ նորասքանջ կերպաւորումին լոյսերը սնդուսէ խողանքներ կը լինէին մէջը այն քունթաթախ բիրերուն, որոնք աշակերտներուն ծանրացած արտեւանունքովը կը խփուէին:

Եւ հիմա այդ պայծառակերպութեան մէջէն, Երուսաղէմ շատ աւելի կը խաւարչուէր, իր ստրջանքի ստուերներով, երբ Մովսէս ու Եզրա, կը խօսէին «Անոր, իր կեանքէն ելլելուն վրայով, որ Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր» (Ղուկ. Թ. 31):

Երկինքի ճամբան բաց էր Յիսուսի արժանաւորութեան առջեւ:


Բայց Յիսուս չէր ուզեր մինակ երթալ հոն: Պէտք էր որ իրեն հետ տանէր նաեւ զանոնք, որոնք «Աստուծոյ որդիներ» պիտի ըլլային իր նորոգութիւնովը, ու իր արիւնովը զնուած:

Ուրեմն, Կեանքի և Մահուան կռիւին մէկ արարուածն էր պայծառակերպութիւնը, յօժար հոգիին ու տկար մարմինին միջեւ մղուած: Եւ ահա, հովանաւորող ամպը, հայելիին երեսը փրշուած խոնաւ շունջի մը կամ գէճ քրտինքի մը պէս երկինքի բաց ճամբան կը մթասքօղէ գաղտնի ձեռքէ մը թելադրուած:

Յիսուս իրեն պատրաստուած Մահին կը վազէր . . . :

Մովսէսն ու Եզրան շառագունեցան ընդհուպ, զգալով ամպին ներքեւէն, այն սարբերութիւնը, որ կը պայծառագորուէր իրենց ու Յիսուսի վախճաններուն միջեւ: Մինչ ձայնը, հեռուի ձայնը, երկինքի խորէն փրթած, համաստեղութիւններու երաժշտութիւնը կը յօրինէր, երգելու համար մահուան կենսաբաշխ յաղթանակները, և իր երկարածիգ պարոյրներով ներդաշնակելու, պայծառակերպութեան խորհուրդին աստուածեղինութիւնը: — «Ատիկա է իմ սիրելի որդիս, Աստոր մտիկ ըրէք» (Ղուկ. Թ. 35):





Ը.

ԵՐԵՔ ՍԵՂԱՆՆԵՐ



ՈՒՆԱՍՏԱՆ Ելեւսեան խորհուրդներուն մէջ սուգուած, գիտական ու կրօնական դաղտնիքներով կը ծփար : Հեշտասէր Գեղարուեստը՝ իր զարգացման գաւաթնակէտին հասած, կը բռնէր կալուածը գործնական ու դրական իմաստասիրութեան, և իմաստակութիւնները իրրիւ առողջ փիլիսոփայութիւն կը հրամցուէին ամէն կողմ, երբ Սոկրատի ճաշատ գլուխը դուրս ցցուեցաւ, և Բարիի սկզբունքին վրայ հիմնուած խորհուրդներուն (mystère) դէմ առ դէմ բերաւ յայտնի գիտութիւնը : Ժողովուրդին մարդն էր Սոկրատ, կրօնքին ու գիտութեան ուսմկացնողը : Իր բարոյականի վճիռները իրերուն

ու մարդերուն խորը կը լուսաւորէին, երկինքէն ինկող ճառագայթի մը պէս :

Պլատոն, ծնած մեր թուականէն 429 տարի առաջ, երիտասարդ Էբարձրագիր ու թիկնեղ, լուրջ ու «գրեթէ միշտ լռին», իր ծաղկատի վայրկեանները նուիրած էր բանաստեղծութեան և Գեղեցիկին արտադրութիւններուն : Այդ զուարթ ու միանգամայն մեյամաղձոտ բանաստեղծը սակայն, երբ իր բերանը կը բանար, կը գրէ Շուրէ . «Մաքուր զգայականութիւն մը, դիւթող քաղցրութիւն մը կը բլխէր իր խօսքերէն : Իր մէջ չկար անմաքուր՝ չափսզանց բան մը : Իր բազմազան ընդունակութիւնները կը ծածկուէին իբր թէ լուծուած ըլլային իր էութեան գերագոյն ներդաշնակութեան մէջ : Թեւ առած չնորճ մը, բնական համեստութիւն մը, իր միտքին լրջութիւնը կը ծածկէր, գրեթէ իդական գորովանք մը իբր քօղ կը ծառայէր իր նկարագիրին սովորութեան : Իր մէջ առաքինութիւնը կը հագուէր ժպիտով մը, և հաճոյքը՝ անկեղծ պարկեշտութիւնով : Բայց իր տիրող, տարակարգ այս հոգիին հետ միացած նշանակը սա էր, թէ ծնած ատենը կը թուէր խորհրդաւոր դաշնակցութիւն մը կնքած ըլլալ Յալիտենականութեան հետ» :

Պլատոն, որուն հոգիին հիմը կը կազմէին «Սէրն ու ներդաշնակութիւնը», իր գեղագէտի բոլոր վառվռունութեանը մէջ, որուն կ'օգնէր նաև իր երիտասարդի տարիքը, ունկնդրութիւններ ունեցաւ Սոկրատի քարոզութիւններուն : Այդ քանի մը ունկնդրութիւնները բաւական եղան, որ Պլատոնին մէջ տեղի տայ բանաստեղծը, Սոկրատի

բերնով խօսող իմաստասէրին : Պատրանքներով, սիրոյ գինովութիւններով լեցուն բանաստեղծը «ալ ինքզինքը չէր կրնար ճանչնալ : Իր խորհուրդներուն ընթացքը, իր կեանքին նպատակը փոխուած էր ալ : Ուրիշ Պլատոն մը կը ծնէր իր մէջ» :

Իր ներքին փոփոխութիւնը վճռական որոշումի մը առաջնորդեց զինքը :

Այն վայրկեանին, երբ իր յարեկամները՝ ողբերգական տեսարանին վրայ՝ բանաստեղծական մրցակութիւն մը կը սպասէին իրմէն, Պլատոն զանոնք սեղանի մը հրաւիրեց : Այս արտակարգ հրաւերը տարօրինակ թուեցաւ իրենց : Այդ հարուստ ընտանիքին զաւկին սեղանը չըջապատուած էր Երոսի ընկերացող Մուսաներու և Շնորհներու արձաններով, և այն բոլոր առարկաներով, զոր բանաստեղծութիւնն ու արուեստը կրնային արտադրած ըլլալ : Գիշերի խաղաղութեան մէջ պարտէզը կը լուսագարգուէր այն ջահերով ու լապտերներով զոր մանուկ սպասաւորներ վերամբարձ կը կրէին : Բանաստեղծներ էին հրաւիրեալները, չողչողուն իրենց երեւակայութիւնովն ու հանդերձներովր : Հելլէնուհիներ ամենէն հեշտոտ պարերը կը կազուէին սրինգի ձայներով, Գինովները օրհներգներ կը նուագէին Սիրոյ և Բագոսի, և ուրախութիւնը՝ հաճոյքի և հեշտանքի թեւերով կը սառառնէր գիշերին ծոցը : Հրաւիրեալներուն խնդրանքով ոտքի կ'ելլէ Պատանին, և փոխանակ անոնց պահանջումը կատարելու, սա բառերը կ'արտասանէ հանդիսաւորապէս .

«Այս վերջին սեղանն է, զոր ձեզի կուտամ : Այս օրէն կը հրաժարիմ կեանքի հաճոյքներէն,

ինքզինքս տալու համար իմաստութեան և հետեւելու՝ Սոկրատի ուսուցումին : Ամենքնիդ ալ գիտցէք, կը հրաժարիմ նոյն իսկ բանաստեղծութենէն, որովհետեւ ես համոզուեցայ, թէ անի անբաւական է բացատրելու ճշմարտութիւնը զոր կը փնտռեմ : Տող մը անգամ ոտանաւոր չպիտի գրեմ ալ, և ձեր ներկայութեան պիտի այրեմ բոլոր շարագրածներս : Ենորհակալ եմ ամեն անոնց որոնք ուղեցին մասնակցիլ այս հրաժեշտի տօնին, բայց ա՛լ իմ մօտս պիտի կրնամ պահել միայն ամեն անոնք, որոնք պիտի ուղեն իմ նոր կեանքիս մասնակցիլ : Այսուհետեւ Սոկրատի բարեկամները իմ միակ բարեկամներս պիտի ըլլան :

Ապշեցան բոլոր ներկաները, որոնց գլուխները ամպտոտ չէին գինիէն, քնարներէն, սրինգներէն, կաքաւներէն : Ու միեւնոյն ժամանակ Պլատոնի սոյն հանգիստաւոր յայտարարութիւնը՝ հրաժեշտի սեղանին վրայ, ներկաները արհամարհանքով ու սրտնեղութեամբ լեցուց :

— «Սրբապղծութիւն է» կը պոռային շատերը :

— «Պլատոն խենթեցեր է» կ'ըսէին ուրիշներ :

Ու ներկաները իրենց փափուկ պատգարակներուն վրայ փռուած, արագ արագ կը խուսէին ընթրիքի պարտէզէն, երբ Պլատոն իր որոշումին վրայ գամուած մարդու մը պաղարիւնութիւնով, առանց իր վերջամնաց երեք բարեկամներուն արցունքին կարեկցելու, իր բանաստեղծութիւններու ծրարը բոցերուն մէջ կը նետէր և տիրական ձայնով մը կը պոռար :

— «Վուկանոս, հո՛ս եկուր, Պլատոն պէտք ունի քեզի» :

Գիշերուան ընթրիքի սեղանին լուսերը մաքրեցան, զարնուրած այն վայրկենին, երբ Պլատոն իր մէջ կը սպաննէր բանաստեղծը, Արուեստին ու Գեղեցիկին մարդը, ծնունդ տալու համար իմաստասէրին, խորհող էակին :

• • •

Ամբողջ Եւրոպայի վրայ կրօնական տգիտութեան մը մառախուղը ձգուած էր : Աւետարանի սերմը խեղդուած էր նախապաշարումներու տեղատարափէն : Եւ հոգիին հարցը տեղի տուած էր կաթոլիկ եկեղեցիին նիւթակրօն սկզբունքներուն : Փողոցներուն մէջ մուրացիկ վանականները կը հետապնդէին մուրացիկ աշակերտներ, որոնք իրենց կրթութիւնը կը շարունակէին բարեսէրներու հացով :

Մասնֆէլտի հանքագործին տղան մէկն էր այդ մուրացիկներէն, որոնք երգերով կը պարեհաւորուէին, Գիտութեան ծարաւին յագեցնելու համար : Ի սեռ Աստուծոյ՝ հաց երգին դողդոջուն ձայնը շատ անգամներ ի զ՛ուր կը զարնուէր մեծատուններու փակ դուռներուն, և անօթութիւնը կը հեծկտար ցուրտին ու բուքին :

Լուտեր կեանքի այդ բոլոր սրտմաշուք օթեւաններէն անցած, հիւսա ինքզինքը կը գտնէր Էրֆուրթի համալսարանին մէջ, ուր 1505 տարին իրեն համար տօնած էր մին այն փառաւոր հանդէսներէն, որոնք կը կատարուէին վարժապետ-փիլիսոփայութեան վկայագրերու արժանացողներու համար : Հանքագործը հպարտ էր հիւսա իր տղուն յաջողութիւններով : Իր ընկերական դիրքին բարձրացումը ապահովուած էր ալ, ու տղան, պա-

տանին Լուտեր, այս հսկայ շէնքին անկիւնաքարը
ըլլալ սահմանուած էր :

Ո՛րքան ծրագիրներ դատապարտուած են վի-
ժելու . . . :

Լուտերի աշակերտական կեանքը հիմնուած
էր սա սկզբունքին վրայ . «Ուսման կէսը, և լա-
ւազոյն մասը, լաւ աղօթելն է» : Այդ սկզբունքը
ալ աւելի զօրացաւ իր մէջ, երկու պատահարնե-
րու բերմամբ : Իր մտերիմներէն մին՝ Ալեքսիոս
սպաննուած էր յանկարծ : Այդ բռնի մահը շատ
գէշ տպաւորութիւն մը ըրաւ իր վրան :

— «Ի՞նչ պիտի ըլլար ինձի. ըսաւ Լուտեր, եթէ
ինձի վիճակէր այսպէս յանկարծ մեկնիլ աշխարհէս» :

Այդ մահուան սոսկումը, և իր անձին համար
ի՛ր կազմած գաղափարները, զինքը տոգորած էին
կրօնքի խորհրդապաշտ զգացումներով : Բնական
փիլիսոփայութեան և Արիստոտէլի վարդապետու-
թեան գիրքերը կը դողային իր մատներուն մէջ,
երբ ինքը ամպիոնէն կը դասախօսէր : Այլուրի
(outré-tombe) և կրօնական բարեպաշտութեան
խորհուրդները կը փորէին իր գանկը, որուն մէջ
լայն տեղ մը բռնած էին իր ժամանակի կրօնա-
կան շփոթութիւնները, տարակոյսները : Դէպի
Մանսֆէլտ կատարուած ճամբորդութիւն մը ոչ
միայն չկրցաւ զինքը հանդարտել, այլ ընդհա-
կառակն ալ աւելի սեւցուց իր ճակատին խորը դիզ-
ուած ամպերը : Յանկարծ փոթորիկը կը գոռայ,
ու անմիջապէս երկինքն ու ալիքները դղրդող ձայ-
ները կը դադրին նորէն, երբ կայծակ մը կը շանթէ
իր մօտ : Այդ կայծակներէն ու փոթորիկներէն
զարհուրած Լուտեր ծունկի կուգայ և կ'ըսէ .

— «Տէ՛ր, իմ կեանքս քեզի պիտի նուիրեմ,
եթէ սա մահէն զիս փրկես» :

Լուտեր փրկուած էր :

1505 Օգոստոս 17ի գիշերն էր :

Էրֆուրթի համալսարանի սենեակներէն մին
լեցուած էր Լուտերի բարեկամներով : Մնջոյքի
սեղան մը զանոնք անգամ մըն ալ իրարու մօտ
բերած էր այն նո՛յն յարկին սակ, ուր իրենց պա-
տանութիւնը հասունցած էր : Երաժշտութեան մե-
զեզին կը վէտվէտի ներդաշնակօրէն, սիրտերը կը
զուարթանան, հոգիները կը թրթուան, կեանքը
կ'ալեծփի խորհուրդներու այս եզրայրական հա-
մադրութենէն : Լուտեր՝ իր բարեկամները ուրա-
խութեան զենիթը հասուցած, ոտքի կ'ելլէ յան-
կարծ, և հատիկ հատիկ բաւերով կ'ըսէ իր հրա-
ւիրեալներուն .

— «Իմաստութիւնը զիս չգոհացներ, աշ-
խարհի պատաղումը ալ աւելի կը դառնացնէ հո-
գիս, որ ծարաւին է Յաւիտենական ճշմարտու-
թիւններու : Մնաք բարով իմաստասիրութիւն,
մնաք բարով իմաստասէր ընկերներ . վանքը իր
ծոցը կը քաշէ զիս, ուր պիտի երթամ աղօթքի
ամբարձումներով կրօնքը ընդգրկելու, իրրեւ
կեանքիս գերագոյն նպատակը» :

Մինչ իր բարեկամները՝ չուարած, կը ջանային
զինքը ետ կեցնել յայտնած խորհուրդի իրագործու-
թենէն, Լուտեր շտապով կը թողուր իր բարեկամնե-
րուն ընթրիքի վերջին սեղանը, և կ'երթար, գիշեր
ատեն՝ ձեռք առնուլ Օգոստինեանց վանքին դուռը :

Էրֆուրթի այդ սեղանը Լուտերին համար ծա-
ռայից իրրեւ մեկնակէտ մը, ուր իր մէջ իմաս-

տասիրութիւնը կը դադարէր, կրօնքին ու Աստուածաբանութեան տեղի տալու համար :

* * *

Յիսուսի երեսուն երեք տարիին Նիսանի 14ի գիշերը նուիրագործուեցաւ սեղանով մը, որուն նմանը չպիտի կրնանք գտնել բոլոր տարեգրութիւններուն մէջ :

Երուսաղէմ դեռ կը թնդար «Ուսաննա»ներու ալիւրներէն (Ղուկ. ԺԹ. 37, 38. Մրկ. ԺԱ. 9, 10. Մտթ. ԻԱ. 9), Պոռնիկ կնոջ իւզը դեռ կը բուրէր Յիսուսի վրայէն (Մտթ. ԻԶ. 6—13. Մրկ. ԺԴ. 3—9. Յովհ. ԺԲ. 1—11), և Երուսաղէմի տաճարը կ'արձագանգէր դեռ այն «վայ»երովը որոնք իբրև գերագոյն յանդիմանանք մը, իբրև աստուածային անէծքի մը բեկորները նետուած էին Փարիսեցիին և դպիրներուն ճակատին (Մտթ. ԻԳ. 1—39. Մրկ. ԺԲ. 1—40) :

Եւ տակաւին չէր չորցած այն արցունքը, զոր Յիսուս թափած էր Երուսաղէմի համար (Ղուկ. ԺԹ. 41—42) :

Ինչ որ ալ եղած ըլլային ապագայի պատուհասները, պէտք էր որ Օրէնքը կատարուէր :

Զատիկը մօտ էր, պէտք էր ընթրիլ իրեններուն հետ : Իր փափաքն էր այդ վերջին սեղանը վայելել նոյն իսկ Սուրբ քաղաքի շրջանակին մէջ : Յիսուսի ուխտեալ բարեկամներէն մին, մեղի անձանօթ, իր հրահանգին համեմատ, իրեն տրամադրութեան տակ կը դնէր «յարդարուած մեծ վերնատունը» (Ղուկ. ԻԲ. 7—12, Մրկ. ԺԴ. 12—16, Մտթ. ԻԶ. 17—19) : Երեկոյին ամենքն ալ հա-

ւաքուած էին, տասներկուքը և Յիսուս, այդ վերնատան մէջ, որ գեղջուկ զարդարանքով մը կը փեղկէր պատերուն մերկութիւնը :

Ոչ աշխարհիկ նուագարաններ կային հոն, ո՛չ ցոփ երգերու թրթուումը, և ոչ կայթուէիներուն կաքաւը : Լուսթիւնը մեռելոյթի թոյր մը սփռած էր ամէն դի, ուրկէ Աստուծոյ խաղաղութիւնը պիտի խօսէր :

Երեք տարիներէ ի վեր ճշմարտութեան և արդարութեան համար մաքառող Մարդուն Որդին, հիմա ա՛լ ինքզինքը մօտ կը զգար Խաչին, որ մինչեւ այն ատեն իր գալափարներուն, իր վարդապետութեանը վահանն էր եղած : Իր կեանքին վերջին բաժակն էր, զոր պիտի պարզէր իրեններուն հետ, և զոր ինքը մինչեւ անոր մրուրը պիտի խմէր : Գերագոյն վիշտին խառնուած գերագոյն երջանկութիւն մը ուրուագծուած էր իր դէմքին վրայ : Աշխարհի ու մարդկութեան մեղքերուն ճնշող ծանրութիւնը կը կախուէր իր ուսերէն վար (Յովհ. Ա. 29) : Իր գործը աւարտելու մօտ ելող մարդու մը ցնծութիւնը, իրեն «ընտրած»ներէն բաժնուելու վիշտը, արդարութեան եւ Աստուծոյ թագաւորութեան սերմանումին հըրճուանքը, և իրեններէն հասկցուած ջրլալուն յուսահատութիւնը իրարու միացած, կը յօրինէին իր մէջ անանկ վսեմ ներդաշնակութիւն մը, որուն գոյութիւնը չկրնար բացատրուիլ առանց աստուածային միջամտութեան : Մէկ խօսքով, Յիսուսի հոգին ա՛յսքան վսեմօրէն, ա՛յսքան աստուածայնօրէն դուրս ցայտուած չպիտի կրնայինք տեսնել, բայց միայն այս վերջին ընթրիքի սե-

դանին վրայ, ուր Մարմինն ու Հոգին յայտնութիւններն ու զուգորդութիւնները աշխարհի համար պիտի ծննդէին նոր արշալոյս մը, որուն նմանը դեռ չէր տեսնուած Տիեզերքի առաջին արշալոյսէն ի վեր :

— «Փափաքելով փափաքեցայ, որ սա Չատիկը ձեզի հետ ուտեմ չարչարուելէս առաջ : Քանզի կ'ըսեմ ձեզի, թէ ալ լնաւ ասկէ պիտի չուտեմ, մինչեւ որ Աստուծոյ թագաւորութեան մէջ կատարուի», (Ղուկ. ԻԲ. 15-16) :

Յիսուսի այս փափաքին մէջ կը խտանար իր սէրը, փրկարար ու կենդանացնող սէրը, մինչ իր հոգին կը թափանցէր Աստուծոյ թագաւորութեան Աթոռին, զուարթ ու միանգամայն ընկճող տրտութիւնով մը : և երբ աշակերտները մէկմէկու հետ կը վիճէին իրենց վիճակուած մեծութիւններուն համար (Ղուկ. ԻԲ. 24) :

— «Դուք անո՛նք էք, որ միշտ ինձի հետ կը կենայիք իմ փորձութիւններու մէջ : Ես ալ ձեզի արքայութիւն մը ուխտ կ'ընեմ . . . որ դուք իմ սեղանէս ուտէք ու խմէք իմ արքայութեանս մէջ» (Ղուկ. ԻԲ. 28-30) :

Սպասուած չարչարանքը չէ՛ր որ կը դառնացնէր իր հոգին, նեղութիւններն ու վշտերը չէին, որոնց վրայ յուսահատորէն կը նայէր Անիկա . ցաւը՝ զոր կը զգար, սա էր թէ՛ իրեններէն մին պիտի ըլլար մասնութեան գործիքը բուն իսկ իր թշնամիներու ձեռքին մէջ : Յիսուս այդ ցաւին տակ պարտասած, և վիշտերէն քրտնած գլուխը դէպքի վար հակած, իր աստուածային շրթներէն դուրս ահնեցուց այրող բառերը .

— «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ձեզմէն մէկը, որ հիմա իմ հետս կ'ուտէ, զիս պիտի մասնէ» (Մրկ. ԺԳ. 18) :

Մինչեւ այդ վայրկեանը անփոյթ ու զուարթ աշակերտներուն մէջ խռովքի ու շուարուծի սարսուռ մը անցաւ : Անվստահ ակնարկներ զիրար կը հարցափորձեն (Յովհ. ԺԳ. 22) :

— Միթէ ե՞ս եմ, կ'ըսէր մին .

— Միթէ ե՞ս եմ, կը կրկնէր միւսը :

Երբ Յովհաննէսի մանկական դէմքը, ուրկէ երբեմն որոտումներ կը ժայթքէին (Մրկ. Գ. 17), կը հակէր Յիսուսի լանջքին, աղերսող աչքերը Անոր սիրտին մէջ լուծուած, և հետաքրքիր հարցումը բերնէն կախ (Յովհ. ԺԳ. 25) .

— «Տէ՛ր, ո՞վ է ան . . .

— «Անիկա, որուն որ թրջելով պատառը կուտամ» մրմնջեց Յիսուս . . . » :

Ոչ ոք բան հասկցած էր, երբ Յուդա դուրս ելաւ վերնաստունէն (Յովհ. ԺԳ. 26-30) :

Յիսուսի վրայէն ծանր բեռան մը թեթեւացումը պատճառեց այդ մեկնումը : Արդէն իրեններէն ամենքն ալ սրբուած էին այն լուացումով, զոր Յիսուս կատարեց (Յով. ԺԳ. 3-12) : Հիմա պէտք էր իրեն և իրեններուն միջեւ հաստատել կապ մը, մարմինի եւ հոգիի կապը, զիրենք պատրաստելու համար ապագայի կոիւնին, որուն առաջին փորձը իր վրայ պիտի կատարուէր :

Հին ուխտի Չատիկը, կամաց կամաց տեղի կուտար ընթրիքի սեղանէն, պատրաստելու համար այն վերջնական խզումը, զոր Քրիստոնէութիւնը պիտի ունենար Մովսիսականութեան հետ,

մինչ Նոր Ուխտին Չատիկը կ'արիւնոտէր, փրկագործութեան իրեւ տրիտուր : Պէտք էր ամենքն ալ Յիսուսի հետ ու Յիսուսով ապրէին , Անոր հետ մէկ մարմին ու մէկ արիւն եղած : Պէտք էր այդ խորհրդաւոր միութիւնը կազմել , և անոր ամենէն պատեհ առիթն էր ընթրիքը, Յիսուսի վերջին սեղանը :

Կրնար վտանգը սպասուածէն աւելի կանուխ հասնիլ , պէտք էր շահագործել թոչոզ վայրկեանները , անոր համար Յիսուս գաւաթը առաւ , գոհացաւ ու ըսաւ .

— «Առէ՛ք ասիկա , ու բաժնեցէ՛ք ձեր մէջը , ինչու որ ձեզի կ'ըսեմ թէ բնաւ որթին բերքէն պիտի չլսեմ , մինչեւ որ Աստուծոյ թագաւորութիւնը գայ» (Ղուկ. ԻԲ. 17. 18) :

Յետոյ հաց առաւ , գոհացաւ , կտրեց և տուաւ անոնց ու ըսաւ .

— «Այս է իմ մարմինս , որ ձեզի համար տրուած է , ասիկա ըրէ՛ք զիս յիշելու համար . . . : Այս գաւաթը Նոր Ուխտ է իմ արիւնովս , որ ձեզի համար կը թափուի» (Ղուկ. ԻԲ. 19, 20) :

Աշակերտներուն համար շատ յուսահատական ու շատ սրտմաշուք եղաւ ընթրիքին այդ պահը : Իրենց բոլոր սխալ համոզումները , իրենց բոլոր թեթեւ գաղափարները և իրենց մտտի բոլոր ծրագիրները ցնդեցան այդ պահուն , երբ Յիսուս շատ յայտնի կերպով իր չարչարանքին , իր մահուն վրայ կը խօսէր իրենց : Ձեռքի վրայ բռնուած Բիւրեղի մը յանկարծական խորտակումն էր եղած իրենց կեանքը , և իրենք ա՛լ կորսնցուցած էին կարծես այդ խորտակումին փշուրները հաւաքելու

միտքի բովանդակ զիտակցութիւնը : Պէ՛տք էր սրտապնդել զիրենք , յանկարծական խզումով մը չվտանգելու համար Գրիստոնէութեան սկսուած դործը .

— «Որդեակներ , քիչ մը ատեն ձեզի հետ եմ , զիս պիտի փնտոէք . . . : Նոր պատուիրան մը կուտամ ձեզի որ մէկզմէկ սիրէք , ինչու որ ես ձեզ սիրեցի . . . : Սիրտերնիդ թող չխուզի , Աստուծոյ հաւատացէք , ինծի ալ հաւատացէք . . . (Յովհ. ԺԳ. 33. ԺԳ. 2) , Դուք հիմակուրնէ մաքուր էք ա՛ն խօսքով , զոր ձեզի խօսեր եմ : Իմ մէջս կեցէք , և ես ձեր մէջը . . . : Այս բաները ձեզի խօսեցայ , որ իմ ուրախութիւնս ձեր մէջը մնայ , ու ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ . . . : Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ , որ մէկը իր կեանքը բարեկամներուն համար դնէ : Դուք իմ բարեկամներս էք , թէ որ ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ . . . : Թէ որ աշխարհ ձեզ կ'ատէ , զիտցէք որ ձեզմէ առաջ զիս ատեց , Թէ որ աշխարհէս եղած ըլլայիք , աշխարհ իրենները կը սիրէր , բայց որովհետեւ աշխարհէ չէք , հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի , անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ . . . : Թէ որ զիս հալածեցին , ձեզ ալ պիտի հալածեն . . . : Ճշմարիտ , ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , դուք պիտի լաք ու պիտի ողբաք , բայց աշխարհ պիտի ուրախանայ . դուք պիտի տրտմիք , սակայն ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխուի : Կնիկ մը երբոր ծնելու վրայ է , տրտմութիւն կ'ունենայ , ինչու որ իր ժամը հասած է , բայց երբոր տղան ծնի , ա՛լ նեղութիւնը միտքը չբերեր ուրախու-

թեանն, որ աշխարհ մարդ մը ծնաւ : Եւ յիրաւի դուք հիմա տրտմութիւն ունիք, բայց ես ձեզ նորէն պիտի տեսնեմ, և ձեր սիրտերը ուրախ պիտի ըլլան, և ձեր ուրախութիւնը մէկը ձեզմէ պիտի չհանէ . . . : Հիմա կը հաւատասք . . . ահա ժամանակ պիտի դայ, ու եկա՛ծ ալ է, որ ցիրուցան պիտի ըլլաք . ամեն մէկը ի՛ր տեղը, ու զիս մինակ պիտի թողուք, բայց ես մինակ չեմ, ինչու որ Հայրը իմ հետս է : Այս բաները ձեզի խօսեցայ, որ ինձմով խաղաղութիւն ունենաք . աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջասիրտ եղիք, ես աշխարհի յաղթեցի» (Յովհ. ԺԵ ԺԶ) :

Վիշաք կը հեծէր ամենուն սիրտէն : Յիսուսի մխիթարութեան և քաջալերանքի բառերը վախերու, ընկճումի և կսկիծի յորդ հեղեղով մը ջրվէժած էին հոգիներէ ներս : Տարակոյսները հետզհետէ կը լուսաբանուէին (Յովհ. ԺԳ. 36—38. ԺԳ. 5—31) : Տիրող բարեպաշտիկ ու սուրբ տրտմութիւնը հոգեկան արիացումի և կորովի նոր երակ մը կը բանար անոնց սիրտերուն խորը, ուր կեանքը կը վերածնէր վերնատան տրտաթախիծ հալումաշէն ընդգրկուած : Յիսուս իր աշակերտներուն գրեթէ օրհասային այդ ճառագայթումէն փղձկած, ու երազուն աչքերը դէպ ի երկինք յառած, աղօթեց ձայնով մը, զոր միայն ինքը կրցաւ արտաբերել, և որուն վէտվէտումը չպիտի դադրի դարերուն մէջ թրթռալէն .

— «Հայր, ժամանակը հասեր է, փառաւորէ քու որդիդ, որ Քու որդիդ ալ Քեզ փառաւորէ . . . : Ես Քեզ երկրի վրայ փառաւորեցի, ան գործը


զոր ինձի տուիր ընելու, լմնցուցի : Եւ հիմա, ո՛վ Հայր, փառաւորէ՛ զիս Քու քովդ ան փառքովը, զոր աշխարհի՛ ըլլալէս առաջ քովդ ունէի : Քու անուկոյ յայտնի ըրէ այն մարդերուն, զոր աշխարհէն ինձի տուիր . . . : Բանի որ աշխարհի մէջ անոնց հետ էի, ես կը պահէի զանոնք քու անունովդ, զոր ինձի տուիր . . . : Ալ հիմա Քեզի կուգամ, ու աշխարհի մէջ այս բաները կը խօսիմ, որ իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ ունենան : Ես Քու խօսքդ անոնց տուի, ու աշխարհ զանոնք ատեց . . . : Չեմ աղաչեր որ զանոնք աշխարհէն վերջնես, հապա որ զանոնք չարէն պահես . . . : Անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որ իրենք ալ ճշմարտութիւնով նրբացած ըլլան : Բայց չէ թէ մինակ անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը լսողը ինձի հաւատացողներուն համար ալ, որ ամենն ալ մէկ ըլլան, ինչպէս որ Քուն . ո՛վ Հայր, իմ մէջս, և ես Քու մէջդ, որ անոնք ալ մեր մէջը մէկ ըլլան . . . : Եւ ան փառքը որ Քուն ինձի տուիր, ես անոնց տուի, որ մէկ ըլլան, ինչպէս որ մենք մէկ ենք . . . : Ո՛վ արդար Հայր, աշխարհս Քեզ չճանչցաւ, բայց ես Քեզ ճանչցայ, և անոնք ճանչցան թէ Քուն զիս զրկեցիր : Եւ Քու անուկոյ անոնց ճանչցուի, ու պիտի ճանչցնեմ, որ ան սէրը, որով Քուն զիս սիրեցիր, անոնց մէջ ըլլայ, և ես ալ անոնց մէջը» (Յովհ. ԺԷ) :

«Յիսուս ինքզինքը կը բացատրէ իբրև բացարձակ տէր, իբրև Աստուած : Իր մէջ մարդը՝ ծածկուած Աստուածը կը թարգմանէ միայն : Երբ իր մարդկութիւնը կը գործէ, երբ Մարդուն Որդին

կ'աղօթէ, կը տառապի և կ'անէանայ Հօրը կամօքին մէջ, իր գործերը անհուն արժէք մը ունին. Աստուծոյ հետ իր էութեանական միութիւնովը, իր աղօթքը ամենակարող է. իր տառապանքը ամեն ինչ կը քաւէ, իր զոհաբերութիւնը կը մաքրէ ամէն բան»:

«Յիսուսի այս աղօթքը աւելի համատարած է քան երկիրն ու աշխարհները, բարձրագոյն՝ բոլոր ժամանակներէն, մեծագոյն՝ քան տեսանելի երկինքը, դէպ ի ուր իր աչքերը կը բարձրացնէր. անհուն է և յաւիտենական՝ Աստուծոյ նման սրուն կ'ուղղուէր. սիրոյ նման, որ զանի կը ներշնչէր. խնդրուածքներուն նման՝ զոր կը բանաձեւէր. Աստուածային զօրութիւններուն նման՝ զոր Անի ի գործ կը դնէր»:

Այս վերջին սեղանը կը ծառայէ Յիսուսի համար իբրև նախօր մը, ո՛չ թէ ընկճումի ու մահուան, այլ վերագարծին դէպ ի հոն, ուրկէ աշխարհ եկած էր ժամանակի մը համար:



Թ.

Գ Ե Յ Ս Ե Մ Ա Ն Ի



ԳՒԳՏՈՍԷ փախուստէն ի վեր Չատկի «ալեղուն» այսքան տիտուր երգուած չէր տակաւին և վիշտը երբէ՛ք այսքան ներդաշնակօրէն չէր մասնակցած աղատագրութեան ուրախութիւններու սեղանին (Սղմ. ՃԺԳ. ՃԺԵ. ՃԺԶ.):

Այս սաղմոսերգութենէն անմիջապէս վերջ, տասն և մէկն ու Յիսուս զուրս ելան վերնատունէն (Յովհ. ԺԳ. 31) և ուղղուեցան դէպ ի Զրթենեաց լեռը (Ղուկ. ԻԲ. 39):

Վիշտի և անձկութեան տողանցութիւնն էր, որ կ'երկարէր այն լուռ գիշերին ծոցը, զոր Արեւելեան երկիրներու խորհրդաւորութիւնը կ'երկնէր մութ ու միանգամայն պայծառ, աղջամղջային ու միանգամայն աստղերով լեցուն:

Քաղաքի հարաւային դռներու մէկէն կը մեկնին : Կ'անցնին Ուփէլի զառիվայրը , պարտէզներն ու այգիները , յետոյ Կեդրոնի հեղեղատէն :

Կեդրոնի ձորը ուրիշ անգամներ կոչուած է Շաւէ կամ արքայից ձոր (Մննդ. ԺԴ. 5. 17) . հոս էր որ Արրահամ հանդիպեցաւ Մեղքիսեղեկին , ուրկէ օրհնութիւններ բուրած էին (Մննդ. ԺԵ. 18) : Ասկէ , բոկոսն ու վշտակրած Պաւլոս անցած էր , երբ դէպ ի անապատը կը փախչէր (Բ. Թագ. ԺԵ. 11—23) :

Երբեմն ասկէ կը հոսէր զեռակ մը , որ կը բղխէր քաղաքին հիւսիս արեւմուտքէն , և կը դառնար դէպ ի հարաւ : Կ'անցնէր Սելուամը , Ենոմի ձորը և Նեեմիի աղբիւրը , յետոյ հարաւ արեւելքէն նեղ ու գանալէժ կիրճի մը մէջէն կ'անցնէր Սարայի անապատը , Մեռեալ ձովը թափելու համար : Այդ Կեդրոնի ջուրերուն մէկ մասը կը բղխէր բուն իսկ տաճարին տակէն : Այս պարագան առիթ առաւ Եղեկիէլի զեղեցիկ փոխաբերութիւնով մը նկարելու աստուածային շնորհաց զեռը , որ աշխարհը պիտի նորոգէր (Եղեկ. ԽԷ. 1—12) :

«Աւելի տխուր և աւելի մեկուսացած տեղ մը չկայ , կ'ըսէ Հ. Տիտոն , քան այս նեղկուկ ձորը (Quadi) , իր մեռելական յիշատակարաններով , Արիստղոմի , Յովսափատի և Ջաքարիայի շիրիմներով և իր գերեզմաններովը , որոնք արեւելեան զառիթափը կը ծածկէին» :

«Յովսափատու հովիտ» ալ կոչուած է Կեդրոնի ձորը (Յովէլ. Գ. 2—12) :

Հեղեղատին դէպ ի խորը կը գտնուէր բուն Գեթսեմանիի պարտէզը , ձիթենիներու մանր ու

հաստ տերեւներով ու հովանիներով ազուցուած :

Յիսուս իրեններէն միայն երեքը հեան առած կը մանէ այն պարտէզը , որուն անունն էր Գեթսեմանի (Յովհ. ԺԸ. 1. Մտթ. ԻԶ. 36 , 37 . Մրկ. ԺԴ. 32 , 33) :

Յիսուս շատ անգամներ ծնրադրած էր հոս , այդ «լռամոփոփ ու տխուր , խիստ ու կրօնական» հովիտին մէջ (Յովհ. ԺԸ. 2) :

Պարտէզին մէջէն դիտող մը դէպ ի արեւմտեան կողմը պիտի տեսնէ տաճարին մեծ պարիսպները , նախնական շէնքերու գագաթները , և Անտոնիայի ցուրտ աշտարակը . դէպ ի աջ՝ Սկոպոս լեռը . ձախէն՝ Յովսափատու հովիտը իր շիրիմներով ու գերեզմաններով :

Գեթսեմանին Յիսուսի վերջին ազօթքովը միայն յաւերժացաւ :

* * *

— «Իմ անձ» մեռնելու չափ արտում է , հըսկեցէք ու խնձի հետ արթուն մնացէ՛ք» (Մտթ. ԻԶ. 38) :

Մահը այսքան անուշիորէն չէր պատկերազրուած մարդու մը հանդէպ :

Յիսուս իրեններէն քարնկէցի մը չափ բաժնուած , իր սիրտին մէջ կը զգար ահաւոր տեսարանները մատնութեան , լքումի , խարաղաններու , ապտակի , թուքի , ծաղրանքի , ծեծի ու նախասական մահին :

Կեանքը աւելի քաղցր բռներ կը թոթովէ ենթականերու ականջին , մանաւանդ իր վերջին պահուն , իր բաժանման մօտալուտ վայրկեանին : Ու Յիսուսի մէջ ապրող մարդը այդ մահուան առ-

ջեւ կը դողար հիմա . . . : Ինք որ դեռ ժամ մը առաջ իրենները կը սրտապնդէր, հիմա ինքը կը դողայ, կը վախնայ, մահուան կարապետող պաղ քրտինքներու մէջ ողողուած է ինքը, մարմինին տկարացումը ազդած է նոյն խակ իր հոգիին վրայ, որ հիմա սոսկումի եւ արհաւիրքի մէջէն կը դիտէր ապագայ դարերու արեւները : Ամենէն աւելի հիմա, իր մէջ զօրացած էր ապրելու տենչը, երբ ալ ինք պիտի բաժնուէր կեանքէն, իրեն համար սահմանուած անխուսափելի մահովը : Կեանքի ու մահուան յաւիտենական կոխն էր, զոր կը մղէր անիկա գիրկ գիրկի, իբրեւ մարդկութեան յաւիտենական գօտեմարտը :

Ներքին կոխը ահագին համեմատութիւններ կ'առնուր իր մէջ, կամքը երբեմն կը տկարանար, երբեմն կ'ընդլզէր իր Հօրը կամքին, մահուան հանդէպ իր անալլայութիւնը կը փշուռէր, կը խորտակուէր յանկարծ : Ո՞վ պիտի կարեկցէր իրեն, ո՞վ պիտի արխացնէր զինքը, ո՞վ իրմէն պիտի հեռացնէր նախատուած մահուան բաժակը : Ինք ուրիշները մխիթարած էր, ուրիշները զօրացուցած, ուրիշները կանգնեցուցած էր, ու հիմա ինքը կը կարօտէր այդ ամենուն : Մինակ, լքուած կը գտնէր ինքզինքը մահուան հանդէպ, որովհետեւ իր աշակերտները արթնութեան հսկում մը անգամ մերժած էին իրեն (Մտթ. ԻԶ. 40 . Մրկ. ԺԴ. 37 — 41 . Ղուկ. ԻԲ. 45, 46) :

Հոգիին յօժարութիւնը բաւական չէր եղած զինքը կանգուն պահելու ասի դաշտին մէջ, որ մաքառումի եւ յաղթութեան ասպարէզը բացած էր իրեն (Մտթ. ԻԶ. 41 . Մրկ. ԺԴ. 38) : Իր ոտքերը

կը կթոտէին հոգիի տխուր, յուսահատեցնող սարսուռներով ճիշդ այն պահուն, երբ յաղթութեան գործը պիտի աւարտէր . . . : Կարծես մարդկութիւնն է որ կը նահանջէ, կը տկարանայ, կ'իջնայ Յիսուսին հետ : Գեթսեմանիի զիշերը մեր ամենուս կեանքին տխուր հայելիին պէս կը բեկբեկի կարծես, եւ մեր հոգիներու տագնապնդներն են, որ կը փղձկեն Յիսուսի ալ հոգին, իր արիւն քրտինքովը լմուած տկար մարմինին մէջ :

Ալ սպառած էր զիմագրելու ուժը, գողացող ոտքերը կը հետաէին իր դէմ, անոր համար «Երեսի վրայ գետինը ինկաւ» (Մտթ. ԻԶ. 39) :

* * *

Իր յուզումներէն այրուած դէմքը երկու ձեռքերուն մէջ կը սեղմէր, զինքը մաշող վիշտերը խեղդելու համար, կարծես, եւ արմուկներովը կը յենուր քարի մը վրան : Մազերը՝ ցրքուն ու անխնամ, կը ծփային՝ իր ուսերէն կախ, ներշնչելու մագնիսացումէն եւ հովիտին հովերէն . . . : Իր ինքնութեան մէջ չէր ապրիր այլեւս, աչքերը՝ արցունքէն ուսած աչքերը, զիշերուան մութին մէջէն դէպ ի երկինքի աստղերը խորասուզուած, իր արթնցող, կենսասէր ՃՍին խուճապներուն մէջ տարորոշուած, ու կիրքերէն, սոսկումներէն ահաբեկած, նայեցաւ այդ կապոյտ եթերին վերեւը կորսուած հեռաւոր Անհունին, իր միակ մխիթարութեանը, իր Հօրը : Բայց անկէ ալ զինքը յուսադրող ցայտք մը չճաճանչեց բնաւ : Իր արթնցող մարմինէն թելադրուած հոգին ինչե՞ր երկնեց արդեօք . . . :

— «Մ'վ Հայր , թէ որ կարելի է , թող այս գաւաթը ինձմէն անցնի» (Մտթ. ԻԶ. 39) :

Մխթարիչ ձայն մը չպատասխանեց վերէն . . . :

Եւ ալ աւելի կը դողար մութէն ու մահէն , երբ կը տեսնէր մանաւանդ թէ տրտմութիւնը իրեններուն վրայ քունի դալուկը սփռած էր :

— «Այսպէս մէկ ժամ մըն ալ չկրցաք ինձի հետ արթուն կենալ : Արթուն կեցէք , ու աղօթք ըրէք , որ փորձութեան մէջ չիյնաք . հոյիս յօժար է , բայց մարմինը սկար» (Մտթ. ԻԶ. 40 , 41 . Ղուկ. ԻԲ. 46) :

Այդ պահուն Յիսուսի համար ամենէն շօշափելի իրականութիւնն էր այդ աղօթքը , այդ արթնութիւնը , որով պիտի կրնար փորձութեան յաղթելու Բայց իրեններէն ա'լ բնաւ յոյս չկար . . . :

Պէտք էր որ ինքը միայնակ հսկէր , պէտք էր մինակ աղօթէր : Կը խոկար այն անպիտակից խորհուրդներով՝ որոնք ամբիժ ու սուբբ աղօթքէն խնկաւէտուած , հաղարաւոր խաչատու մներ կը ձեւացնեն տագնապած , շուարած մարդուն մէջ :

Հիմա արիւնն էր , որ կը հոսէր քրտինքին հետ : Ողորմուկ ճիչ մը պատուեց մութին վարագոյրը , ուրկէ հովիտը կը դողար :

Հոգիին պաղատանքը լսուած էր վերէն . . . :

Հիմա ա'լ մինակ չէր ինքը : Երկինքի գթութիւնը հրեշտակ մը զրկած էր իրեն զօրացնելու համար զինքը , որ «սաստիկ նեղութեան մէջ ըլլալով աւելի ջերմեռանդութեամբ կ'աղօթէր» (Ղուկ. ԻԲ. 43) :

Սփոփարար այդ տեսիլը , հրեշտակային այդ երևումը , որքան ուժով ջնցեց զինքը . . . :

Մարմինին տկարութիւնը դարմանուած էր այն մեծ յօժարութիւնով , որ Հոգիէն կը բղխէր : Մահուան բաժակը երթալով կը մօտիկնար իր շրթնեբուն , Գողգոթան , Սաչը իրեն կը հպէին հիմա , ու ինք այդ բաժակի մերձեցումէն , մահուան այդ հպումէն հաճոյք միայն կը զգար . . . :

Մաքառումէն վերջ հրաժարումը անկարելի եղած էր :

Վերջին հառաչանք մը պիտի Գեթսեմանիի կշտին ցցուող շիրիմներն ու գերեզմանները , և ձայնը անդամ մըն ալ թնդաց հեղեղաափին խորէն .

— «Հայր , քանի որ անկարելի է որ այս գաւաթը ինձմէն անցնի , առանց անկէ խմելու , թո'ղ ուրեմն քու կամքդ բլլայ» (Մտթ. ԻԶ. 42 . Ղուկ. ԻԲ. 42 . Մրկ. ԺԴ. 36) :

Ա'լ դադրած էր մաքատումը :

Դարձաւ և իրեններուն վրայ սեւեռեց իր անքուն՝ յօգնած նայուածքը և զանոնք արթնութեան հրաւիրեց :

Հիմա աչքերնուդ առջև բերէք Գեթսեմանին ու Եգեմը , երկու պարտէզները , որոնց մէջ զործուեցան Մարդկութեան Անկումին և Փրկագործութեան իրողութիւնները :


«Եգեմի մէջն էր որ տեղի ունեցաւ անկումը , պատճառ՝ մեր բոլոր տառապանքին : Մեղքը խաւարի գործ մըն է . Յիսուս անցաւ խաւարին մէջէն , առաջին Ադամին գործը դարմանելու համար : Իրեն պէս մարդ , բայց առանց մեղքի , Յիսուս Գրիստոս իր վրայ կ'առնու մարդկութեան կորսուած դատը : Առաջին Ադամին հպարտ բարձրացումին հանդէպ կը ցուցադրէ կամաւոր խոնար-

հուժիւն մը : Առաջին մարդը անէձքներով բեռնաւորեց Եդեմին գետինը , երկրորդը՝ իր արցունքներով և իր արիւնոտ քրտինքով Գեթսեմանին ցօղելով , աչգ գետինէն Աստուծոյ պարտէզ մը շինեց» :

* * *

«Անա հասաւ ժամը , և Մարգուն Որդին մեղաւորներուն ձեռքը պիտի մատնուի : Ելէ՛ք ասկէ երթանք , ահա մօտեցաւ անիկա , որ զիս պիտի մատնէ» (Մատթ. ԻԶ. 45 , 46 . Մրկ. ԺԴ. 41 , 42) :

Գեթսեմանին իրենց ետեւ ձգած էին ալ , երբ Յուդայի մատնիչ համբոյրը՝ Յիսուսի երեսին դրօշմուած , աշխարհի տարեգրութեան տուաւ չարչարանքի մը ու մահուան մը սրտառուչ ու միանգամայն աստուածային էջերը :



Ժ.

ԴԱՏՆ ՈՒ ՎՃԻՌԸ



ՈՒԴԱ իր գործը աւարտած էր : Իր մօրը գուրգուրանքին աւարկան , անոր բարեպաշտիկ զգացումներով տաքցած մանուկը , իր վրայ բերած էր անշուշտ յատկութիւններ , որոնք զինքը տասներկու քներէն մին շինած էին : Իայց կ'երեւի թէ ինք աշխարհիկ հայեցողութիւններով միայն աշակերտած էր Յիսուսի : Տեսեսագէտ ըլլալուն գանձանակը իրեն յանձնուած էր (Յովհ. ԺԳ. 29) :

Հաշիւներու վրայ հաստատուած կեանք մը չի կրնար իր հաւասարակչութիւնը պահպանել մին-

չեւ վերջը, բարոյական տեսակէտով: «Յուդա անտեսագէտ մըն էր, ազահ մը եղաւ. ճարտար հաշուագէտ մըն էր, զրական մարդ մը եղաւ, այսինքն մարդ մը, որ անկարող է հասկնալու զոհողութիւնը. մտեւանդութիւնը, և վեհանձն անխոհեմութիւնները: Թողուց որ զրամի սէրով այլասերի իր անտեսագէտ միտքը, որ այդ սէրը մեծնայ, և ճշմարիտ տանջանք մը ըլլայ իրեն: Այնքան ուժգին եղաւ այդ տանջանքը, որ զինքը մղեց իւրացնելու իրեն յանձնուած զրամին մէկ մասը, և ծախելու իր Տէրը»:

Յուդա մարմնացումն է սոսկ հաշիւներու վրայ հիմնուած կեանքին, որ տարբեր պտուղ չի կրնար բերել:

Բայց առանց արդիւնքի չէր որ անցաւ Յուդայի հանդէպ Յիսուսի բարեկամական ընդունելութիւնը (Մտթ. ԻԶ. 50): Անոր անուշ նայուածքը, մասնութեան համրոյրին փոխարէն անոր տուած «ընկեր»ական համրոյրը, քաղցր ու աստուածային զուարթութիւնը, այդ զիշերի տագնապին մէջ անոր ցոյց տուած հողի անխռով արտայայտութիւնը միտեցաւ Յուդայի զիտակցութեան խորը, ուր նիւթին մարդը փշուրեցաւ: Եւ արթնցող խղճմտանքը քաւութեան ամենէն վատթարագունին — անձնասպանութեան — առաջնորդեց զինքը (Մտթ. ԻԷ. 3 5):

Զերբակալուեցաւ Յիսուս ջահերով, բիրերով ու սուրերով իր վրայ եկող զինուորներէն ու քահանայապետին մարդերէն: Ամբոխը ասկի ու վրայ ըրած էր քաղաքին զիշերային խաղաղութիւնը: Ամեն ոք դէպ ի քահանայապետին տունը կը վա-

զէր «ժողովուրդին մարգարէն» տեսնելու: Աչակերտները լքած էին զինքը, բայց ի երկուքէն: Պետրոս, սակայն, որ Յիսուսի ուխտած էր իր կեանքը մինչեւ ի մահ, հիմա ուրացումներ կունենար գաւիթին մէջ (Ղուկ. ԻԲ. 55—60 և այլն): Հաւատասին՝ Յիսուս «դարձաւ ու Պետրոսին նայեցաւ»: Աստուածային նայուածք...: Պետրոս չկրցաւ իր արցունքը զսպել այդ նայուածքին առջեւ, ուրկէ յանդիմանութիւն, կարեկցութիւն և ներում կը բուրէին (Ղուկ. ԻԲ. 61. 62):

Գիշերը քահանայապետական տեսնը կազմուած էր, երբ Յիսուս բերուեցաւ: Բոլոր անդամները կ'ուզէին մէկ վայրկեան առաջ «վտանգաւոր մարգարէին» հաշիւը կարգադրել: «Ծիրանի, մանիշագոյն և դեղին պատմութեանու զոհարարներն ու քահանաները, հանդիսաւորապէս նստած էին կիսաբոլոր: Անոնց մէջ բարձրագոյն աթուռի մը վրայ նստած է Կայիափա, մեծ քահանայապետը, զլուխը միկպանով ծածկած: Կիսաբոլորին իւրաքանչիւրին ծայրը, սեղանակիր երկու փոքր բեմերու վրայ կը նստէին, երկու զիւանապետներ, մին ազատագրումի, և միւսը դատապարտութեան համար — advocatus Dei, advocatus Diaboli; Յիսուս՝ հանդարտ՝ կանգուն կը կենայ մէջտեղը: Արդարութեան պաշտօնեաներ, զինուած՝ փոկերով ու չուաններով, զինքը կը շրջապատեն, մերկաբազուկ, դատակնին իրենց ազդրին վրայ, և խոժոռ նայուածքով: Ընդդէմ վկաներ միայն կան, ո՛չ մէկ պաշտպան: Քահանայապետը՝ գերագոյն դատաւորը իր գլխաւոր ամբաստանիչն է»:

Այսպէս կազմակերպուած ժողովին մէջ ոտքի կ'ելլէ Քահանայապետը , և Յիսուսը իրրեւ մոլորեցուցիչ կ'ամբաստանէ :

Վճիռը կանխաւ տրուած էր արդէն : Կայրափա անգիտակցարար արտասանած էր Քրիստոնէութեան հաւատամքը .

— «Աղէկ է որ մէկ մարդ մը կորսուի բոլոր ժողովուրդին համար» (Յովհ. ԺԸ. 14) :

Հիմա պարզապէս ձեւակերպութիւն մըն էր կատարուելիքը :

Իրենք ալ գիտէին կանխաւ թէ տրուելիքները սուտ վկայութիւններ էին , և թէ վկայութիւնները համաձայն չէին իրարու (Մրկ. ԺԳ. 56. 59) : Բայց ի՞նչ փոյթ իրենց այս պարագաները :

Հարցաքննութիւնը սկսաւ :

Վկաներէն մին կ'ըսէր .

— «Մենք լսեցինք ատկէ, որ կ'ըսէր . Ես առ ձեռագործ տաճարը պիտի քակեմ , և երեք օրուան մէջ ուրիշ մը պիտի շինեմ առանց ձեռագործի» (Մրկ. ԺԳ. 58) :

Քահանայապետը ոտքի ելլելով ըսաւ Յիսուսին .

— «Պատասխան մը չե՞ս տար» (Մրկ. ԺԳ. 60) :

Յիսուս լուռ կը մնար եղած ամբաստանութիւններուն հանդէպ :

Հարցաքննութեան առանցքը փոխուեցաւ : Տաճարի ամբաստանութիւնը բան մը չէր հաստատեր :

— «Ի՞նչ են քու վարդապետութիւններդ :

— «Ես աշխարհի յայտնի խօսեցայ . ես ամեն ատեն սովորեցուցի ժողովարաններու և տաճարին մէջ , ուր բոլոր հրեաները կը ժողվուին ու ծած-

կարար բան մը չխօսեցայ : Ինչո՞ւ ինծի կը հարցունես , լսողներուն հարցուր թէ ի՞նչ խօսեցայ» :

Յիսուսի այս պատասխանը շատ հեշտ չհնչեց կեղծաւորութիւններէ և շողքորթութիւններէ հաճոյք զգացող ականջներու :

Ապտակ մը իջաւ Յիսուսի երեսին :

Յիսուս միւս երեսը չդարձուց (Մտթ. Ե. 39) , ընդհակառակն ըսաւ .

— «Թէ որ չար խօսեցայ , վկայէ՛ չարին համար , հապա թէ որ բարի խօսեցայ , ինչո՞ւ կը զարնես ինծի» (Յովհ. ԺԸ. 19—23) :

Հարցաքննութիւնը շարունակուեցաւ .

— «Թէ որ Քրիստոսը դուն ես , ըսէ մեզի :

— «Թէ որ ձեզի ըսեմ , պիտի չհաւատաք : Եւ թէ որ ձեզի բան մը հարցնեմ ինծի պատասխան պիտի չտաք . ոչ ալ զիս պիտի արձակէք» (Ղուկ. ԻԲ. 66—68) :

— «Ըսէ , դո՞ւն ես Քրիստոսը , Օրհնեալ Աստուծոյ Որդին» (Մրկ. ԺԳ. 61) :

— «Ի՞նչ կ'ըսէք թէ ես եմ» . և իրաւի՞ «ես եմ , ու պիտի տեսնէք Մարդուն Որդին Զօրութեան աջ կողմը նստած , ու երկինքի ամպերովը եկած» (Մրկ. ԺԳ. 62. Ղուկ ԻԲ. 70) :

Ժողովական դատաւորները այս պատասխանին կը սպասէին անհամբեր . . . քահանայապետը , իբր թէ կրօնական սրբապղծութենէ մը զարհուրած , իր պատմութեանը կը պատուէ .

— «Ատոր հայնյութիւնը լսեցիք , ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ» (Մրկ. ԺԳ. 63. 64) :

Վճիռը կանխորոշուած էր ամենուն կողմէն :

— «Մահապարտ է» , պոռագին ամենքն ալ :

Դատապարտուած մը հանրութեան քմահաճոյքին առարկան էր, գոնէ այն ատեն : Վայրագ սպասաւորներու ձեռք անմեղ, անվնաս որս մը կար, մահուան դատապարտուած, թուք, ծեծ իրարու կը յաջորդէն : Ծաղրը ամեն կողմէն կը խուժէ :

Այդ կատաղի անարգանքներուն հանդէպ Յիսուսի տեղումնած՝ վսեմ գէմքը անայլայլ կը մնար : «Կըսուի թէ արձաններ կան, որոնք կ'արտասուեն, կան նաեւ զոհերու անարցունք վիշտեր և լուս աղօթքներ, որոնք կը սարսափեցնեն դահլիճները և կը հետապնդեն անոնց կեանքին մնացորդ օրերը» :

Կրօնքի նախապաշարուածը, և քանանայապետական ընչաքաղց զայրոյթը աւարտած էին իրենց գործը :

* * *

Յիսուս Պիղատոսին պալատը տարուեցաւ :

Պիղատոս պալատի սանդուխներուն վրայ կեցաւ, իսկ ժողովուրդը՝ վարը, որպէս զի չպղծուի Զատիկը (Յովհ. ԺԸ. 28. 29) :

Դատաստանը կը շարունակուի :

Հիմա, սակայն, տեսարանը փոխուած է : Երեք ուժեր իրարու մօտ եկած են հիմա. Պիղատոսով՝ Հռովմէական Կայսրութիւնը. ժողովուրդով՝ անձկամիտ Յուդայականութիւնը, և Յիսուսով՝ Հոգիին տիեզերական կրօնքը :

Պիղատոս կրօնական վէճերով զբաղելու ո՛չ միտք ունէր, և ո՛չ ժամանակ : Սկեպտիկ մըն էր ինքը ամեն դաւանութիւններու հանդէպ : Բայց

ալ անհնար էր գործի չձեռնարկել, երբ վարէն գերագրգռուած ժողովուրդը կը պռար :

— «Յթէ չարագործ մը չըլլար, քեզի չէինք մատնել գանիկա (Յովհ. ԺԸ. 30) : Ասիկա մեր ազգը կը մոլորցնէր, և Կայսեր հարկ տալէն կ'արգելէր, և իրեն համար կ'ըսէր թէ՛ ինքը Բրիտանու թագաւոր է» (Ղուկ. ԻԳ. 2) :

Պիղատոս Յիսուսի հետ պալատը կը մտնէ :

Դատապարտուածի մը համար «Սրբութեան օրէնք» գոյութիւն չունի : Հարցաքննութեան միջոցին վկայ և ունկնդիր չկան ընտել : Աւելի ներքին խօսակցութիւն մըն է տեղի ունեցածը, քան թէ հանդիսաւոր դատաստան :

Ժողովուրդը պուռացած էր թէ այդ մարդը «Թագաւոր եմ» ըսած էր :

Պիղատոս այդ ձայնէն միայն դողացած էր պահ մը :

— «Դ՞ո՞ւն ես Հրէից թագաւորը :

— «Ատիկա դուն քեզմէն կ'ըսես, թէ ինձի համար ուրիշները քեզի ըսին» :

Բայց Յիսուս գիտէր, թէ ժողովուրդը ինքը իրեւ այդպէս ամբաստանած էր իշխանութեան առջեւ :

— «Միթէ ես հրեանց եմ. քու ազգը և քահանայապետները քեզ ինձի մատնեցին :

— «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ. թէ որ այս աշխարհէն ըլլար իմ թագաւորութիւնս, իմ սպասաւորներս կը կուռէին որ ես Հրէից ձեռքը չմատնուիմ :

— «Ուրեմն դուն թագաւոր մըն ես :

— «Դ՞ո՞ւն կ'ըսես. որովհետեւ թագաւոր եմ.

ես այս բանին համար ծնած եմ, և անոր համար աշխարհք եկած որ ճշմարտութեան համար վկայեմ: Ան ամենը որ ճշմարտութենէն է, իմ ձայնիս ականջ կը դնէ» (Յովհ. ԺԸ. 33—38):

«Պիղատոս չհասկնար Յիսուսի հոգեկան թագաւորութեան այս հաստատութիւնը, ինչպէս Կայիափա չէր հասկցած իր կրօնական Կտակարանը: «Ի՞նչ է ճշմարտութիւնը» ըսաւ, ուսերը թօթուելով, և հոռովմէական սկեպտիկ ասպետին այս պատասխանը ի վեր կը հանէ այն ատենի հեթանոս ընկերութեան և իրեն նմաններուն հոգեկան վիճակը»:

Պիղատոս ինտասակար ընթացք մը չգտնել Յիսուսի մէջ, ու նորէն դուրս ելլելով պալատէն.

— «Ես յանցանք մը չեմ գտնել ասոր վրայ» ըսաւ ժողովուրդին:

Յիսուսի փրկութիւնը կ'ուզէր ձեռք բերել Պիղատոս: Աւիթը ջանաց շահագործել.

— «Բայց սովորութիւն ունիք, որ մարդ մը արձակեմ ձեզ Զատիկիս. հիմա կ'ուզէք որ Հրէից թագաւորը արձակեմ ձեզի»:

— «Բարաբրան, Բարաբրան» աղաղակեց ամբոխը:

Եւ Բարաբրա աւաղակ մըն էր (Յովհ. ԺԸ. 40): Հաճոյքի, անիրաւութեան, կիրքի, շահու և կոյր վրէժխնդրութեան ընտրութիւն մըն էր կատարուածը:

* * *

Յիսուս կերպարանափոխուած էր հիմա: Իրեն տրուած ծեծէ մը վերջ, փուշէ պսակ մը

դրուած էր անոր գլուխը, և արքայական կեղծ ծիրանի մը կը շողար անոր անկար, սպիտակ պատմուճանին վրայ: Զինուորներուն ծաղրածութիւնը իր մէջ «Հրէից թագաւորը» կ'ողջունէր (Յովհ. ԺԹ. 1—3):

— «Ահա անիկա դուրս կը բերեմ, ըսաւ Պիղատոս, որ գիտնաք, թէ ես անոր վրայ յանցանք մը չեմ գտնել»:

«Ա.Հ.Ս. ԱՅՆ ՄԱՐԴԸ»:

Քահանաներն ու ժողովուրդը պահ մը վախցան, թէ մի գուցէ որսը փախչի իրենց ձեռքէն:

Պիղատոս կը յամառէր Յիսուսի անմեղութեան իր համոզումին վրայ: «Անիկա յոգնած էր անգութ ըլլալէն, անիկա իր կեանքին մէջ այնքան արիւններու հոսիլը տեսած էր, այնչափ ապրտամբներ տանջանքի մատնած էր, ու անտարբերութեամբ մտիկ ըրած էր ա՛յնքան հեծեծանքներու և անէծքներու: Բայց Գալիլիացի Մարգարէին համր ու ստոյիկեան տառապանքը՝ ծիրանի վերարկուին և փուշէ պսակին տակ, զինքը անծանօթ սարսուռով մը ցնցած էր: Բիրտ Հոռովմայեցին յուզուած էր գրեթէ»:

Պիղատոսին մէջ խլրատող յուզումները մարեւրու և անոնց հակազդելու համար խուժանին բողոքող ուժը պէտք էր:

— «Խա՛չը հանէ, խա՛չը հանէ զանիկա . . . »

— «Դուք խաչեցէք զանի, ես ասոր վրայ յանցանք չեմ գտնել»:

— «Ինքզինքը Աստուծոյ որդի ըրաւ» կրկնեց ձայնը:

Բայց կեսար ալ իբրև Աստուած և իբրև աստուածներու որդի հռչակուած էր . . . :

Նոր ամբաստանութիւն , ուրկէ Պիղատոս նուրէն սարսուաց :

Ու նոր հարցաքննութիւն . . .

— «Ուսկից ես դուն» :

Յիսուս պատասխան չտուաւ :

— «Ինծի հետ չե՞ս խօսիր . չե՞ս գիտեր որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչելու կամ քեզ արձակելու :

— «Դուն իմ վրաս մէկ իշխանութիւն մըն ալ չէիր ունենար , թէ որ քեզի վերէն տրուած չըլար , անոր համար ան որ զիս քեզի մասնեց՝ անոր մեղքը աւելի մեծ է» :

Պիղատոսի յուզումը կարեկցութեան փոխուած էր : Յիսուսի անմեղութեան համոզումը կը խօսէր իր մէջ : Եւ իր կնոջ երազը զինքը այդ գաղափարին կապած էր ընդ միշտ (Մտթ. Իէ. 19) :

Ժողովուրդը — «Թէ որ ատիկա արձակես , կայսեր բարեկամը չես . ով որ ինքզինքը թագաւոր կ'անուանէ , անիկա կայսեր հակառակ կը խօսի» կը պոռար վարէն :

Մարդկութիւնը այսպէս կը խարէ Արդարութիւնը :

Ա՛լ փրկութեան յոյս չկար : Ժողովուրդեան զայրոյթը կը շատնար հետզհետէ . կոյր նախանձը կը գոռար (Մտթ. Իէ. 18. 24) :

Կապալաթայի վրայնստած Պիղատոս , հանդիսաւորապէս լուաց իր ձեռքերը . . . Արդարին արիւնէն :

— «Ես անպարտ եմ աս Արդարին արիւնէն , դո՛ւք մտածեցէք :

— «Ատոր արիւնը մեր վրայ և մեր որդիներուն վրայ թող ըլլայ» , կը պոռար ժողովուրդը , երբ Բարսարայի շղթաները քակուեցան (Մտթ. Իէ. 26. Մրկ. ԺԵ. 15 . Ղուկ. ԻԳ. 25) :

Պիղատոս Յիսուսի խաչելութեան վճիռը ստորագրեց (Ղուկ. ԻԳ. 24) :

«Այսպէս իր հրապարակային կեանքէն վերջ , Յիսուս կը գտնուէր աշխարհի տիրոջ հանդէպ , զոր անուղղակի հարուածած էր , իբր պաղտնի հակառակորդ , իր ամբողջ կեանքին մէջ , կեսարի ստուերը զինքը խաչին կ'առաջնորդէ : Իրերու խորին տրամաբանութիւն . . . Հրեանե՛րը մասնեցին զինքը , բայց զինքը հոովմէական մականը կը սպաննէ : Անի կը սպաննուի իր մարմինը , բայց ինքն է , փասաւորուած Քրիստոսն է . որ իր մարտիրոսութիւնով միանգամ ընդ միշտ կետարէն պլեաի վերցնէ յսփշտակուած լուսապսակը , աստուածային աստուածացումը» :

* * *

Գոհացած խուժանը դէպ ի Գողգոթա կը դիմէ : Հրեաները խաչի պատիժ չունէին , կը քարկոծէին միայն :

Սաչի պատիժը ի գործ կը դրուէր Եգիպտոսի , Պարսկաստանի , Փիւնիկիէի , Կարթեղոսի , Յունաստանի և Հսովմի կողմէն (Ծննդ. Խ. 19. Եսթ. է. 19 և այլն) :

Սաչի պատիժը գերիներու և մեծ ոճրագործներու համար սահմանուած էր : Պետութեան բոլոր գաւառներուն և Հրէաստանի մէջ ի գործ կը դրուէր այդ պատիժը , երբ դատաւորներն ու կուսակալները պէտք տեսնէին :

Պատիժներուն ամենէն նախատականը, սոսկալին և անարգն էր խաչի պատիժը :

Յիսուս այդ պատիժով դատապարտուեցաւ . . . :

* * *

Երեք խաչեր կը տարուէին բազմութեան առջեւէն :

Երկուքը աւազակներուն էին :

Յիսուսի լուրջ հանդարտութիւնը, ներքին երկնահայեցութիւնը, կրած նախատինքն ու չարչարանքները յոգնեցուցած ու մահամերձ շինած էին զինք :

— Մի գուցէ դեռ կառափնատը չհասած խաչափայտին ծանրութեան տակ մեռնի, կ'ըսէր ամբողջ :

Անոր համար Սիմօն Կլերենացին պահակ բռնուեցաւ :

Երուսաղէմ տակն ու վրայ եղած էր :

Ոմանց դժոխային ծիծաղը, քահանաներուն լպլիք ժպիտները, անիրաւութեան յաղթանակը խառնիխառն իրարու մօտ բերած էին գաղթական ժողովուրդներու բազմութիւն մը :

Զատիկը թերեւս ասկէ աւելի զուարթ տօնած չէին քահանայապետները . . . :

Կիներ, իրենց ծծկան մանուկները գրկած, պատուհաններէն ու դուռներէն կը դիտէին այս չարաչուք թափորը : Յիսուսի հանդարտ ու մեղաւազ զգացումը՝ իր վարսերուն տակէն ճառագայթուած, արգահատանքի լացեր կը խլէր կանացի աչքերէ :

Յիսուսի մայրն ալ կուլար ողբաձայն . . . :

Հառաչանքը կը սղոցէր խօլ ծիծաղները, երբ Յիսուս դարձաւ իրեն համար լացող կիներուն, և ըսաւ .

— «Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ, մի՛ լաք իմ վրաս, հապա ձեր անձերուն վրայ և ձեր զաւակներուն վրայ լացէք : Ինչու որ անա օրեր կուգան որոնց մէջ պիտի ըսեն, երանի ամուլներուն և այն որովայններուն որ չճնան, և ծիծերուն որ կաթ չտուին : Ան ատենը պիտի սկսին ըսել լեռներուն, մեր վրայ ինկէ՛ք, և բլուրներուն՝ մեզ ծածկեցէ՛ք : Վասնզի թէ որ դալար փայտին ասանկ կ'ընեն, հապա ի՞նչ պիտի ըլլայ չորին (Ղուկ. ԻԳ. 28—31) :

Մեծ հոգիները ուրիշներուն ցաւերը կուլան, նոյն իսկ իրենց տառապանքին, իրենց օրհասին մէջ : Յիսուս և Ստեփաննոս այդպէս ըրին (Գործք. է. 58. 59) :

Յիսուս այս բառերով Քրիստոսամարտ աշխարհի պատկերը կը գծէր :

Ճամբան, ուրկէ թափորը Գողգոթա առաջնորդուեցաւ, այսօր Երուսաղէմի քրիստոնեաներէն կը կոչուի «Վշտալիւր ճամբան» : Կ'անցնի քաղաքին վարի մասէն կամ Ակրայէն, կը կտրէ այն ճամբան, զոր Յովսեփոս Տիրոպէտնի հովիտ կ'անուանէ, և որ Ակրան կը բաժնէ Գարէբէն :

Գողգոթա կը հասնին :

«Հիմա կը գտնուինք լերկ ու մարդկային ոսկորներ ցանցնուած բարձրութեան մը վրայ, որ Երուսաղէմի կը նայի և որ Գիլգալ Գողգոթա կամ Կառափնատեղի անունը կը կրէ . չարաչուք անպատ, երկար դարերէ ի վեր սոսկալի տանջանքներու նուիրուած : Լերկ լեռը ծառ չունի բնաւ .

կախազաններ միայն կը բուսցնէ : Հո՛ս էր որ Աղեքսանդր Հաննէ , Հրէից արքան իր կիներուն հետ հանդիսատես եղաւ հարիւրաւոր բանտարկեալներու մահապատիժին գործադրութեան . հո՛ս էր որ Վարոս երկու հազար ըմբոստներ խաչել տուաւ . հո՛ս է որ մարգարէներէն կանխագուշակուած հեղահամբայր Մեսիան պիտի կրէ իր սոսկալի տանջանքը» :

Գերագոյն վայրկեանը հասած էր Յիսուսին համար : Իր փորձութեան խորհրդանշանը—խաչը— իր մարմինին գամուած էր :

Ու աշխարհի մեղքն ալ գամուած էր Յիսուսի խաչափայտին :

Որքան ծանրութիւն . . . :

Թափորին հետ քալող Բարաբրա վեր առաւ իր աչքերը որոնք երկար տարիներէ ի վեր լոյսի կարօտը կը քաշէին , ու երեք խաչերուն առջեւ սարսուաց :

Երկու աւազակները իր բարեկամները , ու թերեւս իր ընկերներն էին :

Սորհեցաւ պահ մը , իր գիտակցութիւնը կորսընցնող մարդու մը պէս :

Ինքը , Բարաբրա , աւազակը , ոճրագործը , մահապարտը ազատ արձակուած . . . ու Յիսուս , Նազովրեցին , Արդարը , իր տեղը , իր ընկերներուն մէջտեղը իրաչին գամուած . . . :

Ամենէն մեծ ոճրագործը չպիտի կրնար այդ խաչին նայիլ , առանց հոգի բզքտող վրդովանք մը , առանց խղճմտանքի քրտինք մը թափելու :

Բարաբրա չուզեց հաւատալ իր տեսածներուն . . . :
Տարակուսելու պէտք չկար , սակայն , պաշ-

տօնական տախտակը խաչին վերեւէն խոշոր գիրերով կը լուսարանէր ամենուն միտքը .

ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՅԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ :

Վիշտն ու տառապանքը կը հոսէին խաչէն վար , աստուածային երակներէ կաթկթող արիւնին հետ : Կախազանը կը դիտէին երեք Մարիամները . Աստուածային Կոյսը , Կղէտլպայի կինը , և գեղազանց սիրողը , Մագդաղենացին . . . :

Ասոնց սէրը ամենէն աւելի չարատանջուած էր : Իրենք էին որ կը տուժէին ամենէն աւելի : Եւ շատ սիրողները շատ տառապելու դատապարտուեցան այն օրէն , երբ Յիսուսի խաչը բարձրացաւ Գողգոթայի վրայ :

Տակաւին իր տեսութիւնը չէր խաւարած . . . : Տեսաւ իրենները ու կարեկցութեան , գութի արցունքներ եկան խեղդուելի իր այրուող կոպերուն տակ , ուրկէ ճառագայթող նայուածքը աշխարհի թշուառութիւնները մխիթարած էր :

Որդիական սէրը , առանց մխիթարանքի չէր կրնար թողուլ իր մայրը :

— «Ո՛վ կին , ահա՛ քու որդիք» , ըսաւ Մարիամին , Յովհաննէսը ցուցնելով :

Յովհաննէս այնուհետեւ իրեն պիտի փոխանորդէր մօրը քով , անոր համար որ Յովհաննէսի սիրտը մասնակցած էր խաչի տառապանքին :

Մահուան տագնապը սկսաւ Յիսուսի համար . . .

Խաւարը ծանրացաւ իր աչքերուն ու բովանդակ աշխարհի վրայ : Մութ ու թանձր խաւար մը . . . : Իր կեանքի լուսերը կը մարէին հետզհետէ , երբ յանկարծ ապրելու նոր բաղձանք մը իր կուրծքը ափօսեց .

— «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս
թողուցիր» (Մտթ. Իէ. 46. 47) :

Մահուան ջերմութիւնը կ'այրէր իր ամբող-
ջութիւնը .


— «Ծարաւի եմ», պոռաց Խաչուածը, ու աշ-
խարհ քացախի սփոփանքը միայն հրամցուց իրեն :
Ա՛լ ամեն բան լմնցած է :

— «Հա՛յր, քու ձեռքդ կ'աւանդեմ հոգիս» ,
ըսաւ մեռելի հոնդիւնը :

Ու ալ խօսք մը չլսուեցաւ բնաւ :


«Ո՛վ գերագոյն Նազովրեցի, ո՛վ Աստուածա-
յին Մարդու Որդին . . . դուն տեսար որ քու յաղ-
թական խօսքդ կը թռչի դարերէն անդին, և դուն
ուրիշ փառք չուզեցիր, բայց եթէ դէպ ի քեզ
ամբարձումը ձեռքերուն և նայուածքներուն անոնց,
զորս դուն բժշկեցիր ու մխիթարեցիր . . . : Բայց
քու վերջին աղաղակէդ՝ պահապաններուն ան-
հասկնալի, անոնց վրայ սարսուռ մը անցաւ :
Հռովմէական զինուորները դարձան, և քու հո-
գիէդ այդ դիակին խաղաղած դէմքին վրայ ձրգ-
ուած անօրինակ ճառագայթին առջեւ, քու զար-
մացած դահճներդ մէկ մէկու կը նային, և իրա-
քու կ'ըսեն . Իրա՛ի այս մարդը Աստուծոյ Որդի
էր» (*) :

(*) Մեր գիրքի այս գլխուն մէջ ազուցինք Ed. Schuré-ի չա-
կերտուած այն գեղեցիկ տողերը, որով հեղինակը նկարագրած էր
Յիսուսի վերջին ժամերը :



ԺԱ.

Գ Ե Ր Ե Չ Մ Ա Ն Ի Ն Շ Ո Ւ Ր Չ Ը



ՆՏԱՐԲԵՐ ու ծաղրող ամ-
բոխը ցրուած էր ալ :

Ոստիկաններն ալ վերա-
դարձած էին իրենց տեղերը :

Հոն, խաչին ոտքին տակ
կը մնային միայն քանի մը Գա-
լիլիացի կիներ, որոնց սիրտերը
խորունկ վիշտով մը փորուած

էին (Ղուկ. ԻԳ. 49. Մրկ. ԺԵ. 40. 41. Մտթ. Իէ.
55. 56) :

Վիշտերը ո՛րքան համր ըլլան . ա՛յնքան կը ներգործեն մարդուս :

Երեկոյ եղած էր , ու շարաթի պատրաստութիւնները կը տեսնուէին Երուսաղէմի մէջ :

Հոռովմէական օրէնքի համեմատ խաչուածները ընդհանրապէս դատապարտուած էին թռչուններու և գազաններու որս ըլլալ Գողգոթայի վրայ : Ատոր համար էր որ մարդկային ոսկորներ ցանցընուած էին հոն :

Հրեաները չուզեցին որ դիակները խաչափայտին վրայ գամուած մնան : Ասի մասնաւոր խնամքի գործ մըն էր՝ անլուր ոճրագործութեան մը յաջորդող թեթեւ խիղճի խայթ մը, կամ , շատ շատ, կանոնասէր վարժութեան մը հրահանգութիւնը , քանի որ օրէնքը կը պատուիրէր իրենց « Երբոր մարդ մը մահուան արժանի մեղք մը գործէ և զանիկա մեղքներու համար ծառէ մը կախես, անոր մարմինը ծառին վրայ դիչերը չմնայ , հաղա նոյն օրը անպատճառ թաղես զանիկա , վասն զի կախուածը Աստուծոյ անիծածն է , ու չպղծես ան երկիրը » (Բ. օր. ԻԱ. 22—23) :

Պէտք էր , ուրեմն , ի գործ դնել օրէնքը Աստուծոյ անիծածներուն վրայ , քանի որ դեռ չէր սկսած շարաթը :

Յիսուսի գաղտնի բարեկամներն են որ կը պատրաստեն թաղումը (Մտթ. ԻԷ. 57—60. Մրկ. ԺԵ. 42—46. Ղուկ. ԻԳ. 50—54. Յովհ. ԺԹ. 38—42) :

Դատապարտուածներուն թաղումը պէտք էր անլուք կատարուէր : Երբէք տաք արցունք մը չպլտի թրջէր անոնց դէմքը : Պիտի զրկուէին նոյն իսկ իրենց ընտանեկան դամբարաններէն :

Այս է եղած տիեզերքի ընդհանուր օրէնքը : Յիսուսի համար գերեզման մը փոխ տրուեցաւ :

Գողգոթային մօտիկ , Արեմաթացիին պարտէզին մէջ փորուած էր այն , ընական ժայռի մը ծոցը , ուր մինչեւ այն ատեն մէկը չէր դրուած (Յովհ. ԺԹ. 41) : Քարէ մսուրի մը մէջ խանձարուրուող մանուկը , պէտք է որ քարէ գերեզման մը ունենար իրեն համար : Երկու մեծ անձնաւորութիւններ խնամքը ունեցան խոճկերով և հալուէի անուշահոտութիւնով զմոսելու պատանքուած մարմինը իրր թէ յաւիտենապէս հանգեցընելու համար զանի այդ քարափոր անկողնին մէջ :

Սիրտի և հոգիի բարեկամները կը համախմբուին հոն , ուր ալ աշխարհի շահերը կը դադրին : Այդպէս ըրած էին Արեմաթացին Յովսէփ ու Նիկողիմոս , այդպէս ըրած էին նաև Գալիլացի կիները . . . :

Գեռ արեւը մարը մտած չէր , երբ քարէ խոչոր կափարիչով մը փակեցին Յիսուսի գերեզմանը :

* * *

Յիսուսի բարեկամներուն խնամքը , սակայն , բաւական չէր պատմելու համար ապագային՝ իրողութիւններու ճշգրտութիւնը : Ու հոս , գերեզմանին վրայ , դահիճներն ու բարեկամները ձեռք ձեռքի տուին :

Նախախնամութիւնը իր գործը կը տնօրինէ , նոյն իսկ չարերը ընտրելով աշխարհի մէջ կատարուելիք մեծ պատահարը քարոզելու համար :

Քահանաները՝ դեռ երէկ , կենդանի Յիսուսէն կը վախնային . այսօր , դատապարտուածներու

օրէնքով թաղուած անոր դիակէն կը դողան : —
Խիղճի ձայն մը կայ , որ չմարիւր երբէք , եթէ իսկ
առեւրեւոյթ յաղթանակներ զմեզ գինովցնեն :

— « Տէ՛ր , կ'ըսեն Պիղատոսի , կը յիշենք որ
ան մոլորեցուցիչը իր կենդանութեան ատեն կ'ըսէր ,
թէ երեք օրէն վերջ յարութիւն կ'առնեմ : Ուստի
հրաման ըրէ , որ մինչեւ երրորդ օրը գերեզմանին
զգուշութիւն ընեն , չըլլայ թէ իր աշակերտները
գիշերով դան զանիկա գողնան , և ժողովուրդին
ըսեն թէ մեռելներէն յարութիւն առաւ , ու ետքի
մոլորութիւնը առաջինէն գէշ ըլլայ » :

Պիղատոսի համար կարեւորութիւն չունէր
մոլորութիւնը , մանաւանդ երբ խնդիրը «արդարին»
չուրջ կը դառնար : Սաղուկեցիներու ուրաղող
իմաստասիրութիւնով ամեն մարդ վարակուած էր
այն ատեն :

Պիղատոս , որ նոյն իսկ Յիսուսի դատապար-
տութենէն հրաժարած էր անոր կենդանութեանը ,
չուզեց գործօն դեր մը ստանձնել անոր գերեզ-
մանին շուրջ .

— « Դուք պահապան զինուորներ ունիք ,
ըսաւ անոնց , գացէ՛ք զգուշութիւն ըրէք , ինչ-
պէս որ գիտէք » (Մտթ. Իէ. 63 - 65) :

Քահանաները խորհեցան պահ մը . . . :

Տեսակ մը տխուր նախազգացութիւններ ան-
հանգիստ կ'ընէին իրենց սիրտերը : Գերեզմանին
պահպանութեան գործէն իշխանութեան հրաժա-
րումը , մեծ խոչընդոտ մը կրնար ըլլալ իրենց
ծրագիրներուն :

Այս անգամ մինակ մնացած էին իրենք :

Պալատէն դէպ ի գերեզմանատուն գացին :

Ապագայ դարերու սուր քննադատութիւննե-
րուն հանդէպ Յիսուսի յարութեան վարդապե-
տութիւնը պէտք պիտի ունենար վկայութիւննե-
րու : Քահանաները պահապաններ դրին հոն , և
Սանէտրիոնի կնիքովը կնքեցին գերեզմանին կա-
փարիչը (Մտթ. Իէ. 66) որպէսզի . . . իրենք ալ օր
մը՝ անհաւատ Թովմասին հետ , վկաները ըլլան
Յիսուսի Յարութեան :

Պէտք էր որ հանդիսաւորապէս անգամ մըն
ալ ճշմարտէր սա իրողութիւնը , թէ մարդիկ
ո՛րքան խոյս տան ճշմարտութենէ , ա՛յնքան աւելի
դատապարտուած պիտի ըլլան անոր վկաները
ըլլալու :

Դժուար է խթանին դէմ աքացել (Գործք. Թ. 5) :

* * *

Ընդհանրապէս կ'ըսուի թէ « մեծ մարդու մը
պատմութիւնը կանգ կ'առնու անոր գերեզմանին
մէջ . . . : Իր յիշատակին հետ , իր աշակերտները
իր վարդապետութիւնները , ուսուցումները , և իր
գործերը կը մնան » :

Յիսուսի համար չէր կրնար այդպէս ըլլալ :

Հովիւը զարնուած էր , ու ոչխարները ցըր-
ուած էին : Գեթսեմանիի մատնութիւնը խոր լու-
թեան մը , և թերեւս մոռացութեան մատնած էր
վարդապետը , իր աւետարանը , երկինքի թագա-
ւորութիւնը : Յոյսի ո եւ է ճառագայթ չէր լու-
սաւորեք աշակերտներուններքինը : Անոնցմէ ոմանք
արդէն իրենց գործերուն վերադարձած էին :

Վերադարձ մը ձկնորսի կեանքին . . . անյոյս
ու խաբուած մարդու վերադարձ . . . :

Արտասուն կիներն ալ իրենց կողմէն կը խորհէին միմիայն բարեպաշտիկ յարգանքի մը վրայ, Անոր գերեզմանին մատուցանելու համար: Մագդաղինացի մանաւանդ, երազուն ի՛ր Սիրուն մէջ, արցունքէն ու հառաչանքներէն յոգնած, վայրկեանէ վայրկեան կը սպասէր՝ արթուն քունով մը, շարաթի վախճանին, երթալ վերջին անգամ մըն ալ դիտելու անշունչ մարմինը, հրեշտակային դէմքը Յիսուսին, և իր խունկերը ու իր սիրոյ բուրմունքը սփռելու անոր շուրջ:

Միաշարաթը լուսնալու վրայ էր:

Ամբողջ քաղաքը կը խորդար այն խաղաղութեան մէջ, զոր Զատիկը պարգեւած էր իրենց, երբ աշխարհի անձանօթ ուժ մը, կնքուած գերեզմանը կը բանար . . . :

Փայլակի տեսլերեւոյթով ու ձիւնի պէս ճեղք մակ հանդերձներով հրեշտակը տակն ու վրայ բրած էր մարդկային բոլոր հնարամիտ հաշուեգիտութիւնները, բոլոր զգուշութիւնները, այնպէս որ պահապանները անոր վախէն խռոված, ու « մեռածի պէս եղած էին »: Հազիւ ուշաբերած, ու ահա անոնք խոյս կուտային դէպ ի քաղաք, իրենց տեսածները քահանաներուն պատմելու համար:

Նոր ու վերջին փորձ մը ճշմարտութիւնը խեղդելու (Մտթ. ԻԸ. 12—15):

Բայց ի զո՛ւր . . . :

Մագդաղինացիին, իր վիշտին ու խորտակուած սիրուն չափազանցութիւններուն մատնուած, մութն ու լուսուն կը ձեղքէր տիրող մշուշը, որուն վրայ գեռ ոսկի ճառագայթ մը չէր նետուած արեւէն:

Յոյսը չէր, որ զինքն ու միւս կիները կ'ա-

ռաջնորդէր դէպ ի Յիսուսի գերեզմանը. պատրաստուած մեռելոյթի մը, և վերջին լացի մը պէտքն էր որ զիրենք դէպ ի առաջ կը մղէր:

Իրենց միտքը այդ գաղափարով միայն գրաւուած, քալած էին Երուսաղէմի փողոցներէն, առանց մէկէ մը տեսնուելու: Գերեզմանին մօտաւորութիւնը պահ մը խռովցուց զիրենք, Իրաբուերես կը նայէին յուսահատ: Եւ այդ նայուածքը հարցում մըն էր ահաւոր.

— « Քարը ո՞վ պիտի թաւալէ գերեզմանին դռնէն » (Մրկ. ԺԶ. 5):

Շուարումը երկար չտեւեց. քայլ մըն ալ առաջ և ահա տեսան թէ « քարը գերեզմանէն մէկդի զլտորցուած էր » (Ղուկ. ԻԳ. 3):

Տեսարանը քստմնցուց զիրենք:

Բացուած էր գերեզմանը . . . :

Ո՞վ վերցուցած էր զանի . . . : Մեռելի գուլթեան մը սրբապղծութիւնը յանկարծ ցցուեցաւ իրենց միտքին առջեւ, որովհետեւ դեռ իրենցմէ մէկը չէր հաւատար թէ Անիկա մեռելներէն յարութիւն կ'առնէ (Յովն. Ի. 9): Մինչ միւս կիները գերեզմանը կ'իջնէին մօտէն ստուգելու անոր պարագութիւնը, Մագդաղինացի, իր վիշտէն քարացած, հերարձակ ու արտասուն, կը պտտէր պարտէզին մէջ: Իր տառապանքին ծանրութեան տուկալու ուժը կը պակսէր իրեն: Վերջին մխիթարութեան մը զլացումը խեղայեղած էր զինքը: Իր երազուն և արցունքէն նուաղած աչքերը մութը կը փորէին, և կը փորէին պարտէզին ընդերքը, երեւան բերելու համար գողցուած մարմինը Յիսուսին, իր միակ մխիթարութիւնը:

Այս վշտակիր թափառումին մէջն էր Մարիամ, երբ երկու մարդիկ «լուսափայլ հանդերձներով» զիրենք արթնցողցին իրենց վիշտի թմբութենէն :

— «Ինչո՞ւ համար ՈՂՋԸ մեռելներուն հետ կը փնտռէք... հոս չէ Ան... Յարեաւ (Ղուկ. ԻՊ. 5-7)» :

Կիները դէպ ի քաղաք վազեցին այս աւետիսը պատմելու աշակերտներուն, բայց այս վերջիններուն հաւատքը ա՛յնքան խախտած, և իրենց յոյսը ա՛յնքան ցնդած էր, որ կիներուն խօսքը «անոնց ցնորական երեւցաւ, և չէին հաւատար անոնց» :

Բայց ամեն նոր երեւոյթ իր հետաքրքիրները կ'ունենայ :

Աշակերտներէն ոմանք այդ հետաքրքրութեանէն մղուած դէպ ի գերեզմանը վազեցին (Յովհ. Ի. 3-8) :

Տխմար հետաքրքրութիւն... որ չկրնար իրերուն խորը թափանցել : Միայն Մագդաղինացի կը յամաւէր գամուած մնալ հոն, այդ թափուր գերեզմանին շուրջ : Իր միտքը բիւր երազներու գիրկընդրաց ընդունելութիւն էր ըրած :

Մէրը ստեղծիչ զօրութիւն մըն է, բարեպաշտ կիներու ներսը :

Իր հառաչանքներուն, իր լացի, կսկծանքի կոծերուն մէջէն Մագդաղինացի տեսաւ երկու հրեշտակները, որոնք Յիսուսի պարապ գերեզմանին շուրջը կը հսկէին :

Ապարդիւն կարեկցութեան, չոր մխիթարութեան ձայն մը թուեցաւ իրեն անոնց հարցումը .

— «Կնի՛կ, ինչո՞ւ կուլաս...» :

Մարիամ գերազրգուած էր ի՛ր վիշտէն, ի՛ր սէրէն, ի՛ր երազանքէն :

— «Որովհետեւ իմ Տէրս գերեզմանէն վերցուցին, և չեմ գիտեր ո՞ւր դրին զանիկա» :

Երկուքէն իրական մխիթարութեան մը նշոյլը չէր ծախթեր : Իր փնտռող աչքը դէպ ի ետին դարձուց :

Մէկը տեսաւ հոն... :

Իր պաղատագին նայուածքը սպրդեցուց անո՛ր ալ վրայ... :

Մի՛ դուցէ անիկա եղած ըլլար իր տիրոջ մարմինին գողը :

— «Կնի՛կ, ինչո՞ւ կ'ուլաս, ո՞վ կը փնտռես :

— «Տէ՛ր, եթէ դուն վերցուցիր զանիկա, ըսէ՛ ինձի, ո՞ւր դրիր զանի, որ ես աննեմ...» :

Մարիամ տարորոշուած էր ստուերին հետ. մո՛ւթ իր ներսը, վիշտի մութ, մո՛ւթ դուրսը, պարտէզին մէջ, ընտելեան ու գիշերի մութ... :

Եւ իր հառաչանքը կ'արձագանգէր թափուր գերեզմանէն... :

— Մարիամ... :

Այդ անունին տիրական հնչումը սարսուացուց զինքը, իր գիտակցութեան մէջ խոր զարթնում մը, սթափումի գերագոյն վայելքը մաղուեցաւ իր վրան... :

Իր Տիրոջ ձայնն էր... :

— Ռա՛բբունի... :

Եւ ուրախութենէն արբշիւ վազեց դէպի իր Տէրը, իր վարդապետը, անոր ոտքերուն փարեւու. բայց Յիսուս ետ կը մղէր զինքը :

Ի՞նչ փոյթ իրեն այդ յետամուռը :

Հիմա կը վայելէր զԱնի : Իր աչքերը Անոր մարմինին մէջ սուզուած էին : Եւ անկէ սփռուող

բոյրը զինքն արբուցած էր այն հեշտանքով, զոր մարդ կրնայ վայելել բաց գերեզմանի մը, և մեռած սիրականի մը Յարութեան պատահարէն:

— «Ինձի մի՛ դպիր Մարիամ, այլ գնա եղբայրներուս, և ըսէ անոնց. Ես իմ Հօրս և ձեր Հօրը քով, իմ Աստուծոյս և ձեր Աստուծոյն քով կ'ելլեմ» (Յովհ. Ի. 17):

Մինչ անդին հրեշտակները կ'երգէին Յիսուսի յարութիւնը և հոն գտնուողներուն կ'ըսէին.

— «Եկէ՛ք, տեսէ՛ք ան տեղը, ուր որ Տէրը պառկած էր» (Մտթ. ԻԼ. 6):

Դարերը կրկնեցին շարունակ այդ ձայնը:

Եկէ՛ք, տեսէ՛ք ան տեղը, կեանքի, Մխիթարութեան, Յոյսի, Յարութեան տեղը. խափանուած մահին, վերակենդանացած բաղձանքներուն, մարդկութեան զարթնումին տեղը:

Եկէ՛ք, տեսէ՛ք, ան տեղը, ուր «անձայն կատարուեցաւ պատմութեան մեծագոյն իրողութիւնը, և ուր մեծագոյն յաղթանակը աւարտեցաւ առանց թեթեւ ճիգի մը»:

Գրիստոս Յարեաւ ի Մեռելոց . . .

Մարդկութիւնը այս ձայնին մէջ գտաւ իր Սփոփանքը, իր Երկինքը:

* * *

Յիսուս քառասուն օրեր իրեններուն հետ անցուց իր Ժամանակը, Աւետարանի քանի մը օրուան խորտակուած թելերը նորոգելու: Եւ իրենները սրտասլուզեց առաքելական պաշտօնին համար.

— «Ամեն իշխանութիւն ձեզի տրուեցաւ, երկինքի ու երկրի մէջ: Ուրեմն, գացէ՛ք, բոլոր

ազգերը աշակերտեցէք. մկրտեցէք զանոնք յԱնուն Հօր և Որդւոյ և Հօգւոյն Սրբոյ: Սովրեցուցէք անոնց, որ պահեն ամեն ինչ որ ես ձեզի պատուիրեցի, և ահա ամեն օր ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը»:

* * *

Հաստատուած էր Եկեղեցին:

Հոգին պիտի նուիրագործէր զԱնի (Գործ. ք. Բ.):

Բայց Եկեղեցին Տասներկուքներուն ձեռք հրէական հերձուած մը միայն պիտի ըլլար թերեւս (Գործ. ք. ԺԵ. 1—29): Յիսուս այդ Եկեղեցիին համար Սօղոսէն Պողոս մը ծնցուց Դամասկոսի՝ ճամբուն վրայ (Գործ. ք. Թ. 3—25):

«Ընտիր անօթ», որուն մէջ Աւետարանը «Տիեզերական կրօնքը» եղաւ:



ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

«Վասն զի քէ որ բեճամի եղամ
ասեմնիս Աստուծոյ հետ հաւ-
տուեցանք իր Որդւոյն մտնովը,
որչափ աւելի մեր հաւատամ
տեսնը պիտի ապրինք Ա.Ն.ՈՐ
կեանքովը»:

ՀՈՌՈՎՄ. Ե. 10

«Ինչու որ ինձի համար՝ ապ-
րիլը Գրիսոս է, ու մեռնիլը
օգոս»:

ՓԻԼԻՊՊ. Ա. 21



ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ



ԱՐՑ (E. Caro) իր «Ժամանակակից քննադատութեան մէջ Աստուծոյ գաղափարը» անուն գիրքին սուղին գլուխը սա տողերով կը սկսի .

«Մեզ պաշարող հակասական գաղափարներու ժխտին մէջ, մեզմէ իւրաքանչիւրին համար բարոյական առողջապահութեան գերազանց կանոն մըն է ժամանակ ժամանակ վե-

րահասու ըլլալ իր սեփական հաւատալիքներու վիճակին, ամփոփել դրութիւններու և գիրքերու ընդ մէջ թափառկող, կեանքի յուզումներէն կամ հետաքրքրութենէն ցրուուած գիտակցութիւնը : Աղէկ է հաստատել թէ հիմնական խնդիրներու մասին մեր տեսնելու եղանակը միեւնոյնը մնա-

ցած է , կամ թէ անի անզգայօրէն փոխուած է ,
ինչ ազդեցութիւններու տակ և մինչեւ ո՛ւր » :

Այս անձնաքննութիւնը հաւատքին ալ մասը
կը կազմէ : Հաւատքի մեծ ներկայացուցիչներէն
մին, Ս. Պօղոս, միեւնոյնը կը հրամայէ իր կորնթոսի
եկեղեցիին . «Փորձեցէք Ձեր անձերը , թէ հա-
ւատքին մէջն էք , քննեցէք ձեր անձերը . չէ՞ք
զիտեր ինքզինքնիդ , թէ Յիսուս Քրիստոս ձեր
մէջն է , միայն՝ թէ որ խոտելի չըլլաք » (Բ.
Կորնթ. ԺԳ. 5) :

Մեր Կրուագները աստուածաշնչական բա-
նաստեղծութիւններու փունջ մը ձեւացնելով հան-
դերձ , իր հետ կը բերէ նաեւ զիտակցութեան մը
վերաքննութեան վաւերանիշք , ճիշդ ա՛յն կերպով,
որ՝ Կարօի վարդապետութեամբ , անհրձեղտ է
մարդուս իր բարոյական և կրօնական կեանքին
անվթար պահպանումին համար :

Յիսուսի , մեր երկնաւոր Տիրոջ Յարութիւնը
վերջ տուաւ մեր Կրուագներուն : Անով միայն
քրիստոնէական մարդկութիւնը կեանք առաւ :

Կեանքի հարցը ամենէն կնճոտը եղած է աշ-
խարհի մէջ , Կարծիքներու ահա որ կոյտ մը դիզ-
ուած է անոր շուրջ :

Բնաբանն ու քիմիագէտը կեանքը տեսան
նիւթի մասնիկներուն մէկ խորհրդաւոր համադրու-
թեանը մէջ :

Ոմանք «ձեւի և ուժի արտայայտութիւն մըն
է» ըսին անոր համար :

Մովսէսի օրէնքը կեանքը սահմանեց Աստու-
ծոյ Սիրոյն և անոր հնազանդութեանը վրայ հիմ-
նուելով (Բ. Օր Լ. 20) :

Իմաստունն ու Յոր , ստուերի անցք մը միայն
տեսան կեանքին մէջ (Իմաստ. Բ. 5. Յոր. Ը. 9) :

Սաղմոսերգուն Աստուծոյ մէջ միայն տեսաւ
կեանքը (Սաղմ. ԻԶ. 1) :

Եւ Յոր իր կեանքը հովի մը նմանցուց (Է. 7) :

Առաքեալը , Սաղմոսերգուն և Մարգարէն
խոտին հետ բաղդատեցին մեր կեանքին օրերը
(Ս. Պետր. Ա. 24. Սղմ. ՃԲ. 15. Եսայի Խ. 6 - 8) :

Կեանքը մշտնջենական կօխ մըն է ըսին շա-
տեր , և ուրիշներ «անհաւասար ելեւէջ մը միայն» :

«Կեանքը ո՛չ կանոնաւոր պատերազմ մըն է ,
ո՛չ ճակատամարտ մը իր ձեւերուն մէջ , այլ ան-
կանոն գործողութիւն մը» ըսաւ Բաթօ :

Իսկ Յիսուս «Ես եմ կեանքը » ըսաւ մեզի
(Յովհ. ԺԳ. 6) :

Այսպէս կեանքի հարցը համոզումներու բազ-
մերանգութենէն իր վրայ հրաւիրեց կարգ մը սահ-
մանումներ , որոնք հաւասարապէս զիրար չեզո-
քացուցին , կամ աւելի ճիշդը զիրար ամբողջա-
ցուցին տարբեր բացատրութիւններով :

Ինչ որ ալ ըլլան , սակայն , կեանքի բացա-
արութեան կերպերը , սա ստոյգ է , որ հակառակ
Կիւեօի ըսածին , թէ «Տիեզերքին մէջ չկայ բա-
ւական տառապանք , որ արժեյնէ արցունքը , և
ո՛չ ալ բաւական ուրախութիւն՝ ժպիտ մը բացատ-
րելու համար» , աշխարհի ընկերական ճակատա-
գրուած անհաւասարութիւններուն մէջ կեանքը
հաւասար տառապանքի ճիշ մը եղաւ , յուսահատ
բողոք մը մեծ Տիեզերքին մէջ : Որովհետեւ հոն
տառապանքներ կան որոնք կրօնքի չափ խոր են ու
խորհրդաւոր : Հարուստն ու աղքատը , երջանիկն

ու ապերջանիկը ինկա՛ն, ինկա՛ն շարունակ շաշունի տերեւներուն պէս, և գերեզմանը եղաւ միշտ Առակախօսին ամուլը, որ չգիտեր բնաւ կշտանալ (Առակ. Ը. 15. 16) : Մարդիկ կեանքի բոլոր վայրկեաններուն մէջ նիհար երազատեսներ եղան, մանուկ Յովսէփին նման, որ անզգալաբար կեանքի անջրպետը կը լուսաւորէր, իր արիւնոտ ծաղկեայ շապիկը օր մը Փարաւոնական ծիրանիի փոխելու համար (Ծննդ. Լէ. 5—11. 18—34. ԽՍ. 40—45) :

Ժողովուրդը, որ իր տողերուն մէջ նկարեց կեանքին ցաւն ու հառաչանքը, մոոցաւ կեանքին մշտնջենականութիւնը, և յուսահատներու նուազկոտ արցունքով մարեցաւ. «Ինչու որ հիմա եղած բաներուն ամենը ապագայ ժամանակի մէջ պիտի մոոցուի» և իմաստունը անմիտին պէս պիտի մեռնի (Բ. 16) :

Բնութեան մէջ մոռացում չկայ բնաւ. մեր ամենէն մանր շարժումները, կեանքի մանր ճրտտունները շատ հաւատարմութեամբ կը պահէ անի իր ծոցին մէջ : Չկայ խօսք, չկայ գործ, որ իր արձագանգը չունենայ յաւիտենականութեան ծոցը, կ'ըսէ առածը :

Մեր կեանքերը չեն մոոցուիր բնաւ :

Ճնճղուկներն անգամ մոոցուած չեն Աստուծոյ առջեւ, ու մեր մագերն ալ համրուած են (Մտթ. Ժ. 29. 30. Ղուկ. ԺԲ. 6. 7) :

Այս հաւատքն էր որ մարդուս արժանիքը բարձրացուց :

Կեանքերու յաւիտենականութիւնը, սակայն, արդեւք պիտի չըլլայ անոնց տառապանքին : Եւ կեանքը պէտք պիտի զգայ շարունակ այդ տաղ-

տապումներուն, ցաւազար ճգնաժամերէ, յուսահատ մաքառումներէ վերջ իր խաղաղ յաւիտենականութիւնը գտնելու համար : Անհո՛ւն ճամբորդութիւն . . . որուն մէջ աշխարհը, յաւիտենական անցորդներուն այդ հակայ նաւը, դարեր, ամբողջ դարեր պիտի ծփայ, տառապանքի հովերէն, ցաւերու փոթորիկներէն, ու տիեզերական կայաններու վրայ հոս ու հոն ցրուած, պիտի նետէ մարդկային կեանքեր, յաւիտենական աշխարհին չափ մշտաբեղուն, երկինքի լուսաւորներուն չափ անհամար : «Որո՞ւնն է վայր, որո՞ւնն է ո՛հը, որո՞ւնն են կռիւները, որո՞ւնն են տրտունջները, որո՞ւնն են առանց պատճառի վէրքերը, որո՞ւնն է աչքի կարմրութիւնը» (Առակ. ԻԳ. 28) : Ոչ ոք զիտէ . . . : Բայց ասոնց ամենքն ալ կան մեր աշխարհին մէջ, իբր անհրաժեշտ, իրական հետեւութիւնը կեանքին :

Յաւիտենական Ոգին, իր բարձրութենէն պիտի զիտէ հովին դէմ մազուած մեր կեանքերը՝ որոնք դէպի իրենց երկնային հայրենիքը ճամբորդած ատեն ալեկոծութեան բռնուեր էին : Ու հակառակ ալեկոծութիւններուն, պիտի ճամբորդենք, ստիպուած ենք ճամբորդելու շարունակ, որովհետեւ «մեր քաղաքացիութիւնը երկինքն է», երկինքն է մեր հայրենիքը (Փիլիպ. Գ. 20) : Խաղաղ յաւիտենականութեան կրկնեւելոյթը ամեն դի. մեր սիրտերուն, մեր հոգիներուն, մեր ջիղերուն, և մեր արիւնի գնափկներուն մէջ : Կը վազենք ձեռք ձգելու զանի, բայց կեանքը, նիւթին յոգնած ու մաշած կեանքը երազէն կ'արթննայ շուտով : Պատրանք չորսդին . . . :

Կեանքի երազը կը շարունակուի անընդհատ , միշտ խորտակուած , ու միշտ նորոգուած երկրի վրայ , այն մշտնջենի բանդագուշանքին պէս , այն դանդաչող ստուերին նման , որ որբանին ու գերեզմանին մէջ կը սահմանափակուի կարծես :

Երկու ճակատագրական սահմաններ կը պարուրեն մեզի , կ'ըսէ յուսահատ մարդը . երկու խաւարչուտ նաւահանգիստներու վրայ կը ձեռուինք շարունակ . Կարիպտոսի և Սկիլլայի միջեւ կը տարուբերուինք , և «Կեանքի ճրագը կը վառի մէկէն մտած ատեննիս , ու կը մարի միւսէն ելած ժամանակնիս» : Այս կեանքի թափառկոտութենէն զզուած մարդն էր , որ ըսաւ . «Նս արեւին տակը քաշած բոլոր աշխատութիւններէս զզուեցայ , որովհետեւ ինձմէ ետքը գալիք մարդուն պիտի թողում զանիկա» (Փողով . Բ. 18) : Կեանքի այդ խորհրդաւոր հոգեփոխութենէն զզուած մարդը զգաց թէ իր մարմինը ծւիկ ծւիկ եղած կտոր մըն էր , գունաւոր դերձաններու կծիկ մը , ու ինք դատապարտուած էր կեանքի մաշուած օղակները հիւսել վայրկեանէ վայրկեան , տարբեր թել մը առնելով իր ձեռք : Խաւարը շատցուց մեր կեանքի կծիկին սեւ թելերը , որոնք կեանքի գուլպային վրայ մեր վիշտի ու դժբախտութեան ժամերը նիշեցին : Երազը , սակայն , հոգիին այդ անդրադարձիկ տեսողութիւնը եթէ չըլլար , մարդիկ իրենց փրփուրներու կեանքը պիտի խորտակէին այն գինովներուն պէս , որոնք օղիին պարապ դաւաթը կը խորտակեն իրենց ակռաններուն տակ , քանի որ իմաստունը կեանքի բոլոր կողմերը , բոլոր գոյները քննելէ և բոլոր բոյրերը ծծելէ վերջ

«ուսայնութիւն և հոգիի տանջանք» միայն կը տեսնէ , կեանքի «արծաթէ թելերուն» և «ոսկի բաժակին» մէջ : Բայց կեանքի մէջ ուրախութիւններ ալ կան , որոնք երկինք կը բուրնն : Պէտք է մոռնալ զանոնք :

Կեանքի յուետեւ վայրկեաններուն , մարմինն կեանքը կ'արթննայ իր բոլոր չափազանցութիւններով , որոնք աղտոտ հետքեր կը թողուն մեր ճամբուն վրայ : Մարմինի այդ չափազանցութիւնները կը գերազրդուին , ու մարդ ի զուրինքը կը փնտռէ իր իրական զգացումներուն , իր իրական հաճոյքներուն և իր սեփական խորհուրդներուն մէջ , որոնք շարունակ խոյս պիտի տան իրմէ : Եւ աշխարհ շարունակ հայելի պիտի փոխէ իրեն հանդէպ , յաւիտենական կրկններու յոյսերով շփոթուած : Չափազանցուած մարմինը իր գոյացումը փնտռեց հաճոյքներու գոնացումին մէջ . ի՞նչ փոյթ իրեն թէ Առակախօսը կ'ըսէր . «Թէ որ մեղր գտնես , քեզի բաւական եղածին չափ կեր , չըլլայ որ անով կշտանաս , ու զանիկա փսխես» (ԻԳ. 16) : Հաճոյքներու յվիացումէն և վիշտերու գելումներէն յափրացած կեանքը իր երկինքը կորսնցուցած հիւլէ մը կամ անասնացած հրեշտակ մը եղաւ , կիրքերու և նեղութիւններու ալիքներէն տարուբերուած :

Ո՞ր ամբարիշտ սիրտն է , սակայն , որ կը ծաղրէ կեանքի օթեւաններուն մէջ , աղքատին լացը , որ լոյծ ադամանդի մը պէս կը պոսթիկայ , կամ ո՞ր պիղծ հոգին է , որ կեանքի տեսարանին ծիծաղները կը ժողվէ իր ծոցը , իրբեւ անհատնում գանձեր : Ասոնց ամենքն ալ պիտի լուծուին օր մը ,

Կեանքի Արեւէն, երկինքին երեսը պատող կնճռոտ մշուշներուն պէս : Ուրկէ վերջ միայն պիտի ապրի մարդը , բնական աշխարհիս վրայ խարսխած մարդը , «որուն կատարը Աստուածային տիեզերքին» , անտես երկինքին կը մօտիկնայ :

Մեղքին տիրապետութիւնը , մոլութիւններու տակ ինկած անձնիշխանութիւնը , Աստուծոյ և հոգիին հանդէպ անհաւատ զգացումը «երկու ոչընչութիւններու մէջ ձգուած ճառագայթ մը» կը շինեն կեանքը , անամնականութեան ճակատագրին մօտիկցած աստղերի ծիրեր (—կայծոռիկ) , որոնք կը մարին տերեւներուն ետին պահուըտած ատեննին : Եւ չարին կեանքը ու բարիին կեանքը ելեւէջներ պիտի ձեւացնեն աստիճան առ աստիճան , Յաւիտենականութեան կեանքը հիւսելու , և հիւսելու կեանքը իր անկայուն բախտախաղի շահուն կամ վնասին համար :

«Իմաստութիւնն է կեանքը» , կ'ըսէ Իմաստունը , որուն համար ամբարտաւան աչքերը , ստախոս լեզուն , մարդասպան ձեռքը , չարախորհուրդ սիրտը , չարութեան վազող ոտքերը , անիրաւ վկան և կոռուսէր մարդը հոգիին վէրքերն են (Չ. 16. 19) : Մարդուն հոգին , սակայն , իր հիւանդութեանը կը համբերէ . բայց ո՞վ կրնայ մխիթարել վիրաւորուած հոգին (Ս.ուակ. ԺԸ. 14) :

— Միայն դուն , ո՞վ Յիսուս , միայն դուն կրնաս մխիթարել վիրաւորուած հոգիները , դուն որ տիեզերական կեանքերու անհաւասարութեան մէջ հաւասարն ես դուն : Բու վայրէջքդ ու քու վերելքդ միեւնոյն Անհունին մէջ կը շարժին : Դուն Յակոբի հրեշտակներուն պէս սանդուխի մասնե-

բու պէտք չունիս բնաւ : Բու ծաղկեայ շապիկդ կեանքի Միրանին կը շողացնէ հաշտարար ծիածանի ծածանուտ գոյներէն : Եւ քու տառապանքդ լուսաւորներն են , որոնք կը լուսազարդեն երկինքը , քու բնակարանդ , մեր կեանքերուն խաղաղ Յաւիտենականութիւնը : Միայն քու տառապանքդ է նուիրականը , որ կեանք կուտայ մեզի , և քու սէրդ է միայն , քու ինքնամոռաց և փրկաբաշխ սէրդ , վարդի անկողիններէ աւելի հոտաւէտ սէրդ , որ բոլոր գիրքերու բանաստեղծութիւնէն աւելի կենդանի բանաստեղծութիւն մըն է , քու սէրդ միայն պիտի պահպանէ մեր ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ :



ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
14	16	կ'ատրաշէկին	կ'ատրաշէկին
18	30	կը շողային	կը շողային
19	20	կենսատու	կենսադաւ
24	22-23	հօտը, հօտին	հօտը, հօտին
25	2-3	բարեմտուծիւնը՝	բարեմտուծիւնը կը դա- ւածանէ՝
27	26	կը բաղուի	կը բաւուի
31	4	Ամնոն-Ուսի	Ամնոն-Ռաի
31	19	Վեծուծեան	Վիուծեան
38	24-25	պաշարներ	պալարներ
39	17	անփոյծ	անբոյծ
49	13	Ռաֆայիմները	Ռէֆայիմները
61	19	ուրուականներով	ուրականներով
62	22	Ուրի մը	Ուրիմը
67	4	կը յաղծանակէ	կը յաղծանակէ.
89	18	Թափորի	Թափորի
111	16	ամբոխը	ամբոխը
128	21	այդ	այդ
135	22	լաստը	լաստը,
140	11	տարտամ	տարտամ՝
147	11	և	և՝
147	12	հիմնուած	հիմնուած՝
148	31	Սոկրատի	Սոկրատի
173	24	;	,
183	8	նայուածքը	նայուածքը
197	11	Պողոս	Պօղոս



Զօճ
Զեկոյց

Ա. ԳԻՐՔ


	Էջ
Ա. Պիղծ պաշտամունքը	13
Բ. Երկիրքի կրակը	17
Գ. Օրհնութեան զոյղը	23
Դ. Մովսէս մարգարէ կ'ըլլայ.	29
Ե. Պատիժները	35
Զ. Անցքէն առաջ ու ետքը	41
Է. Ոսկի հորթը	47
Ը. Առաջին իշխանը	53
Թ. Հալածանք	59
Ժ. Պատշգամներու բուն	65
ԺԱ. Եղիա և Յեզարէլ	73
ԺԲ. Դէպ ի Բաբելոն	81


Բ. ԳԻՐՔ

Ա. Ծնունդը	93
Բ. Նազովրեցին.	101
Գ. Յորդանանու եզերքը	109
Դ. Փորձութիւններ	115
Ե. Քարոզիչը	121
Զ. Ծովուն վրայ.	131
Է. Լերան վրայ	139
Ը. Երեք սեղաններ.	147
Թ. Գեթսեմանի	163
Ժ. Դասն ու վճիռը.	171
ԺԱ. Գերեզմանին շուրջը	187

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Իրական կեանքը	201
-------------------------	-----





4
8/1m

«Ազգային գրադարան»



NL0025749

0025749

3
8/1m

«Ազգային գրադարան»



NL0025748

0025748

2
8/1m

«Ազգային գրադարան»



NL0025747

0025747

1
8/1m

«Ազգային գրադարան»



NL0025746

0025746

